ՃՆՆԴԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

ԾՆՆԴԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՓՐԻՆԹԻՆՖՈ 2011

ՀՏԴ 373.2
ԳՄԴ 74.1
Ծ 681

«Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների» մշակումը և տպագրությունն իրականացվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) ֆինանսական աջակցությամբ:

Չափորոշիչները հաստատված են ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից:

Ծ 681 Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ / ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) – Եր.: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ: Փրինթինֆո, 2011. – 184 էջ:

ՀՏԴ 373.2
ԳՄԴ 74.1

ISBN 978-9939-831-19-0

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), 2011

Երախտիքի խոսք 8

Չափորոշիչները մշակող աշխատանքային խումբ 9

Ներածություն 10

0 - 1 տարեկան 13

Շարժողական ոլորտ 14

Խոսքի և հաղորդակցման ոլորտ 17

Իմացական ոլորտ 20

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ 24

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ 28

1 - 2 տարեկան 31

Շարժողական ոլորտ 32

Խոսքի և հաղորդակցման ոլորտ 36

Իմացական ոլորտ 39

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ 43

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ 47

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ 50

Բովանդակություն

2 - 3 տարեկան 55

Շարժողական ոլորտ 56

Խոսքի և հաղորդակցման ոլորտ 60

Իմացական ոլորտ 63

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ 68

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ 73

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ 76

3- 4 տարեկան 79

Շարժողական ոլորտ 80

Խոսքի և հաղորդակցման ոլորտ 84

Իմացական ոլորտ 88

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ 94

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ 101

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ 105

4 - 5 տարեկան 109

Շարժողական ոլորտ 110

Խոսքի և հաղորդակցման ոլորտ 114

Իմացական ոլորտ 119

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ 127

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ 135

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ 139

5 - 6 տարեկան 143

Շարժողական ոլորտ 144

Խոսքի և հաղորդակցման ոլորտ 148

Իմացական ոլորտ 155

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ 163

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ 174

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ 177

Աշխատանքային խումբն իր երախտագիտությունն է հայտնում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի խորհրդատու, Կոլումբիայի համալսարանի մանկավարժական քոլեջի պրոֆեսոր, դոկտոր Ծերոն Լինն Կագանին, վաղ մանկության զարգացման և դպրոցի նախապատրաստվածության հիմնախնդիրների վերաբերյալ շարունակական խորհրդատվություն և նյութեր տրամադրելու համար:

Աշխատանքային խումբը շնորհակալություն է հայտնում նաև չափորոշիչների բովանդակային և տարիքային վալիդացիային մասնակցած Կրթության և գիտության նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի, Հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկի, «Արաբկիր» բժշկական համալիրի երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի առողջապահական կենտրոնի մասնագետներին, ինչպես նաև 11 մարզերի ընդհանուր թվով 30 մանկապարտեզների տնօրեններին և դաստիարակներին, ովքեր աջակցել են ծրագրին, փորձարկել են չափորոշիչները և իրենց դիտարկումներն ու առաջարկությունները ներկայացրել չափորոշիչները մշակող աշխատանքային խմբին:

Երախտիքի խոսք

Ռոբերտ Ստեփանյան	ՀՀ ԿԳՆ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ
Ռուզաննա Ծառուկյան	«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն
Մարինե Մկրտչյան	«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի վերապատրաստումների փորձագետ
Աշխեն Գյուրջյան	«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի վերապատրաստումների փորձագետ
Մարինե Պետրոսյան	«Գոյատևում» ՀԿ, հոգեբան
Արմեն Բեջանյան	«Առողջության և կրթության հայկական կենտրոն» ՀԿ, հոգեբանական ծառայության բաժնի ղեկավար
Կոնստանդին Տեր-Ոսկանյան	Առողջապահության ազգային ինստիտուտի մանկաբուժության ամբիոնի վարիչ, Նորք-Մարաշ հիվանդանոցի բժիշկ
Մանուշակ Երիցյան	«ԱրԲԵՍ» Առողջության կենտրոնի տնօրեն
Իրինա Թովմասյան	«ԱրԲԵՍ» Առողջության կենտրոնի Զարգացման մանկաբուժական ծառայությունների ղեկավար
Գայանե Զաքարյան	«ԱրԲԵՍ» Առողջության կենտրոնի վերականգնողական ծառայության ղեկավար

Ցուցիչներ մշակող աշխատանքային խումբ

Ներածություն

Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները[1] ընդհանուր առմամբ նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ պետք է կարողանա անել երեխան որոշակի տարիքում: Դրանք զարգացման տարբեր ոլորտներում մինչև 6 տարեկան երեխաների վերաբերյալ մեր ունեցած ակնկալիքներն են՝ պայմանավորված տարիքային բնականոն զարգացման օրինաչափություններով և ազգային-մշակութային առանձնահատկություններով: Այս չափորոշիչները սահմանված են, որպեսզի ինչպես ընտանիքները, այնպես էլ երեխայի խնամքի և կրթական հաստատությունները արդյունավետորեն կազմակերպեն և իրականացնեն երեխայի դաստիարակությունը, զարգացումն ու կրթությունը՝ սկսած ծննդից մինչև դպրոց գնալու տարիքը:

Վաղ մանկությունը երեխայի աճի, զարգացման և սովորելու բացառիկ ժամանակաշրջանն է: Կարևոր է նկատի ունենալ, որ որոշ երեխաներ կարող են չափորոշիչներով սահմանված ակնկալիքներից շատ ավելի բարձր ցուցանիշներ ունենալ, մինչդեռ որոշ երեխաներ էլ հնարավոր է, որ ամբողջապես չտիրապետեն այս փաստաթղթում նշված գիտելիքներին և հմտություններին: Այս իմաստով շատ կարևոր է, որ երեխաների տվյալ տարիքին համապատասխան զարգացման և ուսումնառության հետ կապված ակնկալիքների մասին մտածելիս մենք ուշադրություն դարձնենք նաև նրանց անհատական առանձնահատկություններին: Երեխաները տարբեր են լինում՝ կախված իրենց բնածին հատկություններից, ունեցած փորձից, ունակություններից, առողջական վիճակից և սովորելու նկատմամբ ունեցած վերաբերմունքից, հետևաբար նրանց զարգացումը տարբեր տեմպերով է ընթանում: Պետք է ընդունել, որ երեխաների միջև այսպիսի տարբերությունները բնական են: Բոլոր երեխաների նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել հարգանք և նրանց վերաբերվել որպես ունակ անհատների, որոնք կարող են սովորել, հասկանալ իրենց շրջապատող աշխարհը, ընտրություն կատարել և արտահայտել իրենց սեփական կարծիքը:

Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական կարողությունները: Հետևաբար ուսումնառության բոլոր ոլորտները կարևոր են առողջ զարգացման համար և պետք է հավասարապես արժևորվեն: Մեծահասակներն ընդհանուր առմամբ մեծ դեր և ազդեցություն ունեն երեխաների աճի և զարգացման վրա, իսկ ծնողները միանշանակորեն իրենց երեխաների առաջին և ամենակարևոր դաստիարակներն են: Դաստիարակները և ընտանիքները պետք է տարբեր խաղերի միջոցով խթանեն երեխայի համակողմանի զարգացումը, գիտելիքներ հաղորդեն նրան շրջապատող աշխարհի մասին և աջակցեն, որ երեխայի մոտ զարգանան ամբողջ կյանքի ընթացքում սովորելու ցանկությունն ու հմտությունները: Մեծահասակները պետք է իմանան, որ երեխայի զարգացումը տեղի է ունենում հաջորդական փուլերով և կախված է նրա ունեցած փորձառությունից, ընտանեկան մշակույթից և անհատականությունից:

Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչները մշակվել են՝ առաջնորդվելով երեխայի զարգացման վերաբերյալ կառուցողական սկզբունքներով: Ըստ այդ սկզբունքների՝ երեխաները լավ են զարգանում այն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք պաշտպանված են զգում, արժևորվում են որպես անհատներ և ակտիվորեն ներգրավվում են նոր հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված բազմաբնույթ աշխատանքներում:

Երեխաները ակտիվ սովորողներ են, և նրանք ուզում են հասկանալ այն աշխարհը, որտեղ ապրում են: Նրանք իրենց գիտելիքները և արժեքները կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծահասակների հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով: Երեխայի առողջ, ներդաշնակ և համակողմանի զարգացման համար անհրաժեշտ է աշխատանքներ տանել նրա ֆիզիկական, իմացական, հուզական և սոցիալական ոլորտների հավասարաչափ զարգացման ուղղությամբ:

Չափորոշիչները դասակարգված են ըստ զարգացման հետևյալ ոլորտների.

1. շարժողական զարգացում,
2. ինքնասպասարկում և անվտանգություն,
3. հուզական, անձնային և սոցիալական զարգացում,
4. սովորելու նկատմամբ վերաբերմունք,
5. իմացական զարգացում,
6. խոսք և լեզու:

1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ (30 մարտի 2011 թվականի N 257-Ն):

Չափորոշիչների սույն փաստաթուղթն ունի հետևյալ կառուցվածքը.

- ***ոլորտները*** ուսումնառության/զարգացման ուղղություններն են.
- ***ենթաոլորտները*** տվյալ ոլորտի բաղկացուցիչ մասերն են.
- ***չափորոշիչները*** սահմանում են տվյալ ենթաոլորտում երեխայից ակնկալվող վարքագիծը ընդհանուր առմամբ.
- ***ցուցիչները*** նշում են, թե երեխան ինչ գիտի և ինչ է անում, կամ ինչպիսի դիտարկելի վարքագիծ է դրսևորում.
- ***օրինակները*** պարզաբանում են յուրաքանչյուր ցուցիչի իմաստը:

Վաղ մանկության զարգացման և կրթական չափորոշիչները հասցեագրված են ծնողներին, ուսումնական հաստատություններին, ուսումնական ծրագրերի և տարբեր ձեռնարկների հեղինակներին, ուսումնախաղային նյութեր պատրաստող հաստատություններին: Չափորոշիչներն այն ուղենիշներն են, որոնք մեծահասակները կարող են օգտագործել տարբեր ոլորտներում երեխաների զարգացմանը նպաստելու համար:

Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչները կարող են տարբեր կիրառություններ ունենալ: Մասնավորապես՝

- ***բարելավել ուսուցումը.*** հիմք հանդիսանալ մինչև 6 տարեկան երեխաների ուսումնական ծրագրերը բարելավելու համար.
- ***բարելավել ծնողավարության հմտությունները և վարքը.*** օգնել ծնողներին իրատեսական ակնկալիքներ ունենալու մինչև 6 տարեկան երեխաներից, ինչպես նաև երեխայի տարիքին համապատասխան տարբեր խաղեր կազմակերպելու նրանց համար.
- ***բարելավել մանկավարժների մասնագիտական պատրաստվածությունը.*** ուղենիշ լինել դաստիարակների վերապատրաստման ծրագրերի մշակման համար.
- ***գնահատել նախադպրոցական ծրագրերի արդյունավետությունը.*** հիմք հանդիսանալ ընտրելու կամ մշակելու համար երեխաների առաջընթացի գնահատման միջոցներ՝ որպես ծրագրի արդյունավետության ամբողջական գնահատման մաս.
- ***բարձրացնել հանրության գիտակցությունը վաղ մանկության շրջանի կարևորության վերաբերյալ.*** օգնել հասարակությանը ավելի լավ հասկանալ և արժևորել վաղ մանկության տարիքը, ինչպես նաև իրենց ավանդն ունենալ մինչև 6 տարեկան երեխաներին որակյալ ծառայություններով ապահովելու հարցում:

Վաղ մանկության զարգացման խնդիրներով զբաղվող մասնագետները կարող են այս չափորոշիչներն օգտագործել տարբեր նպատակներով.

- սահմանելու զարգացման նպատակները, որոնց երեխաները պետք է հասնեն ծննդից մինչև 6 տարեկան հասակը,
- բարելավելու ուսումնական միջավայրը,
- ապահովելու ուսումնառության շարունակական գործընթացը:

Չափորոշիչները դաստիարակների/մանկավարժների համար ստեղծում են այն հիմքը, որի վրա նրանք կարող են պլանավորել ուսուցումը: Սույն փաստաթուղթը, իհարկե, ուսումնական ծրագիր չէ, սակայն այն ներկայացնում է այն ոլորտները, որոնց վրա մանկավարժները պետք է հիմնվեն երեխաների ուսուցումը պլանավորելիս: Չափորոշիչները կարող են լինել նաև գործիք/միջոց այն ծնողների համար, որոնք հաճախ անհանգստանում են, թե արդյոք իրենց երեխաները «ճի՞շտ» գիտելիքներ և հմտություններ են ստանում՝ հետագայում դպրոց գնալու համար: Չափորոշիչների օգնությամբ ծնողները կտեսնեն, որ առօրյա գործողությունների միջոցով երեխաներին կարելի է սովորեցնել այն, ինչ նրանք պետք է իմանան հետագայում դպրոցում հաջողության հասնելու համար:

Միևնույն ժամանակ կարևոր է ընդգծել, որ չափորոշիչները նախատեսված չեն՝

- որոշելու, թե արդյոք երեխան «պատրա՞ստ է» մանկապարտեզ կամ դպրոց գնալու, թե՞ ոչ,
- մի երեխային մյուսի հետ համեմատելու,
- երեխայի զարգացման մակարդակը գնահատելու,
- որպես ուսումնական ծրագիր օգտագործելու համար (թեև դաստիարակները կարող են այս նյութերն օգտագործել ուսումնական պարապմունքներ պլանավորելու համար):

Հուսով ենք, որ այս փաստաթուղթը կնպաստի մեր երեխաների համար նախատեսված ծառայությունների որակի բարձրացմանը, երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, ինչն իր հերթին կօգնի, որ հետագայում երեխաները դպրոցում հաճույքով սովորեն:



0 - 1 տարեկան

Շարժողական ոլորտ

Խոսքի և հաղորդակցման ոլորտ

Իմացական ոլորտ

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ

0-1 տարեկան մանուկների շարժողական դաստիարակություն

Խոշոր շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան սկսում է դրսևորել խոշոր շարժողական տարրական հմտություններ:	1.1 Մնում է նստած դիրքում առանց օգնության:	1.1.1. Նստած է մնում ուղիղ, գլուխը բարձր դիրքով (առաջ չի թեքվում), առնվազն 10 վայրկյան տևողությամբ պահպանում է հավասարակշռությունը՝ առանց օգնության, չհենվելով նախաբազուկներին և ձեռքերին:
	1.2. Մեկ դիրքից տեղաշարժվելով այլ դիրք է ընդունում:	1.2.1. Փորի վրա կարողանում է առաջ կամ հետ շարժվել, որից հետո կարողանում է նստել:
		1.2.2. Նստած դիրքում ազատ շարժումներ է անում իր առանցքի շուրջը:
	1.3. Չոչ է անում:	1.3.1. Որովայնը հատակից բարձր պահելով տեղաշարժվում է չորեքթաթ և այդպես կատարում է առնվազն 3 «քայլ»:
	1.4. Կանգնում է օգնությամբ (բռնելով ինչ-որ բանից):	1.4.1. Կահույքից բռնելով բարձրանում է, կանգնում և առանց մարմնով հենվելու մնում է ուղղահայաց դիրքում կանգնած:
	1.5. Քայլում է օգնությամբ:	1.5.1. Մեկ կամ երկու ձեռքով բռնելով կահույքից՝ քայլում է դեպի կողք կամ առաջ (մեկ ոտքը շարժվում է առաջ, իսկ մյուսն իր վրա է կրում մարմնի քաշի որոշ մասը): Այս ձևով երեխան կատարում է առնվազն 5 քայլ:
		1.5.2. Քայլում է մի ձեռքից բռնած, ավելի ուշ՝ ինքնուրույն, առանց օգնության քայլելու փորձեր է անում:
	1.6. Նստած դիրքում կատարում է շարժողական գործողության տարրեր:	1.6.1. Նստած դիրքում հրում է երկու ձեռքերով բռնած փոքր գնդակը կամ թողնում է, որ այն վայր ընկնի:

Նուրբ (մանր) շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան սկսում է ցուցաբերել ձեռքի և մատների շարժումների կառավարման հմտություններ:	2.1. Մատներով վերցնում է առարկան:	2.1.1. Երկու մատների ծայրերով (բութ և ցուցամատ) վերցնում է մանր առարկաներ:
	2.2. Երկու ձեռքերն օգտագործում է առարկան բռնած պահելու համար:	2.2.1. Յուրաքանչյուր ձեռքում միաժամանակ պահում է մեկական առարկա/խաղալիք:
		2.2.2. Երկու առարկաներ մոտեցնում և խփում է իրար (միացնում է):
		2.2.3. Երկու ձեռքերով պահում է իր շիշը, բաժակը:
	2.3. Ինքնուրույն տեղաշարժում է առարկան:	2.3.1. Նպատակաուղղված բաց է թողնում կամ նետում է առարկան:
		2.3.2. Թելով կապված առարկան մոտեցնելու համար քաշում է թելից:
		2.3.3. Բացում է դարակը և հանում պարունակությունը:
	2.4. Մեկ առարկան տեղավորում է մյուսի մեջ:	2.4.1. Փոքր իրերը գցում է բաժակի մեջ:
		2.4.2. Խաղալիքը հանում է տուփից ու նորից հետ է դնում:

0-1 տարեկան մանուկ դպրոցական հասակում գտնվող երեխայի

Բանավոր խոսք		
Խոսքի ընկալում և օգտագործում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան արձագանքում է իրեն ուղղված խոսքին:	1.1. Թեքվում է խոսողի կողմը:	1.1.1. Երբ որևէ մեկը ձայն է տալիս, գլուխը շրջում է ձայն տվողի կողմը:
	1.2. Ցույց է տալիս ծանոթ մարդկանց, երբ հարցնում են:	1.2.1. Ի պատասխան «ու՞ր է մայրիկը» հարցին, մեկնում է ձեռքը/երը դեպի մայրիկը:
	1.3. Ցույց է տալիս ծանոթ առարկաները, երբ հարցնում են:	1.3.1. Ի պատասխան «ու՞ր է ծաղիկը» հարցին, մեկնում է ձեռքը/երը դեպի ծաղիկը:
	1.4. Կատարում է պարզ գործողություններ, երբ առաջարկում են:	1.4.1. Երբ մայրն ասում է «Արի ծափիկ անենք», ձեռքերը զարկում է իրար:
		1.4.2. Երբ մայրն ասում է «Ցույց տուր արջուկը», խաղալիքների միջից գտնում և ցույց է տալիս արջուկը:
		1.4.3. Երբ մայրն ասում է «Փակիր այս տուփը», երեխան փակում է տուփը:
2. Երեխան անում է խոսելու առաջին փորձերը:	2.1. «Բառերով» արտահայտում է հաճույք կամ դժգոհություն:	2.1.1. Երբ մայրը բերում է ջուրը, երեխան ուրախանում և ասում է՝ «բուվա» (կամ որևէ այլ բառ):
	2.2. Բառերը համակցում է շարժումների հետ:	2.2.1. Երբ դուրս է գնում, թափահարում է ձեռքը և ասում՝«ցե»:
	2.3. Ընդօրինակում է պարզ վանկերը:	2.3.1. Կա-կա, տա-տա և այլն:
	2.4.Օգտագործում է 8-10 ճանաչելի «բառեր»:	2.4.1. Մամա, պապա, տատա, դադա, պապի, տուն, կուկա, ավտո:

Հաղորդակցում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան տարբերակում է ծանոթ և անծանոթ մարդկանց:	3.1. Ծանոթ մարդկանց տեսնելիս ուրախանում է:	3.1.1. Երբ հայրը տուն է գալիս, պարզում է ձեռքերը և ժպտում է:
		3.1.2. Մտերիմ հարևանին տեսնելիս սկսում է ձայներ արձակել:
	3.2. Անծանոթ մարդկանց տեսնելիս, դրսևորում է պասիվ/զգուշավոր վարք:	3.2.1. Երեխան չի ժպտում, երբ խանութի վաճառողը փորձում է խաղալ իր հետ:
		3.2.2. Երեխան կախում է գլուխը, երբ փողոցում խոսեցնում են իրեն:
4. Երեխան արձագանքում է խոսակցին:	4.1. «Պատասխանում է», երբ խոսում են իր հետ:	4.1.1. Ի պատասխան «ու՞ր է քթիկդ» հարցին, բռնում է քիթը և ասում՝ «թիթի» կամ նման մի բան:
	4.2. Համապատասխան վարք է դրսևորում, երբ փաղաքշական արտահայտություններ են ասում կամ սաստում են:	4.2.1. Երբ մայրիկն ասում է «ի՛մ անուշիկ, ի՛մ սիրունիկ» կամ նմանատիպ այլ բառեր, երեխան ժպտում է (ուրախությունից թափահարում է ձեռքերը):
		4.2.2. Երբ մայրն ասում է «Չհանես կոշիկդ, կբարկանամ», երեխան դադարում է կոշիկը քաշել:

0-1 տարեկան երեխայի տրամաբանություն

Մտածողություն և տրամաբանություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հետազոտում և համեմատում է առարկաները:	1.1. Ճանաչում է աշխարհը աչքերի, բերանի, ձեռքերի միջոցով:	1.1.1. Երեխան ձեռքը վերցրած խաղալիքը/իրը տանում է բերանը:
		1.1.2. Երեխան ձեռքերով տարբեր գործողություններ է կատարում առարկաների հետ (խփում է, թափահարում է, գցում է):
	1.2. Փնտրում է տեսադաշտից անհետացած առարկան:	1.2.1. Երբ հեռացնում են խաղալիքը, երեխան հայացքը տարբեր կողմեր է ուղղում:
	1.3. Կենցաղային իրերն օգտագործում է ըստ նշանակության:	1.3.1. Գդալը վերցնում և բերանին է մոտեցնում:
		1.3.2. Վերցնում է սանրը և քսում է գլխին:
	1.4. Հետազոտում է շրջապատող առարկաները՝ դրանց հետ տարբեր գործողություններ կատարելով:	1.4.1 Երեխան նետում է խաղալիքը, թափահարում, հարվածում այլ խաղալիքի՝ հետևելով, թե ինչ է տեղի ունենում խաղալիքի հետ, ինչ ձայն է հանում, ինչպես է փոխվում:
	1.5. Կրկնօրինակում է պարզ գործողություններ:	1.5.1. Երեխան ծափ է տալիս՝ կրկնօրինակելով մեծահասակին:
2. Երեխան հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառա-հետևանքային կապերը:	2.1. Երկարացնում է իրեն հետաքրքրող տպավորությունները:	2.1.1. Խփում է չխկչխկան խաղալիքին՝ ձայնը անընդհատ լսելու համար:
	2.3. Մի քանի անգամ կրկնում է միևնույն գործողությունը՝ իր ուզածին հասնելու համար:	2.3.1. Պարբերաբար փորձում է բացել տուփի կափարիչը, եթե առաջին անգամ չի ստացվում:
	2.4. Գտնում է կապը առարկայի և երևույթների միջև:	2.4.1. Երբ տեսնում է գիշերազգեստը, սկսում է քաշելով հանել գուլպաները:

Ուշադրություն, հիշողություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան դրսևորում է ուշադրության կենտրոնացում և պահպանում:	3.1. Հայացքը 3-5 րոպե պահում է ձայն հանող առարկայի վրա:	3.1.1. Երբ խաղալիս անընդհատ չխկչխկացնում են ձայն հանող խաղալիքը, երեխան ուշադիր նայում է խաղալիքին:
	3.2. Լսում է երգ կամ փոքրիկ հեքիաթ (դեռևս չհասկանալով դրա բովանդակությունը):	3.2.2. Երեխան ուշադիր լսում է, երբ մայրը նրա համար երգում կամ քառյակ է ասում:
4. Երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա:	4.1. Ճանաչում է ծանոթ դեմքեր, առարկաներ:	4.1.1. Երբ երեկոյան տեսնում է հորը, ժպտում և ձգվում է դեպի նա:
		4.1.2. Փնտրում և գտնում է ծանոթ առարկան, եթե նախապես տեսել է, թե որտեղ են այն դրել:

Երևակայություն և ստեղծագործական մտածողություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան դրսևորում է երևակայության պարզագույն տարրեր:	5.1. Կատարում է գործողություններ տարբեր առարկաների/նյութերի հետ:	5.1.1. Մատներով սեղմելով՝ խաղում է խմորի հետ:
		5.1.2. Փորձում է ճմռթել, պատռել թղթի կտորը:
	5.2. Կրկնօրինակում է մեծահասակների շարժումները:	5.2.2. Երեխան երաժշտության տակ թափահարում է ձեռքերը՝ նմանեցնելով պարային շարժումների:

Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան կողմնորոշվում է տարածության մեջ:	6.1. Տան մեջ տեղաշարժվում է որոշակի նպատակով:	6.1.1. Երեխան մոտենում է դռանը՝ հասկացնելով, որ ցանկանում է դուրս գնալ:
	6.2. Իրեն ծանոթ միջավայրում գիտի որոշ առարկաների տեղը:	6.2.1. Երեխան կոնֆետը փնտրում է այն տեղում, որտեղ մայրիկը սովորաբար դնում է այն:

Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան ունի տեղեկացվածություն/ գիտելիքներ իր և իր ընտանիքի մասին:	7.1. Ճանաչում է մոր և այլ մտերիմ մեծահասակների դեմքերը:	7.1.1. Երբ հարցնում են, թե որտեղ է մայրիկը, հայացքով կամ ձեռքով ցույց է տալիս:
8. Երեխան ճանաչում և կատարում է մանկական ստեղծագործություններ:	8.1. Մեծահասակների ասելուց հետո երեխան կրկնում է մեկ կամ երկու բառ որևէ բանաստեղծությունից կամ երգից:	8.1.1 «Ծիվ – ծիվ», «Արև-արև մոտ եկ»:
	8.2. Ակտիվ արձագանքում է, երբ լսում է ծանոթ մանկական երգ:	8.2.2. Հեռուստատեսությամբ իրեն ծանոթ երգը լսելիս ժպտում է, թափահարում ձեռքերը:

0-1 տարեկան

Սոցիալական, հուզական և անշնչային զարգացում

Սոցիալական զարգացում		
Փոխհարաբերություններ շրջապատի հետ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան սկսում է շփվել ծանոթ մեծահասակների, հասակակիցների հետ և հաստատում է վստահության վրա հիմնված հարաբերություններ:	1.1. Աշխուժանում է ծնողներին և ծանոթ մեծահասակներին տեսնելիս (ժպիտ, ակտիվ շարժումներ և ձայներ):	1.1.1. Երբ տատը ներս է մտնում, երեխան ծիծաղելով չոչ է անում նրան դիմավորելու:
	1.2. Ցուցաբերում է ամաչկոտություն կամ տագնապ (վախ) անծանոթ մեծահասակների ներկայությամբ:	1.2.1.Երբ անծանոթ մեծահասակը փորձում շփվել երեխայի հետ, թկկթկում, լաց է լինում:
	1.3. Ցուցաբերում է անհանգստություն (տագնապ) ծանոթ մեծահասակից բաժանվելիս:	1.3.1. Լալիս է, երբ մայրիկը կամ հայրիկը գնում են:
	1.4. Հանգիստ և ապահով է զգում, երբ մտերիմ մեծա-հասակը իր տեսադաշտում է:	1.4.1. Աշխույժ խաղում է, երբ հարազատները կամ տան անդամները իր կողքին են:
	1.5. Մեծահասակներին ներգրավում է իր փոխգործուն խաղերի (շփումների) մեջ:	1.5.1. Մեկնում է խաղալիքը մեծահասակին, որ նա լարի այն:
	1.6. Ներգրավվում է փոխգործուն շփումների կամ խաղերի մեջ:	1.6.1. Խաղում է «խնոցի-հարոցի», «ծիվ-ծիվ» խաղերը:
	1.7. Օգտագործում է շարժումները և դիմախաղը հաղորդակցվելու համար:	1.7.1. Ձեռքով դիպչում է/հրում է ուշադրություն գրավելու համար:
		1.7.2. Ձեռքերը պարզում է, որ գրկեն:
		1.7.3. Ձեռքը թափահարելով հրաժեշտ է տալիս:
	1.8. Նկատում և արձագանքում է ուրիշ երեխաներին:	1.8.1. Զբոսանքի ժամանակ հանդիպելով երեխայի՝ մեկնում է ձեռքը կամ քայլում դեպի նա:

Սոցիալական վարք

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան զարգացնում է ինքնակառավարման հմտություններ:	2.1. Ինքն իրեն զբաղեցնում է կամ հետաքրքրություններ է գտնում:	2.1.1. Ճանաչում է իր խաղալիքները և ինքնուրույն խաղում նրանցով:
	2.2. Հարմարվում է օրվա կրկնվող գործողություններին:	2.2.1. Կեսօրին՝ զբոսանքից վերադառնալուց հետո, մեծի օգնությամբ պառկում է քնելու:
	2.3. Հաճախակի փոխում է գործողությունները / զբաղմունքը:	2.3.1. Արջուկով խաղալուց հետո վերցնում է գնդակը:
3. Երեխան սկսում է դրսևորել ինքնուրույնություն:	3.1. Փորձում է կատարել ինքնուրույն գործողություններ՝ ուտել, քայլել, վերցնել ինչ-որ բան (չնայած դեռ օգնության կարիք ունի):	3.1.1. Մեկնում է ոտքը կամ ձեռքը, երբ իրեն հագցնում են:
		3.1.2. Փորձում է իր ձեռքով (մատներով) ուտել:

Անձնային զարգացում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան սկսում է ցուցաբերել իմացություն սեփական անձի և ուրիշների մասին:	4.1. Երբ տալիս են իր անունը, արձագանքում է շարժումով կամ ձայնով:	4.1.1. Շրջվում է կամ հրճվում, երբ լսում է իր անունը:
	4.2. Ուսումնասիրում է իր մարմինը:	4.2.1. Բռնում է իր ոտքերի թաթերը, ուսումնասիրում իր ձեռքերը:
	4.3. Ուսումնասիրում է ուրիշների դեմքերը, մարմնի մասերը:	4.3.1. Դիպչում է խնամողի մազերին, շոշափում ձեռքը:
	4.4. Երբ խնդրում են, ցույց է տալիս իր մարմնի առնվազն 2 մասը:	4.4.1. Մատնացույց է անում իր բերանը, երբ հարցնում են «Ո՞ր է Տիգրանիկի բերանը»:

Հուզական զարգացում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան սկսում է արտահայտել և ճանաչել հիմնական հույզերը:	5.1. Անծանոթ միջավայրում դրսևորում է վախ կամ զգուշանում է:	5.1.1. Հյուրընկալվելիս անծանոթ միջավայրում նստում է մոր գրկում կամ բռնում է նրա ձեռքը:
		5.1.2. Եթե մոր գրկում չէ, ապա ապահովության կամ անվտանգ զգալու համար հաճախ նայում է նրա կողմը:
	5.2. Արտահայտում է իր զգացմունքները ձայներով կամ շարժումներով:	5.2.1. Երբ զայրանում է, բարձր գոռում է կամ լալիս:
		5.2.2. Սիրած կերակրատեսակը ստանալու դեպքում աշխուժանում է (ծիծաղում է, ժպտում, ծափ տալիս):
	5.3. Արձագանքում է ուրիշների հույզերին:	5.3.1. Սկսում է լաց լինել, երբ լսում է, որ ուրիշ մի երեխա լալիս է:
	5.4. Երեխան հուզականորեն արձագանքում է երաժշտական գործիքներով, մարդկային ձայնով կատարված երաժշտությանը:	5.4.1. Կատարում է աշխույժ շարժումներ կամ արձակում է ձայներ երաժշտություն լսելիս:

0-1 տարեկան

Ինքնատյա-տարկման, առողջության պահպանման և անվտանգության դրդում

Ինքնասպասարկում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան սկսում է դրսևորել ինքնասպասարկման տարրական հմտություններ:	1.1. Ձեռքը մեկնում է տեսադաշտում հայտնված առարկային:	1.1.1. Խփում է ձայն հանող կախված խաղալիքին:
	1.2. Փնտրում է տեսադաշտից անհետացած առարկան:	1.2.1. Քաշում է (բարձրացնում է) ծածկոցը՝ խաղալիքը գտնելու համար:
	1.3. Ուշադրությունը կենտրոնացնում է մոտ գտնվող առարկային:	1.3.1. Կերակրելիս բռնում է մոր կուրծքը/շիշը:
	1.4. Փորձում է ինքնուրույն ուտել:	1.4.1. Բռնում և ուտում է թխվածքաբլիթը:
	1.5. Օգտվում է սպասքի որոշ տեսակներից մեծահասակի օգնությամբ:	1.5.1. Խմում է բաժակից:
		1.5.2. Վերցնում է գդալը՝ բռնելով պոչից:
	1.6. Հանում է իր հեշտ հանվող հագուստը:	1.6.1. Ձգելով քաշում, հանում է գլխարկը, կիսագուլպաները, ձեռնոցները:

Առողջության պահպանում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան արձագանքում է հիգիենիկ միջոցառումներին և խնամք պահանջող իրավիճակներին:	2.1. Դրականորեն է արձագանքում է լողանալուն:	2.1.1. Լողանալիս ժպտում է, թափահարում ոտքերն ու ձեռքերը:
	2.2. Անհանգստություն է ցուցաբերում, եթե խանգարող հանգամանք կա:	2.2.1. Լալիս, թնկթնկում է, երբ քաղցած է:
		2.2.2. Մեկնում է ձեռքը կամ մատնացույց է անում հագուստը, եթե թրջվել է:

1 - 2 տարեկան

Շարժողական ոլորտ

Խոսքի և հաղորդակցման ոլորտ

Իմացական ոլորտ

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ

1-2 տարեկան
Շարժողական դրդում

Խոշոր շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան դրսևորում է խոշոր շարժողական հմտություններ:	1.1. Կանգնում է ինքնուրույն՝ առանց օգնության:	1.1.1. Կանգնում է ուղղահայաց դիրքով՝ հավասարապես հենվելով երկու ոտքերի վրա և առանց արտաքին օգնության (չի հպվում որևէ մեկին կամ առարկայի) կանգնած մնում է առնվազն 10 վայրկյան:
		1.1.2. Կռանալով հատակից վերցնում է հետաքրքրող առարկան և առանց ընկնելու ուղղվում է:
		1.1.3. Ուղղահայաց դիրքում պահպանում է հավասարակշռությունը, երբ զննում է ձեռքում պահած առարկան կամ դրանով գործողություն է կատարում:
	1.2. Քայլում է ինքնուրույն:	1.2.1. Ուղղահայաց դիրքով, մեջքն ուղիղ պահած և ոտքերը լայն բացած, առանց որևէ անձի կամ առարկայի հպվելու կատարում է առնվազն 5 քայլ դեպի առաջ՝ միաժամանակ վեր բարձրացրած վերին վերջույթներով պահպանելով հավասարակշռությունը:
		1.2.2. Կարողանում է ետ-ետ քայլել:
	1.3. Ինքնուրույն նստում է:	1.3.1. Ինքնուրույն նստում է փոքր աթոռին:
	1.4. Կատարում է վազելու փորձեր:	1.4.1. Վազում է, սակայն խոչընդոտները շրջանցել չի կարողանում և դիպչում է դրանց (աթոռ, փոշեկուլ և այլն):
		1.4.2. Վազում է հաճախ վայր ընկնելով:
	1.5. Օգնությամբ/բռնելով բարձրանում է աստիճաններով:	1.5.1. Չոչ անելով ինքնուրույն վեր է բարձրանում աստիճաններով:
		1.5.2. Մեծահասակի ձեռքից բռնած բարձրանում է աստիճաններով:

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան կատարում է գործողություններ՝ պահպանելով դիրքը և իրականացնելով կոորդինացված շարժումներ:	2.1. Օգնությամբ իջնում է աստիճաններից:	2.1.1. Չոչ անելով ինքնուրույն վեր է բարձրանում աստիճաններով:
	2.2. Կանգնած դիրքում կատարում է տարբեր գործողություններ:	2.2.1. Կանգնած դիրքից նետում է փոքր գնդակը՝ առանց վայր ընկնելու:
		2.2.2. Հրում կամ քաշում է հատակին դրված մեծ առարկաները:
		2.2.3. Ոտքով հարվածում է գնդակին:

Նուրբ (մանր) շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան դրսևորում է վերջույթների, ձեռքի և մատների շարժումների կառավարման հմտություններ:	3.1. Առարկան բռնելիս օգտագործում է ձեռքի ափը:	3.1.1. Ձեռքի ափով բռնում է մատիտը, գդալը:
	3.2. Մեկ ձեռքով բռնում է երկու առարկա:	3.2.1. Մեկ ձեռքով բռնում է երկու փոքր խաղալիքներ:
	3.3. Թերթում է գիրքը:	3.3.1. Գիրքը թերթում է՝ 2-3 էջ միասին շրջելով:
	3.4. Գծում/նկարում է՝ ձեռքը և դաստակը միասին շարժելով:	3.4.1. Խզբզում է մատիտով (արագ ու անփույթ շարժումներով):
		3.4.2. Գծեր է քաշում մատիտով:
		3.4.3. Նկարելիս թուղթը մյուս ձեռքով պահում է:
	3.5. Համապատասխանեցնելով տեղավորում է մեկ առարկան մյուսի մեջ:	3.5.1. Շրջանը, եռանկյունին և քառակուսին տեղավորում է տախտակի վրա եղած համապատասխան փոսիկների մեջ:
	4.6. Կառուցում է պարզ շինություններ՝ ուղղահայաց դիրքով:	4.6.1. Կառուցում է աշտարակ. սկզբում՝ երկու մասից, ապա կարողանում է ավելացնել շարքը՝ հասցնելով 3-4 խորանարդիկներից բաղկացած ուղղահայաց կառույցի:
	5.7. Վերջույթները ճիշտ ուղղությամբ շարժելով՝ օգնում է հագցնել իր շորերը:	5.7.1. Բաճկոնը հագցնելիս ձգում է թևը դեպի հետ:
		5.7.2. Ոտքը բարձրացնում է և ձգում ոտնաթաթը՝ կոշիկները հագցնելու համար:
	6.8. Սեղմում է սեղմակոճակները և պտտում բռնակները:	6.8.1. Ցուցամատով (հիմնականում գերակայող ձեռքի) սեղմում է հեռուստացույցի միացնող-անջատող սեղմակոճակը:
		6.8.2. Ցուցամատով կամ ձեռքով (հիմնականում գերակայող) սեղմում է լույսի անջատիչը:
		6.8.2. Ձեռքով (հիմնականում գերակայող) պտտում է ցածր տեղակայված բռնակները՝ փորձելով բացել պահարանը կամ դարակը:

1-2 տարեկան

Խոսքի և հաղորդակցման զարգացում

Բանավոր խոսք		
Խոսքի ընկալում և օգտագործում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան ընկալում է իրեն ուղղված ուրիշի պարզ խոսքը:	1.1. Արձագանքում է մեծահասակների պարզ, ծանոթ հրահանգներին:	1.1.1. Բերում է խաղալիքը:
	1.2. Պատասխանում է «այո»/«ոչ» պատասխան պահանջող հարցերին:	1.2.1. «Գնա՞նք բակ» հարցին պատասխանում է «հա/այո» կամ «չէ»:
2. Երեխան օգտագործում է երկբառ նախադասություններ:	2.1. Օգտագործում է տեղը և/կամ բացակայությունը ցույց տվող արտահայտություններ:	2.1.1. «Կուկու հեսա», «կակա չկա»:
	2.2. Օգտագործում է ցանկություն արտահայտող բառակապակցություններ:	2.2.1. «ճաշիկ ուտի», «պապա ավտո գնա»:
	2.3. Օգտագործում է ցանկություն արտահայտող բառակապակցություններ:	2.3.1. «Տուր», «բեր», «լավ», «էլի»:
	2.4. Օգտագործում է հարց արտահայտող բառակապակցություններ:	2.4.1. «Ու՞ր ա կակա»:

Խոսքի հնչյունաբանական և քերականական իմացություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան փորձում է ճիշտ արտասանել մայրենի լեզվի հնչյունները:	3.1. Կրկնում է առաջարկված պարզ բառերը՝ նմանեցնելով հնչյունները:	3.1.1. «Ասա ծիտիկ», կրկնում է «տի-տի» կամ «ծի-տի»:
4. Երեխան տիրապետում է քերականական պարզ կանոններին:	4.1. Միտքն արտահայտում է բառերի ճիշտ հաջորդականությամբ:	4.1.1. «Պապա ավտո», ոչ թե «ավտո պապա»:

Հաղորդակցում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան հաղորդակցվում է մեծահասակների և հասակակիցների հետ:	5.1. Պատասխանում է իրեն ուղղված հարցին:	5.1.1. «Այդ ու՞ր ես գնում» հարցին պատասխանում է՝ «բակ» կամ «դուս»:
	5.2. Երբ ինչ-որ բանի կարիք ունի, դիմում է ծանոթ մեծահասակին:	5.2.1. Տատիկին ասում է՝ «ջույ տույ» կամ «ձույիկ»:
	5.3. Ծփվում է հասակակից երեխաների հետ:	5.3.1. Մոտենում է իրեն այցելության եկած քեռորդուն, բռնում է ձեռքը և ասում՝ «այի»:
		5.3.2. Մոտենում է ավազների մեջ խաղացող անծանոթ երեխային, բռնում նրա դույլը և ասում՝ «տու՛ր»:

Գրավոր խոսք

Հետաքրքրություն գրքերի և գրվածքի նկատմամբ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում գունազարդ գրքերի նկատմամբ:	6.1. Անկանոն թերթում է մանկական գիրքը:	6.1.1. «Երեք խոզուկները» հեքիաթի գիրքը թերթում է հետ ու առաջ (թերթում է տարբեր տեղերից, թերթում է մի քանի էջ միանգամից):
	6.2. Հետևում է, երբ մեծահասակը իր համար «կարդում» է պատկերազարդ գիրք:	6.2.1. Երբ պապիկը գիրքը ձեռքին կարդում կամ պատմում է «Երեք արջուկները» հեքիաթը, երեխան մատով ցույց է տալիս փոքրիկ արջուկին:

1-2 տարեկան
Խմբագրական ոլորտ

Մտածողություն և տրամաբանություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հետազոտում և համեմատում է առարկաները:	1.1. Օգտագործում է առարկաներն ըստ իրենց նշանակության:	1.1.1 Խմում է բաժակից:
		1.1.2. Կերակրում է տիկնիկին գդալով:
		1.1.3. Փորձում է երևակայական բանալիով բացել խաղալիք մեքենայի դուռը:
	1.2. Ճանաչում է ծանոթ դեմքերը նկարներում:	1.2.1 Լուսանկարի վրա մատով ցույց է տալիս մայրիկին:
	1.3. Արձագանքում է իր անվանը:	1.3.1. Երբ իր անունն են տալիս, շրջվում է:
	1.4. Ցույց է տալիս մարմնի տարբեր մասերը տիկնիկի վրա:	1.4.1. Երբ հարցնում են, թե որն է տիկնիկի քիթը/բերանը/ոտքը և այլն, ցույց է տալիս:
	1.5. Օգտագործում է առարկաները մտավոր խնդիրներ լուծելու համար:	1.5.1. Երբ խնդրում են ջուր բերել, գտնում է բաժակը և փորձում է լցնել ջրով:
		1.5.2. Կարողանում է աշտարակ կառուցել 8 խորանարդիկներից, համարելով, որ տուն է կառուցել:
2. Երեխան հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառա-հետևանքային կապերը:	2.1. Կրկնում է անցյալում տեսած գործողությունների հաջորդականությունը:	2.1.1. Մայրիկի այն հարցին, թե «Գագիկը ինչպես էր ֆուտբոլ խաղում», երեխան կրկնում է նրա գործողությունները:
	2.2. Գիտի, որ առարկայի/անձի բացակայությունը չի նշանակում, որ այն/նա ընդհանրապես անհետացել է:	2.2.1. Երբ գնդակը գլորվում է մահճակալի տակ, երեխան փորձում է հանել այն:
		2.2.2. Երբ մայրիկը գնում է խոհանոց, երեխան չորեքթաթ կամ քայլելով հետևում է նրան:

Ուշադրություն և հիշողություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա:	3.1. Կրկնում է պարզ նախադասություններ՝ մեծահասակի ասելուց հետո:	3.1.1 «Ծիտիկ-ծիտիկ մոտ արի»:
	3.2. Կրկնում է մեկ կամ երկու շաբաթ առաջ իր կատարած գործողությունները:	3.2.1. Մեծահասակի խնդրանքով կրկնում է պարային շարժումները, որոնք կատարել էր քույրիկի ծննդյան օրը:
	3.3. Լսում է կարճ հեքիաթներ:	3.3.1. Երեխան մինչև վերջ լսում է «Գնդիկ-Բոքոնիկ» հեքիաթը:

Երևակայություն և ստեղծագործական մտածողություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան դրսևորում է երևակայության պարզագույն տարրեր:	4.1. Կատարում է պարզագույն գործողություններ տարբեր առարկաների/նյութերի հետ՝ ինչ-որ բան սարքելու/ստեղծելու միտումով:	4.1.1. Ձեռքի ափով բռնելով մատիտը, անկանոն գծեր է տանում թղթի վրա և ասում. «Տուն եմ նկարում»:
		4.1.2. Երեխան փորձում է պլաստիլինից գնդակ, «սեղան» և այլ իրեր պատրաստել:
	4.2. Առարկան օգտագործում է տարբեր նպատակներով:	4.2.1. Թղթե տոպրակը օգտագործում է որպես գլխարկ:
		4.2.2. Փայտիկն օգտագործում է որպես ձի՝ «հեծնում և քշում է»:
	4.3. Խաղալիս կատարում է նպատակային գործողություններ խաղալիքների հետ:	4.3.1. Տիկնիկին կերակրում է երևակայական սննդով:
		4.3.2. Մեքենայով խաղալիս արտաբերում է մեքենայի շարժիչին բնորոշ աղմուկ (ղըրմ-ղըրմ):
	4.4. Նմանակում է ուրիշների կատարած գործողությունները:	4.4.1. Քայլում է զինվորի նման:
		4.4.2. Նմանակում է կենդանիների ձայները՝ «հաֆ, հաֆ», «բեե»:

Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան կողմնորոշվում է տարածության մեջ:	5.1. Փնտրում է իր տեսադաշտից անհետացած առարկան:	5.1.1. Երբ մայրիկը թաքցնում է գնդակը, փնտրում է այն:
	5.2. Կողմնորոշվում է սենյակների դիրքի և դասավորության մեջ:	5.2.1. Կատարում է «գնա՛ քո սենյակից արջուկը բեր» հրահանգը:
	5.3. Հավաքում է 3 մասից բաղկացած աշտարակը:	

Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան ունի գիտելիքներ (տեղեկացված է) իր և իր ընտանիքի մասին:	6.1. Ցույց է տալիս ընտանիքի անդամներին և ասում նրանց անունները:	6.1.1. Պատասխանում է «Ո՞ւր է քո հայրիկը», «Ի՞նչ է մայրիկիդ անունը» հարցերին:
7. Երեխան ճանաչում և կարողանում է կատարել մանկական ստեղծագործություններ:	7.1. Կատարում է մանկական երգերից բառեր կամ տողեր:	7.1.1. Մեծահասակի օգնությամբ արտասանում է «Ծիտիկ-ծիտիկը»:
	7.2. Ծանոթ մանկական երգի ձայն լսելիս ձայնակցում է:	7.2.1 «Արև-արև, եկ, եկ+»:
8. Երեխան ունի գիտելիքներ շրջապատող աշխարհի մասին:	8.1. Ճանաչում է նկարներում պատկերված մրգերը, կենդանիներին:	8.1.1. Տարբերում է տանձը, բանանը, խնձորը:
		8.1.2. Ըստ հրահանգի, նկարի վրա մատով ցույց է տալիս առնվազն 2 կենդանի՝ կրկնելով դրանց անունները:

1-2 տարեկան

Տոքիոպակետ, խուզակաձև և անշնային դրդում

Սոցիալական զարգացում

Փոխհարաբերություններ շրջապատի հետ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան սկսում է շփվել ծանոթ մեծահասակների և հասակակիցների հետ և հաստատում է վստահության վրա հիմնված հարաբերություններ:	1.1. Փնտրում է ծնողների կամ ծանոթ մեծահասակների աջակցությունը ինչ-որ բան անելիս:	1.1.1. Մայրիկին ասում է. «Դարակը բաց արա՝ գիրքը վերցնեմ»:
		1.1.2. Իր չափերից մեծ առարկա վերցնելիս/տեղափոխելիս կանչում է, որ իրեն օգնեն:
	1.2. Կրկնօրինակում է մեծահասակի առօրյա վարքը:	1.2.1. Ձևացնում է, որ մաքրում է փոշեկուլով (խոսում է հեռախոսով, ճաշ է պատրաստում, պայուսակը վերցնում է, իբր աշխատանքի է գնում):
	1.3. Մասնակցում է պարզ խաղերի կամ շփումների ծանոթ մեծահասակների հետ:	1.3.1. Մեծահասակի առաջարկով բերում է խաղալիքները, որ միասին խաղան:
		1.3.2. Գնդակը նետում է մեծահասակին, ասելով. «Արի՛ խաղանք»:
	1.4. Պատասխանում է մեծահասակի բարևին:	1.4.1. Պատասխանում է մեծահասակի բարևին, ասելով՝ «Բարև»:
		1.4.2. Ժպտում է մեծահասակին, ի պատասխան նրա բարևին:
	1.5. Ծնողի հետ խաղի ընթացքում, նրա աջակցությամբ սպասում է իր հերթին:	1.5.1. Խորանարդիկները շարելիս ասում է. «Դու՛ դիր, հետո ես կդնեմ»:
	1.6. Հաղորդակցվում է մեծահասակի հետ իր կատարած գործողությունների վերաբերյալ:	1.6.1. Բերում է տիկնիկը, որ ցույց տա, թե ինչպես է սանրել տիկնիկի մազերը:
		1.6.2. Մեծահասակի ձեռքից քաշելով ցույց է տալիս իր կառուցած աշտարակը:
	1.7. Դրականորեն է արձագանքում մեծահասակի ուղղորդմանը:	1.7.1. Կրկնում է մեծահասակի հետևից. «Հա, արի՛ գնանք բակ»:
	1.7. Կրկնօրինակում է երեխաների վարքը:	1.7.1. Տեսնելով, որ եղբայրը լվանում է ձեռքերը, ինքն էլ է ցանկանում լվացվել:
	1.8. Կողք կողքի խաղալու ժամանակ ուշադրություն է դարձնում հասակակիցների գործողություններին:	1.8.1. Դիմում է խաղացող երեխային. «Ես էլ եմ մեքենայով խաղում»:
		1.8.2. Թողնում է իր խաղալիքը և խլում հասակակցի ձեռքի խաղալիքը:

Սոցիալական վարք		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան դրսևորում է ինքնակառավարման հմտություններ:	2.1. Հասկացնում է իր որոշ ֆիզիոլոգիական կարիքները՝ քաղցը, ծարավը:	2.1.1. Ասում է մայրիկին. «Հաց տուր»:
		2.1.2. Մեծահասակի ձեռքից բռնած ցույց է տալիս իր ուզածը՝ հացը կամ ջուրը:
	2.2. Ենթարկվում է անվտանգության պարզ պահանջներին:	2.2.1. Ձեռքը ետ է քաշում, երբ մայրն ասում է. «Տաք է, ձեռք մի՛ տուր»:
		2.2.2. Մատնացույց է անում հոսանքի վարդակը և ցուցաբերում զգուշավորություն:
3. Երեխան դրսևորում է ինքնուրույնություն:	3.1. Փորձում է ինքնուրույն հոգալ իր պարզ կարիքները:	3.1.1. Ինքնուրույն հագնում է մաշիկները (հնարավոր է նաև թարս):
	3.2. Մասնակցում է պարզ գործերի:	3.2.1. Սեղանը պատրաստելիս դնում է ափսեն:

Անձնային զարգացում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան սկսում է ցուցաբերել սեփական անձի և ուրիշների մասին իմացություն:	4.1. Ճանաչում է իրեն հայելու մեջ:	4.1.1. Ժպտում կամ խաղում է հայելում արտացոլվող իր պատկերի հետ:
		4.1.2. Հայելու մեջ նայելով սանրում է իր մազերը:
	4.2. Գիտի իր անունը:	4.2.1. Արձագանքում է, շրջվում է, երբ դիմում են անունով:
		4.2.2. Մատնացույց է անում իրեն, երբ հարցնում են «Անին ու՞ր է»:
	4.3. Անվանում է իր մարմնի առնվազն 3 մասերը:	4.3.1. Երբ խնդրում են, ցույց է տալիս իր քիթը, բերանը, աչքերը, ձեռքերը, ոտքերը, գլուխը, փորիկը:
	4.4. Ճանաչում է ծնողներին և ընտանիքի անդամներին:	4.4.1. Երբ հարցնում են «Որտեղ է մայրիկը», մատով ցույց է տալիս մայրիկին:

Հուզական զարգացում		
Չափորոշիչ	[illegible]	[illegible]
5. Երեխան սկսում է ճանաչել հիմնական հույզերը:	5.1. Ժպտում է կամ ծիծաղում՝ ի պատասխան դրական հաղորդակցությանը:	5.1.1. Երբ մեծահասակը գովում է՝ «Ինչ լավ աղջիկ ես», ժպտում է ի պատասխան:
	5.2. Դժգոհություն է արտահայտում, երբ իրեն ինչ-որ բան անհանգստացնում է կամ անկարող է ինչ-որ բան անել:	5.2.1. Սկսում է թափահարել տիկնիկին, երբ չի կարողանում նրա զգեստը հանել:
6. Երեխան արտահայտում է իր զգացմունքները երգի, երաժշտության, շարժումների և պարի միջոցով:	6.1. Ճանաչում և արձագանքում է ծանոթ երաժշտությանը:	6.1.1. Երաժշտության տակ կատարում է պարային շարժումներ:
	6.2. Պարբերաբար երգում է:	6.2.1. Ինչ-որ բանով զբաղվելիս երգում է քթի տակ:
		6.2.2. Ձայնարկիչով ծանոթ երգ լսելիս ձայնակցում է:

1-2 տարեկան

Երկուսուկես-տարեկան, առողջության դրական և անվտանգության տրամ

Ինքնասպասարկում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1.Երեխան դրսևորում է ինքնասպասարկման հմտություններ:	1.1. Ցուցաբերում է ինքնուրույնություն հագնվելիս և հանվելիս:	1.1.1. Իջեցնում է արձակված տաբատը:
		1.1.2. Վերարկուն հագցնելու համար պարզում է ձեռքերը:
		1.1.3. Ինքնուրույն բերում է հողաթափերը:
	1.2. Ինքնուրույն ուտում է սննդի որոշ տեսակներ:	1.2.1. Ինքնուրույն ուտում է տապակած կարտոֆիլը:
		1.2.2. Ինքնուրույն ուտում է տարբեր մրգեր:
	1.3. Ինքնուրույն խմելու փորձեր է անում:	1.3.1. Ինքնուրույն խմում է ջուրը բաժակից:
	1.4. Կատարում է կենցաղային տարրական գործողություններ:	1.4.1. Իր ափսեն դնում է սեղանին մեծի հրահանգով:
	1.5. Հետևողական է այն գործողություններում, որոնք կրկնվում են ըստ ռեժիմի:	1.5.1. Քնելիս իր հետ վերցնում է սիրած խաղալիքը:
		1.5.2. Վերցնում է գիշերազգեստը քնելուց առաջ:

Առողջության պահպանում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան սկսում է հետևել հիգիենայի տարրական կանոններին:	2.1. Կատարում է հիգիենայի որոշ գործողություններ:	2.1.1. Օգնությամբ լվանում և չորացնում է ձեռքերը:
	2.2. Ճանաչում է հիգիենայի որոշ պարագաներ:	2.2.1. Բերանը բացելով՝ թույլ է տալիս խնամողին մաքրել իր ատամները:
		2.2.2. Վերցնում է թաշկինակը կամ անձեռոցիկը և փորձում մաքրել քիթը, երբ քթից հոսում է:
	2.3. Փորձում է հանել թաց կամ կեղտոտ հագուստը:	2.3.1. Ջրի հետ խաղալիս քաշում է և փորձում հանել թրջված շապիկը:
	2.4. Նշան է անում, երբ ինչ-որ բանից դժգոհություն է ունենում:	2.4.1. Ստիպում է հանել կեղտոտված հագուստը:
		2.4.2. Քաղցրավենիք ուտելուց հետո ուզում է, որ ձեռքերը լվանան:

Անվտանգություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան սկսում է հետևել անվտանգության տարրական կանոններին մեծահասակի ուղղորդումով և հսկողությամբ:	3.1. Դադարեցնում է վտանգավոր գործողությունը մեծահասակի օգնությամբ:	3.1.1. Դադարում է քաշել սեղանի սփռոցը (պատուհանի վարագույրը), երբ մեծահասակը բռնում է ձեռքը:
		3.1.2. Մայրիկի «Սպասի՛ր, չիջնե՛ս» հրահանգը լսելիս երեխան բարձր աթոռին կանգնած սպասում է, որ մայրը մոտենա:
	3.2. Մեծի հրահանգով կատարում է մեկ գործողություն:	3.2.1. Մեծահասակի խնդրանքով ննջարանից բերում է փոքրիկ բարձը:

1-2 տարեկան

Տղան նկատում է վերարկուների տակ

Հետաքրքրասիրություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հետաքրքրասիրություն է ցուցաբերում նոր բաներ սովորելու և նոր փորձառությունների նկատմամբ:	1.1. Խաղում է խաղալիքներով, որոնք առաջացնում են ձայն, լույս, շարժում և այլն:	1.1.1. Ծարժում է չխկչխկացող խաղալիքը, որպեսզի լսի դրա ձայնը:
		1.1.2. Առարկան նետում է ջրի մեջ, որպեսզի տեսնի ջրի ցայտումը:
		1.1.3. Սեղմում է լույսի վառիչը և նայում, թե լույսն ինչպես է միանում:
	1.2. Ուսումնասիրում է միջավայրը:	1.2.1. Նկատում է սենյակում հայտնված նոր առարկան, նոր խաղալիքը:
		1.2.2. Քաշում է պահարանի դարակը, որպեսզի տեսնի, թե մեջն ինչ կա:
		1.2.3. Կանգնում է ոտքի թաթերին, որպեսզի տեսնի, թե սեղանի վրա ինչ կա:
	1.3. Կրկնօրինակում է մեծահասակների պարզ գործողությունները:	1.3.1. Հեռախոսի լսափողը դնում է ականջին և խոսում հեռախոսով:
	1.4. Հետաքրքրություն է ցուցաբերում մեծահասակների աշխատանքային գործունեության նկատմամբ:	1.4.1. Երբ մայրիկը թխում է, ուզում է ալյուր լցնել խմորի մեջ:

Նախաձեռնություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան նախաձեռնություն է ցուցաբերում:	2.1. Փորձում է ինքնուրույն կատարել առօրյա որոշ գործողություններ:	2.1.1. «Ես ուզում եմ թեյը իմ ձեռքով խմել»:
		2.1.2. Փորձում է ինքնուրույն հագնել կոշիկները (կարող է և թարս հագնել):
	2.2. Ցույց է տալիս, թե ինչ է սիրում կամ չի սիրում:	2.2.1. Մատնացույց է անում իր սիրած խաղալիքը:
		2.2.2. Երբ մայրիկը ասում է «Հիմա գնում ենք լողանալու», դեմքի արտահայտությամբ կամ առույգ շարժումներով ցույց է տալիս, որ դա իրեն շատ է դուր գալիս:
		2.2.3. Մատնացույց անելով սայլակը և դուռը, հասկացնում է, որ ուզում է գնալ զբոսանքի (կարող է ոչ հստակ խոսքերով արտահայտել իր ցանկությունը):
	2.3. Ներգրավվում է նոր փորձառության մեջ:	2.3.1. Երբ նոր ճաշատեսակ կամ միրգ են առաջարկում, համտեսում է:
		2.3.2. Երբ նոր խաղալիք է նվեր ստանում, փորձում է տեսնել, թե ինչպես կարելի է դրանով խաղալ (շարժում է, որ տեսնի՝ ձայն հանում է թե ոչ, փորձում է քշել և այլն):

Մասնակցություն և հետևողականություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան մասնակցություն և հետևողականություն է ցուցաբերում իր տարիքին համապատասխան առաջադրանքներում:	3.1. Պարբերաբար կրկնում է իր նախասիրած գործողությունը:	3.1.1. Երբ արդեն սովորում է լվացվել, պարբերաբար բացում է ջուրը և փրփրեցնում օճառը:
		3.1.2. Հավաքում է խաղալիք բուրգը (հնարավոր է և ոչ ճիշտ հաջորդականությամբ):
		3.1.3. Թերթում է նկարազարդ գիրքը, նայում նկարները:
	3.2. Ավարտին է հասցնում իրեն ծանոթ որոշ գործողություններ:	3.2.1. Հանում է տիկնիկի զգեստը և պառկեցնում քնելու:
	3.3. Կարճ ժամանակով ուշադրությունը կենտրոնացնում է, երբ իր համար հեքիաթ են կարդում/պատմում:	3.3.1. Կրկնում է հեքիաթի ծանոթ հատվածները:
		3.3.2. Երբ մայրիկը կիսատ է թողնում նախադասությունը՝ «Կարմիր գլխարկը գնաց ...», երեխան ասում է՝ տատիկի տուն:
	3.4. Անհրաժեշտության դեպքում իրերը փնտրում է այն տեղերում, որտեղ դրանք սովորաբար դրված են լինում:	3.4.1. Երբ մայրիկը ասում է «Հիմա քեզ հյութ եմ տալու», գնում է պահարանի մոտ և մատնացույց անում այն դարակը, որտեղ բաժակներն են դրված:

2 - 3 տարեկան

Շարժողական ոլորտ
Խոսքի և հաղորդակցման ոլորտ
Իմացական ոլորտ
Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ
Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ
Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ

2-3 տարեկան
Շարժողական դրդում

Խոշոր շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան տեղաշարժման (կանգնելու, քայլելու, վազքի, թռչկոտելու) ժամանակ դրսևորում է կոորդինացիա:	1.1. Ինքնուրույն կքանստում է:	1.1.1. Պպզում է (մնում է պպզած առանց նստելու և չի բռնում հենակից կամ հատակից):
	1.2. Ինքնուրույն վեր է կենում նստած դիրքից:	1.2.1. Նստած դիրքից կանգնում է առանց ձեռքերի օգնության:
	1.3. Քայլում է վարժ կերպով:	1.3.1. Քայլելիս արագաշարժ է, կոորդինացված և ճարպիկ, իսկ քայլվածքը հիմնականում նման է մեծահասակի քայլվածքին: Այլևս լայն չի բացում ոտքերը, իսկ վերին վերջույթները քայլելու ընթացքում կատարում են զուգակցված շարժումներ:
	1.4. Վազում է վստահորեն:	1.4.1. Վազում է՝ շրջանցելով խոչընդոտները, փոխելով արագությունն ու ուղղությունը, հազվադեպ է վայր ընկնում:
		1.4.2. Վազելիս հազվադեպ է վայր ընկնում, անհրաժեշտության դեպքում կանգ է առնում:
	1.5. Առանց օգնության բարձրանում և իջնում է աստիճաններով:	1.5.1. Բազրիքից բռնած բարձրանում և իջնում է աստիճաններով՝ չհերթագայելով ոտքերը (մի ոտքը դնելով, մյուսը միացնելով):
		1.5.2. Բարձրանում է աստիճաններով առանց բազրիքից բռնելու, սակայն իջնում է բազրիքից բռնած:
		1.5.3. Մեկ ձեռքից բռնած բարձրանում և իջնում է աստիճաններով, ոտքերը հերթագայելով:
		1.5.4. Ցատկում է 1 աստիճանի բարձրությունից:
	1.6. Թռչկոտում է՝ հենման մակերեսից չկտրվելով:	1.6.1. Թռչկոտում է՝ ոտքերը գետնին պահած:

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան տեղաշարժման (կանգնելու, քայլելու, վազքի, թռչկոտելու) ժամանակ դրսևորում է կոորդինացիա:	1.7. Ինքնուրույն մագլցում է ոչ բարձր առարկաների վրա:	1.7.1. Բարձրանում է բազմոցի վրա:
	1.8. Կռանում է առանց հավասարակշռությունը կորցնելու:	1.8.1. Կռանալով վերցնում է հատակին ընկած խորանարդիկը (նույնը կարող է կատարել նաև ծալված ծնկներով):
	1.9. Քայլելիս շարժում է իրանը և ձեռքերը:	
	1.10. Գործողություններ է կատարում՝ տարբեր դիրքերում հավասարակշռությունը պահելով:	1.10.1. Ինքնուրույն նստում է եռանիվ հեծանիվը և վարում է: Սկզբում ոտքերը գետնին հենելով, իսկ ավելի ուշ ոտնաթաթերով ոտնակները պտտելով:
		1.10.2. «Հեծնում է» տարբեր մեծ խաղալիքներ և քշում է՝ ոտքերով հրվելով հատակից:
		1.10.3. Կանգնած դիրքում հեշտությամբ շրջվում է առանց վայր ընկնելու:
		1.10.4. Մի քանի վայրկյան կանգնում է մեկ ոտքի վրա:
		1.10.5. Կանգնում և քայլում է ոտնաթաթերի ծայրերի վրա:
		1.10.6. Բռնում է մեծ գնդակը և նետում գլխից վերև:
		1.10.7. Թեք հարթությունով սահում է առանց օգնության:

Նուրբ (մանր) շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան դրսևորում է վերջույթների և մատների շարժումների կառավարման հմտություններ:	2.1. Կառուցում է պարզ շինություններ ուղղահայաց և հորիզոնական դիրքերով:	2.1.1. Կառուցում է աշտարակ մինչև 9 խորանարդիկներից:
		2.1.2. Շարում է խորանարդիկները ուղիղ գծով (կառուցում է «գնացք»):
		2.1.3. Հավաքում է պարզ գլուխկոտրուկներ (մոզաիկա):
		2.1.4. Կավով կամ այլ պլաստիկ նյութով փորձում է որևէ բան պատրաստել:
	2.2. Ձեռքի և դաստակի կոորդինացված շարժումներով գծում/նկարում է՝ օգտագործելով թղթի ամբողջ մակերեսը:	2.2.1. Խզբզում է շրջանաձև:
		2.2.2. Կրկնօրինակում է հորիզոնական և ուղղահայաց գծեր:
		2.2.3. Արտանկարում է պարզ երկրաչափական ձևեր՝ շրջանակ կամ խաչ:
		2.2.4. Մատները թաթախելով յուղաներկի կամ որևէ գունավոր նյութի մեջ՝ փորձում է որևէ բան նկարել:
	2.3. Ինքնուրույն հագնում և հանում է հագուստի որոշ մասեր:	2.3.1. Երկու ձեռքով հագնում և հանում է գլխարկը:
		2.3.2. Քաշում և հանում է գուլպաները:
		2.3.3. Գրպանից հանում է թաշկինակը:
3. Երեխան ցուցաբերում է վերջույթների կառավարման հմտություն՝ աջ կամ ձախ վերջույթի գերակայությամբ:	3.1. Գործողություն կատարելիս նախընտրում է աջ կամ ձախ վերջույթը:	3.1.1. Գերակայող ձեռքով կառուցում է աշտարակ, թերթում է գրքի էջերը, բռնում մատիտը:
		3.1.2. Գերակայող ոտքով հարվածում է գնդակին:

2-3 տարեկան

Խոսքի և հաղորդակցման զարգացում

Բանավոր խոսք		
Խոսքի ընկալում և օգտագործում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Ընկալում է իրեն ուղղված ուրիշի բանավոր խոսքը:	1.1. Կատարում է մեծահասակի պարզ հրահանգները:	1.1.1. Երբ մայրն ասում է «Արջուկին քնեցրու», երեխան պառկեցնում է արջուկին:
	1.2. Համապատասխան ձևով պատասխան է տալիս «ով», «ինչ», «երբ», «որտեղ» հարցերին:	1.2.1. «Ո՞վ կերավ Կարմիր գլխարկի տատիկին» հարցին պատասխանում է՝ գայլը:
2. Օգտագործում է 3 և ավելի բառերից բաղկացած նախադասություններ:	2.1. Խոսքում օգտագործում է օժանդակ բայեր:	2.1.1. «Սա իմ ավտոն է»:
	2.2. Օգտագործում է պարզ ընդարձակ նախադասություններ:	2.2.1. «Ես ուզում եմ գնանք բակ»:
	2.3. Նախադասության մեջ օգտագործում է «և» կամ «ու» շաղկապները:	2.3.1. «Անին կգա մեր տուն, ու մենք տուն-տունիկ կխաղանք»:
3. Երեխան բանավոր արտահայտում է իր մտքերն ու կարծիքը, զգացողություններն ու զգացմունքները:	3.1. Բառերով արտահայտում է իր ցանկությունները:	3.1.1. «Ուզում եմ, որ Ձմեռ պապիկն ինձ ավտո բերի»:

Խոսքի հնչյունաբանական և քերականական իմացություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան կարողանում է ճիշտ արտասանել մայրենի լեզվի հնչյունները:	4.1. Կրկնում է առաջարկված պարզ բառերը՝ ճիշտ արտաբերելով հնչյունները:	4.1.1. Երեխան ճիշտ արտասանում է ծաղիկ, տիկնիկ, մեքենա բառերը:
5. Երեխան կազմում է բարդ նախադասություններ:	5.1. Խոսքում օգտագործում է համադասական նախադասություններ:	5.1.1. Երեխան ասում է. «Ես նստում եմ այստեղ և ճաշիկ եմ ուտում»:
6. Երեխան հետևում է քերականական որոշ կանոնների:	6.1. Օգտագործում է գոյականի հոգնակի թիվը:	6.1.1. Երեխան ասում է. «Իմ կոճակները մեծ են»:
	6.2. Ճիշտ կիրառում է բայի ներկա ժամանակը:	6.2.1. Վերցնում է մայրիկի պայուսակը և ասում. «Ես գնում եմ խանութ»:
	6.3. Օգտագործում է դերանուններ:	6.3.1. Երեխան խանութում ասում է մորը. «Ես ուզում եմ այս գնդակը»:
7. Երեխան ճիշտ օգտագործում է խոսքի տարբեր մասեր:	7.1. Ճիշտ (տեղին) ձևակերպում է «ով» բառով հարցեր:	7.1.1. Ո՞վ է վերցրել իմ փոքրիկ բաժակը:

Հաղորդակցում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
8. Երեխան հաղորդակցվում է մեծահասակների և հասակակիցների հետ:	8.1. Զրուցում է մեծահասակի հետ՝ պատասխանելով առնվազն 2-3 պարզ հարցերի:	8.1.1. - Այդ ու՞ր ես գնում: - Բակ: - Բակում ի՞նչ ես անելու: - Խաղալու եմ: - Ու՞մ հետ: - Արամի հետ:
	8.2. Ծանոթ մարդկանց միջավայրում շփման մեջ է մտնում անծանոթների հետ:	8.2.1. Երբ պապիկի հետ գնում է հարևան խանութից հաց գնելու, պատասխանում է անծանոթ մեծահասակի «Անունդ ի՞նչ է» հարցին:
	8.3. «Խաղում» է իր հասակակիցների հետ/կողքին:	

Գրավոր խոսք

Հետաքրքրություն գրքերի և գրվածքի նկատմամբ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
9. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում գրքերի և ընթերցանության նկատմամբ:	9.1. Դիմում է մեծահասակին, որ իր համար գիրք կարդա/պատմի:	9.1.1. Բերում է նվեր ստացած գիրքը և ասում. «Հայրի՛կ, կկարդա՞ս ինձ համար»:
	9.2. Ունի իր սիրած գիրքը կամ գրքերը:	9.2.1. Քնելուց առաջ ասում է տատիկին. «Դե, մի հատ էլ Գնդիկ-Բոքոնիկը կարդա, որ քնեմ»:
10. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում գրքերի և ընթերցանության նկատմամբ:	10.1. Տարբերում է գիրքը այլ առարկաներից:	10.1.1. Մեծի հրահանգով կարող է բերել իրեն ծանոթ գիրքը:
		10.1.2. Գրքերը առանձնացնում է այլ իրերից և դասավորում է գրադարակի վրա:

Վաղ գրաճանաչություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
11. Ունի որոշ պատկերացում սիմվոլների և դրանց նշանակության մասին:	11.1. Ճանաչում է շրջապատի որոշ գրաֆիկական սիմվոլներ:	11.1.1. Ճանաչում է Գրանդ Քենդի խանութի վարդագույն փղիկին:
12. Հետաքրքրություն է դրսևորում գրելու/նկարելու պարագաների նկատմամբ:	12.1. Խզբզում է՝ օգտագործելով մատիտ կամ կավիճ:	12.1.1. Մատիտով խզբզում է և ասում. «Ես նկարում եմ տատիկի տունը»:

2-3 տարեկան Խմբագրական դրդում

Մտածողություն և տրամաբանություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հետազոտում և համեմատում է առարկաները:	1.1. Գտնում է երկու առարկաների կամ երևույթների նմանությունը:	1.1.1. Տիկնիկը նման է քույրիկին:
		1.1.2. Իր հագուստը նմանեցնում է ընկերոջ հագուստին:
		1.1.3. Խորանարդիկները շարում է՝ նմանեցնելով գնացքին:
		1.1.4. Հավաքում է 4 մասից բաղկացած գլուխկոտրուկ:
	1.2. Համեմատում է առարկաները ըստ մեկ հատկանիշի:	1.2.1. «Իմ կոնֆետները քոնից շատ են»:
	1.3. Գիտի առարկաների նշանակությունը:	1.3.1. Օգտագործում է հայրիկի փողկապը, դնում է տատիկի ակնոցը և այլն:
	1.4. Հավաքում է 2 մասից բաղկացած պատկեր:	1.4.1. Երկու մասի բաժանված շնիկի նկարը միացնում է իրար՝ ստանալով ամբողջական պատկերը:
2. Երեխան հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառա-հետևանքային կապերը:	2.1. Գիտի կենցաղում կրկնվող պարզագույն գործողությունների հաջորդականությունը:	2.1.1. Հանելով տիկնիկի հագուստը, ասում է. «Դու հիմա պիտի լողանաս»:
		2.1.2. Խաղալիք արջուկին քնեցնելիս նրան ծածկում է վերմակով և փորձում է երգել:
3. Երեխան կարողանում է ընդհանրացումներ կատարել:	3.1. Խմբավորում է առարկաները ըստ մեկ հատկանիշի:	3.1.1. Խաղալիս առանձնացնում է փոքր մեքենաները և ասում. «Հիմա խաղում ենք փոքր մեքենաներով»:
4. Երեխան դասակարգում է առարկաները ըստ կոնկրետ հատկանիշի:	4.1. Տարբեր տեսակի (3-ից ոչ ավելի) մի քանի նկարներից առանձնացնում է միատեսակ առարկաներ պատկերող նկարները:	4.1.1. Տանձերի, խնձորների, բանանների նկարներից առանձնացնում է խնձորների նկարները:
		4.1.2. Կարմիր, դեղին, կանաչ շրջանակներից առանձնացնում է կարմիրները:
	4.2. Նկարները համապատասխանեցնում է առարկաներին:	4.2.1. Խաղալիք ավտոմեքենան դնում է գրքում պատկերված մեքենայի նկարի վրա:
	4.3. Դասավորում է առարկաները ըստ ծանրության:	4.3.1. Բարձրացնում և առանձնացնում է ավազով և կտրտած թղթով լցված փոքրիկ դույլերը՝ ըստ ծանրության աստիճանի:

Տարրական մաթեմատիկական պատկերացումներ և գիտելիքներ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան ունի մեծության, չափի, ձևի մասին գիտելիքներ, ճանաչում է գույները:	5.1. Անվանում է մեկ-երկու հիմնական գույն (հնարավոր է շփոթելով):	5.1.1. Անվանում է կարմիր, կապույտ, կանաչ, դեղին գույներից որևէ մեկը կամ երկուսը:
	5.2. Գիտի շատ, քիչ հասկացությունները:	5.2.1. Երեխան իր առջև դրված կոնֆետների քանակին նայելով ասում է. «Սա շատ է, իսկ սա՝ քիչ»:
6. Երեխան ցուցաբերում է հաշվի, թվերի, թվանշանների իմացություն:	6.1. Գիտի, թե ինչ է «1»-ը:	6.1.1. Երբ երեխային խնդրում են բերել մեկ խնձոր, ճշտորեն կատարում է հրահանգը:

Ուշադրություն, հիշողություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա:	7.1. Մտապահում և վերարտադրում է քառյակներ:	7.1.1. Արտասանում է «Ծիտիկ-ծիտիկ», «Արդեն մեծ եմ ես», «Ծափիկ-ծափիկ», «Ծի՜վ-ծի՜վ, աքլորածիվ, թը՜ռռ» մանկական բանաստեղծությունները:
	7.2. Վերարտադրում է նախկինում տեսած ինֆորմացիան:	7.2.1. Ի պատասխան մեծահասակի հարցին՝ երեխան պատմում է նույն կամ նախորդ օրը մանկապարտեզում կամ տանը տեղի ունեցած իրողությունները: Օրինակ՝ «Այսօր մանկապարտեզում նկարել ենք Ձմեռ պապիկ»:

Երևակայություն և ստեղծագործական մտածողություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
8. Երեխան դրսևորում է երևակայության պարզագույն տարրեր:	8.1. Կատարում է տարբեր նպատակային գործողություններ պլաստիլինի և թղթի հետ:	8.1.1. Պլաստիլինի կտորին տարբեր ձևեր տալով ասում է, որ պատրաստել է գնդակ կամ այլ առարկա (թեև սարքածը նման չէ իրական առարկային):
	8.2. Ներկում է վրձնով:	8.2.1. Վրձինը բռունցքով բռնելով, տարբեր անկանոն գծեր է նկարում:
	8.3. Նկարում է շրջաններ և խաչեր:	
	8.4. Տարբեր անուններ է տալիս իր նկարածին:	8.4.1. Իր նկարած շրջանը ցույց տալով ասում է. «Սա իմ շնիկի գորգն է, որի վրա նա քնում է»:
		8.4.2. Երեխան թղթի վրա խզբզում է և ասում. «Սա մեր տան սեղանն է»:
	8.5. Իր խաղալիքները դարձնում է երևակայական մարդիկ:	8.5.1. Խաղի ընթացքում տիկնիկին ուղարկում է խանութ, որ գնումներ կատարի:

Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
9. Երեխան կողմնորոշվում է տարածության մեջ:	9.1. Օգտագործում է «հեռու», «մոտիկ», «մյուս անգամ» բառերը, սակայն դեռ լիովին չի հասկանում դրանց նշանակությունը:	9.1.1. Դիմելով քույրիկին, ասում է. «Արի՛ մոտիկ, որ խաղանք»:
		9.1.2. Մեր տունը հեռու է, ձեր տունը մոտիկ է:
10. Երեխան կարողանում է կողմնորոշվել ժամանակի մեջ:	10.1. Օգտագործում է «ավելի ուշ», «վաղը», «հիմա», «շուտով», «երեկ», «այսօր» բառերը, երբեմն շփոթելով դրանց նշանակությունը:	10.1.1. Դիմելով մայրիկին, ասում է. «Մայրիկ, վաղը գնանք այգի»:
		10.1.2. Ընկերոջը պատմում է. «Երեկ մորաքույրս մեզ հյուր էր եկել»:

Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
11. Երեխան ունի տարրական գիտելիքներ (տեղեկացված է) իր և իր ընտանիքի մասին:	11.1. Ճիշտ ասում է իր անունը, սեռը, երբեմն տարիքը:	11.1.1. Համապատասխան հարցերին պատասխանում է՝ «Իմ անունը Արմեն է», «Տղա եմ», «Երեք տարեկան եմ»:
	11.2. Գիտի իրեն շատ մտերիմ անձանց սոցիալական դերերի մասին:	11.2.1. «Արմենը իմ հայրիկն է»: «Լուսինեն իմ քույրիկն է»:
12. Երեխան ունի գիտելիքներ շրջապատող միջավայրի և բնության վերաբերյալ:	12.1. Ճանաչում և անվանում է առնվազն 5 ընտանի կենդանիներ (շուն, հավ, կով, ձի և այլն):	12.1.1. Գիրքը նայելիս ձեռքի մատով ցույց է տալիս շանը. «Մայրիկ, տես ինչ սիրուն ձի է»:
		12.1.2. «Հայրիկ, ինձ համար այսպիսի շուն կառնես»:
	12.2. Տարբերում է ընտանի կենդանիների ձայները:	12.2.1. «Կատուն մլավում է, երևի սոված է»:
	12.3. Ճանաչում և անվանում է իրեն շրջապատող բնաշխարհի որոշ տարրեր (ծառ, ծաղիկ)՝ շփոթելով դրանց տեսակները:	12.3.1. Փողոցում քայլելիս ասում է. «Մայրիկ, կթողնես, որ ծառից մի քանի տերև պոկեմ»:
		12.3.2. «Արի՛ ծաղիկներ հավաքենք»:
13. Երեխան ճանաչում և կարողանում է կատարել մանկական ստեղծագործություններ:	13.1. Գիտի մի քանի մանկական բանաստեղծություն:	13.1.1. «Ձկնի՛կ, լող տուր, լող արա» և այլն:
	13.2. Հեռուստացույցով ծանոթ երաժշտություն (գովազդային տեսահոլովակներ) լսելիս արձագանքում է բառերով և ձայնակցում ու/կամ պարային շարժումներ կատարում:	13.2.1. Ասում է. «Վայ, “Բարի գիշեր, երեխաներ” հաղորդումն է» և սկսում է ձայնակցել հնչող երգին:
		13.2.2. Պաղպաղակի գովազդային տեսահոլովակը դիտելիս սկսում է պարել և ասում է. «Ես շատ եմ սիրում «Զեբրա-զեբրա» պաղպաղակի երգը»:

2-3 տարեկան

Սոցիալական, հուզական և անշնային զարգացում

Սոցիալական զարգացում		
Փոխհարաբերություններ շրջապատի հետ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան սկսում է շփվել ծանոթ մեծահասակների և հասակակիցների հետ և հաստատում է վստահության վրա հիմնված հարաբերություններ:	1.1. Շփվում է ծանոթ մեծահասակի հետ խաղի ընթացքում:	1.1.1. Խնդրում է մեծահասակին տալ իրենից հեռու գտնվող մեքենան:
	1.2. Անծանոթ միջավայրում շփվում է ծանոթ մեծահասակի հետ:	1.2.1. Տիկնիկային թատրոնում հարևանին տեսնելիս ձեռքը թափահարում է:
	1.3. Ընդունում է իր համար նշանակալի մեծահասակների (բարեկամների, հարևանների) ընկերակցությունը:	1.3.1. Տատիկի մոտ մնում է առանց մայրիկի:
	1.4. Խնդրում է մեծահասակին խաղալ իր հետ:	1.4.1. «Մա՛մ, արի տուն-տունիկ խաղանք»:
	1.5. Սկսում է խոսակցություն մեծահասակի հետ:	1.5.1. Ասում է. «Տե՛ս, ինչ լավ եմ ֆուտբոլ խաղում»:
		1.5.2. Ասում է. «Դու շունիկ նկարել կարո՞ղ ես»:
	1.6. Նմանակում է իր հարևանությամբ խաղացող երեխաների խաղը:	1.6.1. Խաղահրապարակում ավազով խաղացող երեխաներին մոտենալով՝ սկսում է ավազը լցնել իր դույլի մեջ:
	1.7. Հասակակցի հետ խաղի ընթացքում մեծահասակի զգալի աջակցությամբ սպասում է իր հերթին:	1.7.1. Ենթարկվելով մեծահասակի խոսքին, սպասում է մինչև մյուս երեխան ավարտի մեքենայով խաղալը և մեքենան փոխանցի իրեն:
	1.8. Մասնակցում է հասակակիցների հետ խմբովի խաղերին:	1.8.1. Մյուս երեխաների հետ շրջան է կազմում և հետևում խաղի ընթացքին:

Սոցիալական վարք

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան դրսևորում է ինքնակառավարման հմտություններ:	2.1.Հետևում է պարզ կանոններին մեծահասակի հրահանգով:	2.1.1. Մոր հիշեցումով ուտելուց առաջ լվանում է ձեռքերը:
		2.1.2. Մեծահասակի հիշեցումով ուտելուց հետո շնորհակալություն է հայտնում:
	2.2. Կանխատեսում է կանոնների խախտման հետևանքները:	2.2.1. Ասում է. «Եթե ուտելուց առաջ ձեռքերս չլվանամ, փորիկս կցավի»:
	2.3. Մեծահասակի օգնությամբ հարմարվում է առօրյա կրկնվող գործողությունների անսպասելի փոփոխմանը:	2.3.1. Երբ մայրիկը ասում է, որ անձրևի պատճառով ստիպված են հետաձգել զբոսանքը և դրա փոխարեն խաղալ լեգոներով, երեխան հեշտությամբ համաձայնում է:
	2.4. Սկսում է գիտակցել սեփական հնարավորությունների սահմանը:	2.4.1. Ինչ-որ գործողության մեջ դժվարության հանդիպելիս դիմում է մեծահասակի կամ ավագ երեխայի օգնությանը:
3. Երեխան դրսևորում է ինքնուրույնություն:	3.1. Կատարում է ինքնուրույն (անկախ) գործողություններ՝ ստուգելով թույլատրելի սահմանները:	3.1.1. Սկզբում ալյուրը գդալով լցնում է թասի մեջ, իսկ հետո փորձում է լցնել այն հատակին:
	3.2. Որոշ գործողություններ կատարում է իր ձևով, իրեն հարմար արագությամբ, չընդունելով օգնությունը:	3.2.1. Փորձելով ինքնուրույն կոծկել կոճակները, ասում է՝ «Ես կանեմ» և մի կողմ է հրում մեծահասակի ձեռքը:

Անձնային զարգացում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան սկսում է ցուցաբերել սեփական անձի և ուրիշների մասին իմացություն:	4.1. Գիտի իր անունը, սեռը:	4.1.1. «Ես տղա եմ, զգեստ չեմ հագնում»:
	4.2. Տարբերակում է մարդկանց ըստ սեռի:	4.2.1. «Իմ երկու մոտ ընկերներն էլ տղաներ են»:
	4.3. Գիտի ծնողների և ընտանիքի անդամների անունները:	4.3.1. «Իմ մայրիկի անունն էլ է Անուշ»:
	4.4. Գիտակցում է, երբ իրեն ուշադրություն են դարձնում կամ դիտարկում են:	4.4.1. Նորից հարվածում է գնդակին, երբ նկատում է, որ մայրն իրեն է նայում:
	4.5. Ինքն իրեն զբաղեցնում կամ հետաքրքրություններ է գտնում 10-15 րոպեի սահմաններում:	4.5.1. Դիտում է գրքի նկարները կամ տիկնիկով խաղում է:
	4.6. Նկարներում տարբերակում է պատկերված երեխաների սեռը:	4.6.1. Նայելով նկարին, ասում է. «Աղջիկը գնդակ է խաղում»:
	4.7. Երբ խնդրում են, ցույց է տալիս է մարմնի 6-9 մասեր:	4.7.1. Հրահանգով ցույց է տալիս մարմնի տարբեր մասերը իր կամ տիկնիկի վրա՝ տալով դրանց անվանումը:
	4.8. Գիտի իրեն պատկանող իրերը, խաղալիքները:	4.8.1. Երբ հասակակիցը մոտենում է, երեխան ցույց է տալիս խաղալիքը և ասում է. «Սա իմ գնդակն է»:
5. Երեխան սկսում է դրսևորել ինքնավստահություն:	5.1. Ուրախություն է արտահայտում որևէ բան լավ անելիս:	5.1.1. «Հայրի՛կ, ես ճաշիկը ինքս կերա»:
	5.2. Ցուցադրում է իր կատարած աշխատանքները:	5.2.1. «Տե՛ս, ինչ տնակ եմ նկարել»:
	5.3. Հաճույք է ստանում տան գործերում մեծահասակին օգնելիս:	5.3.1. Փոշեկուլով տունը մաքրելիս փորձում է ձողից բռնելով օգնել մորը, ասելով. «Ես կանեմ»:
		5.3.2. Մոր հրահանգով օգնում է ինչ-որ իրեր դասավորել կամ տեղափոխել:
	5.4. Կատարում է գործողություններ, ցույց տալու համար, թե իբր կարող է անել իր ուժերից վեր բաներ:	5.4.1. Հատակը փորձում է մաքրել մեծ ավելով:

Հուզական զարգացում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան սկսում է ճանաչել հիմնական հույզերն ու զգացմունքները:	6.1. Արտահայտում է ուրախությունը, տխրությունը, զայրույթը կամ վախը դեմքի համապատասխան արտահայտությամբ, ձայնի ինտոնացիայով կամ ժեստերով:	6.1.1. Ուրախանում է, երբ իմանում է, որ գնալու է թատրոն:
		6.1.2. Տխրում է, երբ չի գտնում իր սիրած խաղալիքը:
7. Երեխան սկսում է կառավարել իր զգացմունքները և մղումները:	7.1. Ուժեղ զգացմունքների ժամանակ փնտրում է մեծահասակի աջակցությունը կամ գրավում է նրա ուշադրությունը:	7.1.1. Անսպասելի բարձր ձայնից շփոթված՝ վազում է դեպի մեծահասակը:

2-3 տարեկան

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության դրդում

Ինքնասպասարկում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան դրսևորում է ինքնասպասարկման հմտություններ:	1.1. Ուտում է ինքնուրույն՝ մի քիչ թափթփելով:	1.1.1. Թափթփելով ուտում է ապուրը գդալով:
	1.2. Օգտվում է սպասքի որոշ տեսակներից (գդալ, պատառաքաղ, բաժակ):	1.2.1. Պատառաքաղն օգտագործում է մակարոն, տապակած կարտոֆիլ և նմանատիպ այլ բաներ ուտելիս:
		1.2.2. Դանակով ջեմ (թթվասեր և այլ փափուկ սննդամթերք) է քսում հացին:
	1.3. Հագնում է հագուստի բոլոր տեսակները՝ մեծահասակի օգնությամբ:	1.3.1. Առավոտյան մոր օգնությամբ հագնում է շապիկը, վերնազգեստը և այլն:
	1.4. Ինքնուրույն հանում է հագուստը:	1.4.1. Հանում է կոճակներն արձակած վերնաշապիկը, տաբատը, կիսագուլպաները և այլն:
	1.5. Օգտագործում է անձնական խնամքի առարկաները՝ մեծահասակի օգնությամբ:	1.5.1. Սանրով փորձում է սանրել մազերը:
		1.5.2. Խոզանակով փորձում է մաքրել ատամները:
	1.6. Ինքնուրույն կարողանում է հաղթահարել որոշ խոչընդոտներ:	1.6.1. Բացում է դուռը՝ շարժելով բռնակը:
	1.7. Նեղ սափորից հեղուկը լցնում է լայն տարայի մեջ (երբեմն կարող է մի փոքր թափել):	1.7.1. Սեղանի մոտ հյութը շշից լցնում է իր բաժակի մեջ:

Առողջության պահպանում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան սկսում է հետևել հիգիենայի տարրական կանոններին:	2.1. Ինքնուրույն հետևում է դեմքի մաքրությանը:	2.1.1. Անձեռոցիկով սրբում է քիթը մեծահասակի օգնությամբ:
	2.2. Օգտվում է պետքանոթից մեծահասակի օգնությամբ:	2.2.1. Ինքնուրույն իջեցնում է տաբատը, նստում և բարձրանում է պետքանոթից՝ մեծահասակի օգնությամբ:
	2.3. Կատարում է առողջության պահպանմանն ուղղված հիմնական գործողությունները՝ մեծահասակի օգնությամբ:	2.3.1. Մեծահասակի օգնությամբ օճառով լվանում և չորացնում է ձեռքերը:
		2.3.2. Հազալիս և փռշտալիս ձեռքով փորձում է ծածկել բերանը:
	2.4. Ճանաչում է և գիտի, թե ինչի համար է ատամի խոզանակը:	2.4.1. Մատնացույց է անում գրքում նկարված խոզանակը և ասում. «Ես էլ եմ ուզում այսպիսի խոզանակով լվանալ ատամներս»:
	2.5. Կրկնօրինակում է մեծահասակի որոշ գործողությունները:	2.5.1. Տեսնելով մեծահասակին ատամ լվանալիս՝ խոզանակով նմանակում է նրա շարժումները:

Անվտանգություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան սկսում է հետևել անվտանգության տարրական կանոններին մեծահասակի ուղղորդումով և հսկողությամբ:	3.1. Ուշադրություն է դարձնում անվտանգության հրահանգներին:	3.1.1. Փողոցն անցնելիս համաձայնում է բռնել մեծահասակի ձեռքը:
	3.2. Խուսափում է վտանգավոր առարկաներից, երբ մեծահասակը զգուշացնում է:	3.2.1. Ձեռք չի տալիս տաք արդուկին (եռացող թեյնիկին, սուր մկրատին, դանակին, վարդակին):

2-3 տարեկան

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ

Հետաքրքրասիրություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հետաքրքրասիրություն է ցուցաբերում նոր բաներ սովորելու և նոր փորձառությունների նկատմամբ:	1.1. Հարցեր է տալիս անծանոթ առարկաների վերաբերյալ:	1.1.1. Տեսնելով նոր խաղալիք կամ իր, հարցնում է. «Սա ի՞նչ է»:
	1.2. Կրկնօրինակում է մեծահասակների առօրյա կրկնվող գործողությունները:	1.2.1. Թերթը վերցնում է ձեռքը, բացում և ձևացնում է, թե կարդում է:
		1.2.2. Մեծի դիրք ընդունելով, հեռուստացույց է նայում՝ ժամանակ առ ժամանակ հետևելով մեծին:
	1.3. Հարցեր է տալիս լսած հեքիաթի վերաբերյալ:	1.3.1. Երբ մայրիկը պատմում է հեքիաթը, հարցնում է. «Իսկ ծիտիկը ինչո՞ւ լավաշը տարավ»:
	1.4. Մասնակցում է նոր գործողությունների, խաղերի:	1.4.1. Քրոջ ձեռքից վերցնում է վրձինը և նկարում ջրաներկով:
		1.4.2. Մայրիկի հետ խմոր է հունցում:

Նախաձեռնություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան նախաձեռնություն է ցուցաբերում:	2.1. Մասնակցում է ուրիշ երեխաների խաղին:	2.1.1. Միանում է տուն-տունիկ խաղացող երեխաներին:
	2.2. Խաղի ընթացքում միաժամանակ օգտագործում է մի քանի խաղալիքներ:	2.2.1. Ավազի հետ խաղալիս փոքրիկ դույլով լցնում է ջուրը և բահով խառնում:
	2.3. Խաղալիքներից ընտրում է մեկը:	2.3.1. Երբ մեծահասակը 2-3 խաղալիք է առաջարկում, ընտրում է մեկը (տիկնիկը, մեքենան, գունավոր բուրգաշտարակը, և այլն):

Մասնակցություն և հետևողականություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան մասնակցություն և հետևողականություն է ցուցաբերում իր տարիքին համապատասխան առաջադրանքներում:	3.1. Դժվարության հանդիպելիս մի քանի անգամ փորձում է հաղթահարել:	3.1.1. Մի քանի անգամ փորձում է կառուցել աշտարակը, որը փլվում է:
		3.1.2. Աստիճաններով բարձրանում է մինչև վերջ, չնայած դժվարանում է:
		3.1.3. Մի քանի իր տեղավորում է տուփի կամ պայուսակի մեջ՝ անընդհատ հետ թափելով, որպեսզի տեղավորվ են:
	3.2. Խնդրում է, որ իր սիրած գիրքը/հեքիաթը պարբերաբար կարդան/պատմեն իր համար:	3.2.1. Քնելուց առաջ մայրիկին/հայրիկին խնդրում է պատմել իր սիրած հեքիաթը (կարող է նախապես բացել էջը):
	3.3. Իր ընտրած խաղով խաղում է որոշակի կարճ ժամանակի (8-10 րոպե) ընթացքում:	3.3.1. Տիկնիկների համար սեղան է պատրաստում մանկական սպասքով և նրանց «կերակրում» է:
		3.3.2. Խորանարդիկներից մեքենաների համար ավտոտնակ է պատրաստում և մեքենաները «քշելով» տանում է ավտոտնակի մեջ:

3- 4 տարեկան

Շարժողական ոլորտ

Խոսքի և հաղորդակցման ոլորտ

Իմացական ոլորտ

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ

3-4 տարեկան Շարժողական ոլորտ

Խոշոր շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան դրսևորում է խոշոր շարժումներով պայմանավորված հիմնական հմտությունները՝ ցուցաբերելով հավասարակշռության, կոորդինացիայի զարգացող ունակություններ կանգնելու, քայլելու, վազքի, ցատկելու, մագլցելու, աստիճաններով իջնելու և բարձրանալու ժամանակ:	1.1. Ցատկում է մեկ ոտքի վրա 2 և ավելի անգամ:	1.1.1. Ցատկում է հատակի վրա կողք կողքի դրված 2 կամ 3 տարբեր գույնի շրջանակների մեջ:
	1.2. Ոտքերը միասին պահելով կանգնած տեղից ցատկում է առնվազն 20 սմ հեռավորության վրա:	
	1.3. Առանց որևէ բանից բռնելու կանգնում է մեկ ոտքի վրա առնվազն 2 վայրկյան:	1.3.1. Մեկ ոտքի վրա կանգնած՝ մյուս ոտքով դիպչում է հատակին դրված տուփին:
	1.4. Ուղիղ գծով քայլելով անցնում է առնվազն 1 մետր տարածություն:	1.4.1. Քայլում է բացված վիճակում հատակին դրված սանտիմետրային ժապավենի վրայով (կամ հատակին փռված գորգի եզրագծով):
		1.4.2. «Մայրիկ, տես, քայլում եմ գծի վրայով»:
	1.5. Քայլում է շրջանցելով խոչընդոտները:	1.5.1. Շրջանցում է ճանապարհին գտնվող բազկաթոռը, ուղղանկյուն սեղանը:
	1.6. Քայլում է ոտքերի մատների վրա:	1.6.1. «Մայրիկ, տես, ես պարուհու պես քայլում եմ մատներիս վրա»:
	1.7. Վազում է առնվազն 8 մետր տարածություն:	1.7.1. Բակում վազում և բերում է ծառի տակ ընկած գնդակը:
	1.8. Ինքնուրույն բարձրանում է աստիճաններով՝ հերթագայելով ոտքերը:	
	1.9. Մեծահասակի օգնությամբ իջնում է աստիճաններով՝ հերթագայելով ոտքերը:	1.9.1. Բռնելով բազրիքից կամ մոր ձեռքը՝ իջնում է աստիճաններով՝ յուրաքանչյուր աստիճանին փոխելով ոտքը:
	1.10. Ցատկում է մոտ 20 սմ բարձրությունից երկու ոտքի վրա:	1.10.1. Աստիճաններով իջնելիս ցատկում է վերջին աստիճանից:
	1.11. Վարում է եռանիվ հեծանիվ:	1.11.1. Քշում է եռանիվ հեծանիվը՝ փոխ առ փոխ սեղմելով ոտնակները:

[illegible]	Ցուցիչ	Օր
2. Երեխան դրսևորում է գնդակով խաղալու տարբեր հմտություններ:	2.1. Նետված գնդակը երեխան բռնում է տարածած (արմունկները բացված) ձեռքերով:	
	2.2. Բռնում է մեծ գնդակը մոտավորապես 1,5 մետր հեռավորությունից:	
	2.3. Նետում է գնդակն ընկերոջը ճիշտ ուղղությամբ:	
	2.4. Ֆուտբոլ խաղալիս ոտքը ետ տանելով հարվածում է գնդակին:	

Նուրբ (մանր) շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան ցուցաբերում է ձեռքի և մատների շարժումների կառավարման հմտություններ:	3.1. Կատարում է պարզ գործողություններ փոքր/մանր առարկաներով:	3.1.1. Հավաքում է 4-7 խոշոր կտորներից բաղկացած գլուխկոտրուկներ:
		3.1.2. Թերթում է գիրքը էջ առ էջ:
		3.1.3. Պտտելով կափարիչը՝ բացում և փակում է շիշը:
		3.1.4. Խոշոր կամ միջին չափսի ուլունքներով հավաքում է շղթա:
	3.2. Կառուցում է միջին բարդության շինություններ:	3.2.1. Երեք խորանարդիկներից կառուցում է կամրջակ:
		3.2.2. Մի քանի խորանարդիկներից պատ է կառուցում:
	3.3. Ծեփում է պարզ՝ կլոր, տափակ, պարանաձև, առարկաներ:	3.3.1. Խմորից կամ պլաստիլինից պատրաստում է գնդիկներ, այնուհետև՝ բլիթներ:
		3.3.2. Խմորից/պլաստիլինից «պարան» է սարքում:

Նուրբ (մանր) շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան դրսևորում է նկարելու հմտություններ:	4.1. Բռնում է մատիտը ձեռքի առաջին 3 մատներով՝ թուղթը մյուս ձեռքով պահելով:	
	4.2. Բռնում է մատիտը ծայրին մոտ:	
	4.3. Արտանկարում է երկրաչափական պատկերներ:	4.3.1. Ըստ օրինակի նկարում է գնդակ:
		4.3.2. Ըստ օրինակի նկարում է խաչ:
	4.4. Նկարում է մարդ, որն ունի գլուխ և մեկ գծով պատկերված վերջույթներ («փայտիկներ») :	
	4.5. Կրկնագծում է (եզրակ է քաշում) նկարի ուրվագծով:	4.5.1. Կրկնագծում է պատկերված խնձորը:
		4.5.2. Կրկնագծում է պատկերված տնակը:
5. Երեխան ցուցաբերում է մկրատով կտրտելու պարզ հմտություններ:	5.1. Մեկ ձեռքի մատներով բացում և փակում է բութ ծայրերով մկրատը:	5.1.1. Կտրտում է թուղթը:
6. Երեխան կատարում է ինքնասպասարկման առօրյա գործողություններ:	6.1. Արձակում և կոճկում է մեծ կոճակները, հագուստի մեծ շղթաները, քուղերը:	6.1.1. Ինքնուրույն քանդում է մեծ շղթայով բաճկոնը և հանում է այն:
	6.2 Արձակում է կոշիկի քուղերը:	
	6.3. Ինքնուրույն օգտվում է սպասքի որոշ տեսակներից:	6.3.1. Պատառաքաղով վերցնում է տապակած կարտոֆիլը:
		6.3.2. Ապուրն ուտում է գդալով:

3-4 տարեկան

Խոսքի և հաղորդակցման զարգացում

Բանավոր խոսք		
Խոսքի ընկալում և օգտագործում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան ընկալում է իրեն ուղղված ուրիշի բանավոր խոսքը:	1.1. Կատարում է մեծահասակների պարզ հրահանգները:	1.1.1. Մեծի հրահանգով խաղալիքը տեղավորում է պահարանում, դուռը փակում է և վերադառնում իր տեղը:
	1.2. Լրացնում է պարզ նախադասության վերջին՝ բաց թողնված բառը:	1.2.1. Պապիկն ասում է. «Գնա, հեքիաթների գիրքը բեր, որ...», երեխան շարունակում է՝ նայենք կամ կարդանք:
		1.2.2. Հայրիկն ասում է. «Հիմա կմոտենանք պաղպաղակ վաճառողին ու...», երեխան շարունակում է. «պաղպաղակ կգնենք»:
	1.3. Ուշադիր ունկնդրում է իր կամ խմբի համար ընթերցվող մանկական հեքիաթը:	1.3.1. Հետևում է հեքիաթի ընթացքին՝ հայացքն ուղղելով ընթերցողին կամ գրքին:
		1.3.2. Ժպտում է, երբ լսում է հեքիաթի զվարճալի դրվագները:
		1.3.3. Կրկնում է հեքիաթի ծանոթ բառերը, նախադասությունները. «Ա՛յ դու կկու, հիմար կկու...»:
	1.4. Խոսքի հնչերանգով տարբերակում է խոսակցի տրամադրությունը:	1.4.1. Երբ մայրը բարձր ձայնով ասում է. «Գնա՛ խաղալիքներդ հավաքիր»: Երեխան ասում է. «Մայրիկ, ինչո՞ւ ես բարկացել»:

Խոսքի ընկալում և օգտագործում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան բանավոր արտահայտում է իր մտքերն ու կարծիքը, զգացողություններն ու զգացմունքները:	2.1. Ճիշտ (ադեկվատ) պատասխանում է «ինչու» հարցին:	2.1.1. «Ինչու՞ ես մենակ նստել» հարցին պատասխանում է. «Որովհետև ինձ չեն խաղացնում»:
		2.1.2. «Ինչու՞ ես տիկնիկի զգեստը հանել» հարցին պատասխանում է. «Որովհետև կեղտոտվել է, պիտի լվանամ»:
	2.2. Պատմում է սեփական փորձառության մասին:	2.2.1. Կենդանաբանական այգի այցելելուց հետո երեխան ընկերներին պատմում է. «Ես կենդանաբանական այգում շատ մեծ արջ տեսա»:
		2.2.2. «Երեկ ես տատիկիս հետ համով գաթա թխեցի»:
	2.3. Երեք-չորս պարզ նախադասությամբ ասում է, թե ինչ են անում նկարում պատկերված մարդիկ կամ կենդանիները:	2.3.1. Նկարագրում է իրավիճակային պարզ քարտերի վրա ներկայացված նկարները: Օրինակ, «Տատիկը թխեց գնդիկ-բոքոնիկ, դրեց պատուհանին, իսկ նա գլորվեց ու պատուհանից դուրս ընկավ»:

Խոսքի հնչյունաբանական և քերականական իմացություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան ճանաչում է մայրենի լեզվի հնչյունները և կարողանում դրանք ճիշտ արտասանել:	3.1. Կրկնում է առաջարկված բառերը՝ ճիշտ արտաբերելով հնչյունները:	3.1.1. «Կապույտ», «դուռ», «ռադիո», «փայտ» և այլն:
4. Երեխան ճիշտ օգտագործում է խոսքի տարբեր մասեր:	4.1. Ճիշտ (տեղին) ձևակերպում է «ինչ», «որտեղ», «երբ», «ինչու» բառերով հարցեր:	4.1.1. «Ի՞նչ կա այս տուփի մեջ»:
		4.1.2. «Մայրիկ, ե՞րբ ենք գնալու մանկական երկաթուղի»:

Հաղորդակցում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան արդյունավետորեն հաղորդակցվում է մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ:	5.1. Զրուցում է մեծահասակի հետ՝ պատասխանելով առնվազն 3-4 պարզ հարցերի:	5.1.1. «Իմ անունը Արայիկ է»: «Ես երեք տարեկան եմ»: «Հիմա պապիկիս հետ գնում եմ այգի»: «Այգում պիտի ավազի հետ խաղամ»:
	5.2. Մասնակցում է առօրյա խոսակցությանը «հիմա» և «այստեղ» թեմաների շուրջ:	5.2.1. «Հիմա ես պիտի շորերս հանեմ, հետո լվացվեմ ու գնամ քնելու իմ արջուկի հետ»:

Գրավոր խոսք		
Հետաքրքրություն գրքերի և գրվածքի նկատմամբ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում գրքերի և ընթերցանության նկատմամբ:	6.1. Պատկերազարդ գրքեր դիտելիս հարցեր է տալիս:	6.1.1. «Մայրիկ, նապաստակը ինչո՞ւ է լաց լինում»:
		6.1.2. «Աղվեսն ինչո՞ւ կերավ կկվի ձագին»:
	6.2. Ձևացնում է, որ գրում է:	6.2.1. Թղթի վրա խզբզում է և ասում. «Ձմեռ պապիկին նամակ եմ գրում»:

Վաղ գրաճանաչություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան հասկանում է գրավոր խոսքի որոշ սկզբունքներ:	7.1. Ձևացնում է, որ գրում է:	7.1.1. Մատիտը, գրիչը բռնում է գրելուն պատրաստ:
8. Երեխան ունի գրելու պարագաների օգտագործման պարզագույն հմտություններ:	8.1. Օգտագործում է գրելու պարագաներ:	8.1.1. Մատիտով կամ գրիչով գծեր է քաշում թղթի վրա, փորձում է դրանք միացնել:
		8.1.2. Թղթի վրա ինչ-որ բան խզմզելով ասում է. «Ես նամակ եմ գրում տատիկիս, որ Նոր տարվա տոնին մեր տուն գա»:

3-4 տարեկան Իմացական դրդում

Մտածողություն և տրամաբանություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հետազոտում և համեմատում է առարկաները:	1.1. Բացատրում է առարկաների նշանակությունը, դերը:	1.1.1. «Պաղպաղակը դնենք սառնարանը, որ չհալվի»:
	1.2. Համեմատում է առարկաները ըստ երկու հատկանիշների:	1.2.1. «Իմ գնդակը մեծ է քո գնդակից, ու նաև իմը կապույտ չէ»:
	1.3. Գտնում է զույգ պատկերներ:	1.3.1. Երեխան ցույց տրված տարբեր նկարներից առանձնացնում է մեկը և ընտրում դրան համապատասխանող զույգը:
	1.4. Հավաքում է 3- 4 խոշոր մասերից բաղկացած պատկեր:	1.4.1. Երեք մասի բաժանված որևէ առարկայի նկար միացնում է իրար՝ ստանալով ամբողջական պատկերը:
2. Երեխան հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառա-հետևանքային կապերը:	2.1. Տալիս է «ինչու՞» հարցը՝ հասկանալու համար պատճառա-հետևանքային կապերը:	2.1.1. «Մայրիկ, ինչո՞ւ է ձյուն գալիս»:
	2.2. Բացատրում է, թե ինչպիսի արդյունք կարող է ունենալ տվյալ պարզ գործողությունը:	2.2.1. «Եթե լույսը հանգցնես, կմթնի»:
3. Երեխան կարողանում է ընդհանրացումներ կատարել:	3.1. Խմբավորում է առարկաները զույգերով՝ ըստ ֆունկցիոնալ նշանակության:	3.1.1. Տարբեր առարկաներից առանձնացնում է ուտելու համար գործածվող պարագաները: Օրինակ, դանակները, բաժակները:
	3.2. Առաջարկված առարկաներից կամ նկարներից ընտրում է որոշակի հասկացությունների, թեմայի (սննդի, հագուստի, կենդանիների և այլնի) վերաբերող առարկաներ:	3.2.1. Իր առջև դրված նկարներից ընտրում է այն նկարները, որոնցում պատկերված են վերնաշապիկ, զգեստ, գլխարկ:

Տարրական մաթեմատիկական գիտելիքներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան ունի մեծության, չափի, ձևի մասին գիտելիքներ, ճանաչում է գույները:	5.1. Տեսակավորում է առարկաներն ըստ ձևի:	5.1.1. Տարբեր ձևի առարկաներից ընտրում է երկու շրջանաձև (կլոր) առարկա:
	5.2. Դասավորում է առարկաներն ըստ մեծության:	5.2.1. Առանձնացնում է մեծ և փոքր խորանարդիկները:
	5.3. Տեսակավորում է առարկաներն ըստ գույնի:	5.3.1. Մեծահասակի խնդրանքով կարմիր խորանարդիկները դնում է անկյունում, իսկ կապույտները՝ կենտրոնում:
	5.3. Անվանում է հիմնական գույները:	5.3.1. «Ես մի խնձորը կնկարեմ կարմիր մատիտով, իսկ մյուսը՝ կանաչով»:
		5.3.2. Մեծահասակի խնդրանքով ասում է առաջարկված մատիտների գույները (դեղին, կարմիր, կապույտ):
	5.4. Ընտրում է 2-4 գույն:	5.4.1. Նկարելիս ընտրում է 2-4 տարբեր գույնի մատիտներ՝ անվանելով դրանց գույները:
	5.5. Տեսակավորում է առարկաներն ըստ գույնի:	5.5.1. Երբ առաջարկում են, տարբեր գույնի առարկաներից առանձնացնում է երկու կարմիր խորանարդիկները:
	5.6. Գնահատում է չափերը:	5.6.1. «Մայրիկ, տես, ես սեղանից բարձր եմ (բոյով եմ)»:
	5.7. Գիտի 2 երկրաչափական պատկեր՝ շրջան, եռանկյունի:	5.7.1. Նկարի վրա պատկերված երկրաչափական պատկերները դիտելիս ասում է. «Մի հատ էլ շրջան գտա»:
6. Երեխան ցուցաբերում է հաշվի, թվերի, թվանշանների իմացություն:	6.1. Անգիր հաշվում է մինչև 5-ը:	
	6.2. Կիրառում է հաշիվը առօրյա կյանքում:	6.2.1. «Ես չորս մատիտ ունեմ, իսկ Անին՝ մեկը»:
		6.2.2. Մայրիկի խնդրանքով գնում և բերում է հինգ խնձոր:

Ուշադրություն, հիշողություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան դրսևորում է ուշադրության կենտրոնացում և պահպանում:	7.1. Մեծահասակի օրինակից հետո կրկնում է ծափերը (3 ծափ):	
	7.2. Նուրջ 5 րոպե ուշադրությամբ լսելուց հետո հարցեր է տալիս:	
8. Երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա:	8.1. Մեծահասակի ասելուց հետո կրկնում է բանաստեղծության 2 տող:	

Երևակայություն և ստեղծագործական մտածողություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
9. Երեխան դրսևորում է տարբեր նյութերի հետ աշխատելու տարրական հմտություններ:	9.1. Կատարում է տարբեր գործողություններ պլաստիլինի և թղթի հետ:	9.1.1. Առաջարկված պլաստիլինից փորձում է սարքել գնդակ:
		9.1.2. Թուղթը գունավորում և փակցնում է պատրաստած գրքի էջերից մեկին:
	9.2. Նկարում է լսած պատմության/հեքիաթի իրեն դուր եկած առարկան/պատկերը:	9.2.1. «Գնդիկ-բոքոնիկի» հեքիաթը լսելուց հետո նկարում է Գնդիկ-բոքոնիկին:
		9.2.2. Գունավոր կավիճներով ասֆալտին կամ գրատախտակին նկարում է երեք խոզուկներին:
10. Երեխան շարժումների, երաժշտության և պարի միջոցով արտահայտում է իր մտքերը, պատկերացումները, զգացմունքները:	10.1. Երաժշտության տակ կատարում է ռիթմիկ պարային շարժումներ:	10.1.1. Մեծահասակը միացնում է երաժշտությունը և ասում. «Եկեք պարենք»: Երեխան ռիթմին համապատասխան պարային շարժումներ է կատարում:
	10.2. Ձևացնում է, թե երգում է հանդիսատեսի համար:	10.2.1. Գրիչը պահում է միկրոֆոնի պես և ասում է. «Պապի՛կ, տե՛ս, ես Անդրեն եմ, համերգ եմ տալիս»:
	10.3. Երգում է հաճախ լսած երգերը:	10.3.1. «Ծնունդդ շնորհավոր»:
	10.4. Մեծահասակին խնդրում է երգել իր սիրած երգը:	10.4.1. «Մայրի՛կ, ինձ համար կերգե՞ս «Իմ փոքրիկ նավակ» երգը»:

Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
11. Երեխան ունի գիտելիքներ և իմացություն տարածության մեջ առարկաների դիրքի վերաբերյալ և կարողանում է կողմնորոշվել տարածության մեջ:	11.1. Կատարում է հրահանգներ՝ կախված առարկաներից և իր դիրքից:	11.1.1. Ըստ առաջարկի, տիկնիկը դնում է տուփի մեջ (գետնին, արջուկի մոտ և այլն):
		11.1.2. Երբ առաջարկում են կանգնել աթոռի ետևում, կատարում է:
12. Երեխան կարողանում է կողմնորոշվել ժամանակի մեջ:	12.1. Տարբերում է ցերեկ և գիշեր հասկացությունները՝ կապելով դրանք այդ ժամին կատարվող գործողությունների հետ:	12.1.1. «Առավոտյան հայրիկը պիտի գնա աշխատանքի»:
		12.1.2. Մայրիկին հարցնում է. «Գիշերը քնելիս հեքիաթ կպատմես՞»:

Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
13. Երեխան ունի գիտելիքներ (տեղեկացված է) իր անձի, սոցիալական դերերի, հարաբերությունների մասին:	13.1. Գիտի իր ֆիզիկական տվյալները՝ մազերի գույնը, հասակը, կառուցվածքը:	13.1.1. Իմ մազերը երկար են, աչքերս շագանակագույն են և այլն:
	13.2. Ճանաչում է մարմնի մասերը:	13.2.1. Մեծահասակի խնդրանքով ցույց է տալիս ոտքի մատները:
	13.3. Նկարագրում է տարբեր սեռերի առանձնահատկությունները:	13.3.1. Աղջիկները երկար մազեր ունեն:
		13.3.2. Տիկնիկի վրա նկարում է բեղեր և ասում. «Իմ տիկնիկը տղա դարձավ»:
	13.4. Գիտի մարդկանց սոցիալական դերերի և հարաբերությունների մասին:	13.4.1. «Ես տիկնիկիս մայրիկն եմ, ես նրան պիտի զբոսանքի տանեմ»:
14. Երեխան ունի գիտելիքներ շրջապատող միջավայրի և բնության վերաբերյալ:	14.1. Գիտի այն թաղամասը կամ փողոցը, որտեղ ապրում է:	14.1.1. «Որտե՞ղ ես ապրում» հարցին պատասխանում է՝ Աջափնյակում:
	14.2. Ճանաչում և անվանում է որոշ ընտանի և վայրի կենդանիներ:	14.2.1. Ծուն տեսնելիս արձագանքում է. «Ի՜նչ սիրուն շուն է»:
		14.2.2. Վայրի կենդանիների նկարները դիտելիս ասում է դրանց անունները՝ առյուծ, փիղ, աղվես:
	14.3. Ճանաչում և անվանում է բնության որոշ երևույթներ. քամի, անձրև, ձյուն:	14.3.1. «Անձրև է գալիս: Իմ շնիկը կթրջվի»:
		14.3.2. «Վա՛յ, այս ինչ ուժեղ քամի է: Ծառերը ճոճվում են»:
		14.3.3. «Տատի՛կ, ձյուն է եկել: Բակը սպիտակ է»:
	14.4. Ճանաչում և անվանում է իրեն շրջապատող բնաշխարհի որոշ տարրեր. ջուր, ծառ, ծաղիկ, թռչուններ:	14.4.1. «Հայրի՛կ, այն երկար կտուցովը ի՞նչ թռչուն է»:
		14.4.2. Հոտոտում է վարդը և ասում. «Այս վարդը ինչ՜ լավ հոտ ունի»:
15. Երեխան ճանաչում և կարողանում է կատարել մանկական բանաստեղծություններ, երգերի քառյակներ:	15.1. Արտասանում է քառյակներ մանկական բանաստեղծություններից:	15.1.1. Արտասանում է մի քառյակ բանաստեղծությունից:
16. Երեխան գիտի իր ազգային մշակույթը:	16.1. Երգում է ազգային երգեր:	

3-4 տարեկան

Սոցիալական, հուզական և անշնային զարգացում

Սոցիալական զարգացում		
Փոխհարաբերություններ մեծահասակների հետ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան սկսում է շփվել ծանոթ մեծահասակների հետ և հաստատում է վստահության վրա հիմնված հարաբերություններ:	1.1. Ազատ հաղորդակցվում է ծանոթ մեծահասակների հետ:	1.1.1. Առավոտյան խմբասենյակ մտնելիս բարևում է դաստիարակին: Դրսում հարևաններին հանդիպելիս բարևում է կամ պատասխանում բարևին:
		1.1.2. Պատասխանում է ծանոթ մեծահասակների հարցերին՝ «ինչպե՞ս ես», «այդ ու՞ր ես գնում»:
		1.1.3. Ասում է մեծահասակին. «Տե՛ս, նոր կոշիկ եմ հագել»:
		1.1.4. Խոսում է առօրյայում կատարված, իր համար կարևոր իրադարձությունների և տպավորությունների մասին. «Այսօր իմ քույրիկի ծննդյան օրն է»:
	1.2. Ընդունում է իր համար նշանակալի մեծահասակների (բարեկամների, հարևանների) ընկերակցությունը:	1.2.1. Տատիկի մոտ մնում է առանց մայրիկի:
	1.3. Ընդունում է մեծահասակների կողմից ցուցաբերվող աջակցությունը և ուղղորդումը:	1.3.1. Ցուրտ եղանակին համաձայնում է հագնել լրացուցիչ հագուստ դուրս գնալու համար:
	1.4. Խնդրանքի դեպքում օգնում է մեծահասակին:	1.4.1. Դաստիարակի խնդրանքով օգնում է հավաքել խաղալիքները:
		1.4.2. Տատիկի խնդրանքով բերում է ակնոցները:

Փոխհարաբերություններ հասակակիցների հետ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան սկսում է շփվել իր հասակակիցների հետ:	2.1. Առանձնացած խաղում է մյուս երեխաների հետ նույն տարածքում:	2.1.1. Խաղում է տիկնիկով մյուս երեխաների կողքին:
		2.1.2. Խաղահրապարակում ավազով ամրոց կառուցող երեխայի/ների կողքին կառուցում է տնակ:
	2.2. Մյուս երեխաների հետ զուգահեռ նույն տարածքում խաղալիս ժամանակ առ ժամանակ մեկնաբանություններ է անում:	2.2.1. Իր կողքին խաղացող երեխային ասում է. «Դու մեքենա ես քշում, իսկ ես իմ տիկնիկին եմ քնեցնում»:
		2.2.2. Իր կողքին խաղացող երեխային ասում է. «Քո տիկնիկը հոգնել է, երևի քնել է ուզում»:
	2.3. Մասնակցում է առօրյա պարզ աշխատանքներին և/կամ գործողություններին:	2.3.1. Խմբասենյակում միանում է խաղալիքներ հավաքող երեխաների խմբին:
		2.3.2. Միանում է մայրիկին՝ չորացած լվացքը տեսակավորելու համար:
	2.4. Օգնում է իր հասակակցին:	2.4.1. Մեկ այլ երեխայի օգնում է աթոռները սեղանի շուրջը դասավորել:
	2.5. Զրուցում է իրեն ծանոթ հասակակիցների հետ:	2.5.1. Այգում ավազով խաղալիս զրուցում է իր հետ խաղացող երեխաների հետ:
		2.5.2. Դրսում ծանոթ երեխայի հանդիպելիս պատմում է, թե ուր էր գնացել:

Չափորոշիչ	Ցուցիչ	Դրսևորում
3. Երեխան մասնակցում է խմբային գործունեությանը:	3.1. Մասնակցում է 5-10 որպես տևողությամբ խմբային աշխատանքներին:	3.1.1. Երգում է մյուս երեխաների հետ միասին:
		3.1.2. Մասնակցում է «Սագեր, սագեր» և այլ խմբային խաղերի:
		3.1.3. Մյուս երեխաների հետ գնում է զբոսանքի:
		3.1.4. «Տուն-տունիկ» է խաղում մի քանի երեխաների հետ:
	3.2. Ենթարկվում է հաստատված 3-4 կանոններին:	3.2.1. Խաղն ավարտելուց հետո հավաքում է խաղալիքները և դնում իրենց տեղերը:
		3.2.2. Սեղանի շուրջը խմբով աշխատելիս խոսում է ցածր ձայնով:
		3.2.3. Երբ ուզում է ինչ-որ բան ասել, սպասում է մինչև մյուս երեխան ավարտի իր խոսքը:
	3.3. Նկատում է խաղընկերոջ բացակայությունը:	3.3.1. «Մայրիկ, Մարինեն այսօր այգի չի եկել»:
4. Երեխան լուծում է հասակակիցների հետ առաջացած վեճերը մեծահասակի օգնությամբ:	4.1. Դիմում է մեծահասակի օգնությանը հասակակցի հետ վեճը լուծելու համար:	4.1.1. Խնդրում է դաստիարակին օգնել, երբ մեկ ուրիշը ուզում է քանդել իր կառուցած տնակը:
		4.1.2. «Մայրիկ, Աննան գնդակը չի տալիս, որ խաղամ»:

Սոցիալական վարք

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան սկսում է համագործակցել հասակակիցների հետ:	5.1. Խաղում է տարբեր երեխաների հետ:	5.1.1. «Արի՛ միասին տուն-տունիկ խաղանք»:
		5.1.2. «Ես հիմա ձեզ հետ մեքենա կքշեմ, իսկ հետո Լիանայի և Արմենի հետ գնդակով կխաղամ»:
		5.1.3. «Ես այս մի տիկնիկը կտամ Հասմիկին, որ միասին խաղանք»:
	5.2. Տարբերակում է որևէ անձի՝ որպես իր ընկերոջ:	5.2.1. «Արամը իմ ընկերն է, այս կոնֆետը կտանեմ իրեն»:
	5.3. Խաղալիս սկսում է բարեկիրթ բառեր գործածել մեծահասակի հիշեցումով:	5.3.1. Օգտագործում է «շնորհակալություն», «խնդրեմ», «խնդրում եմ» բառերը հիշեցումով:
	5.4. Միանում է իրեն ծանոթ երեխաների խաղին:	5.4.1. «Կարելի՞ է ես էլ խաղամ ձեր թիմում»:
6. Երեխան սկսում է ցուցաբերել ինքնակառավարման հմտություններ:	6.1. Հետևում է վարքի պարզ կանոններին:	6.1.1. Երբ մանկապարտեզից տուն է վերադառնում, փոխում է հագուստը:
		6.1.2. Ուտելուց առաջ լվանում է ձեռքերը:
		6.1.3. Ուտելուց հետո օգնում է իր սպասքը հավաքել:
		6.1.4. Ուտում է բերանը փակ, առանց աղմուկի:
	6.2. Խնամքով է վերաբերվում իր համար կարևոր իրերին, խաղալիքներին:	6.2.1. Զգույշ է թերթում հայրիկի նվիրած գիրքը, որ չպատռվի:
		6.2.2. «Ես իմ մեքենաները գեղեցիկ դասավորել եմ տուփի մեջ»:
	6.3. Անցում է կատարում մի գործողությունից մյուսը մեծահասակի օգնությամբ:	6.3.1. Համաձայնում է մեծահասակի հետ միասին հավաքել խաղալիքները, իսկ այնուհետև գնալ քնելու:

Անձնային զարգացում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան սկսում է ցուցաբերել իր անձի և ուրիշների մասին իմացություն:	7.1. Գիտի իր անունը և ազգանունը:	7.1.1. «Ես Սարգսյան Լուիզան եմ»:
	7.2. Խոսում է իր մասին առաջին դեմքով:	7.2.1. «Ես սոված եմ»:
		7.2.2. «Ես էլ եմ ուզում քեզ հետ զբոսանքի գնալ»:
		7.2.3. «Ինձ մի՛ օգնիր, ես ինքս կանեմ»:
	7.3. Հասկանում է մարդկանց դերերը/կապերը ընտանիքում:	7.3.1. Լուսանկարչական ալբոմը դիտելիս պատմում է. «Սա իմ քեռին է: Այստեղ իմ տատիկն է և Աննա մորաքույրը»:
8. Երեխան սկսում է դրսևորել ինքնավստահություն:	8.1. Հպարտանում է իր ձեռքբերումներով:	8.1.1. Ցանկանում է իր նկարած աշխատանքը փակցնել պատին՝ ուրիշներին ցույց տալու համար:
		8.1.2. Կանչում է մայրիկին, որպեսզի նա տեսնի իր կառուցած աշտարակը:
	8.2. Միանում է մյուս երեխաներին տարբեր խաղերի, զբաղմունքների, աշխատանքների ժամանակ:	8.2.1. «Ես էլ եմ ուզում սահել» ասելով՝ միանում է սահնակով խաղացող երեխաներին:
		8.2.2. Մոտենում է զրուցող երեխաների խմբին և մասնակցում խոսակցությանը:
		8.2.3. «Ես էլ եմ ուզում ձեզ հետ միասին ջրել ծաղիկները»:
	8.3. Խոսում է իր նվաճումների մասին:	8.3.1. «Ես արդեն ջրաներկով կարողանում եմ նկարել: Ինձ մեծ թուղթ տուր»:
		8.3.2. «Ես արդեն երկանիվ հեծանիվ եմ ուզում քշել»:
9. Երեխան սկսում է դրսևորել ինքնուրույնություն:	9.1. Առաջարկվող/առկա երկու գործողություններից ընտրում է մեկը:	9.1.1. «Ուզում ես նկարե՞լ, թե՞ տուն-տունիկ խաղալ» հարցին պատասխանում է. «Ես ուզում եմ նկարել»:
		9.1.2. Քույրիկի համար բացիկ պատրաստելիս որոշում է ծաղիկները կամ նկարել, կամ գունավոր թղթերով ապլիկացիա անել:
	9.2. Կատարում է մի շարք առօրյա գործողություններ և առաջադրանքներ:	9.2.1. Ուտելուց առաջ առանց հիշեցման լվանում է ձեռքերը:
		9.2.2. Զբոսանքից հետո կոշիկները տեղն է դնում՝ ընդօրինակելով ընտանիքի մյուս անդամներին:

Հուզական զարգացում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
10. Երեխան սկսում է ճանաչել հիմնական հույզերն ու զգացմունքները և իրավիճակին համապատասխան հույզեր դրսևորել:	10.1. Ապրումակցում է իր համար կարևոր անձանց (օբյեկտների) հույզերին:	10.1.1.Գրկում կամ շոյում է լաց լինող երեխային:
		10.1.2. «Տուն-տունիկ» խաղալիս «հանգստացնում» և «մխիթարում» է լացող տիկնիկին:
		10.1.3. Անհանգստանում է, երբ խաղընկերը վայր է ընկնում:
	10.2. Արձագանքում է ուրիշների զգացմունքներն:	10.2.1. Արմինեն նկատում է Գայանեի դեմքի տխուր արտահայտությունը և անհանգստացած հարցնում է. «Ինչու՞ ես տխրել»:
		10.2.2. Ուրախանում է, երբ մյուսները ծիծաղում են:
		10.2.3. Օգնության է կանչում մեծահասակին՝ տեսնելով, որ ընկերը չի կարողանում կոճկել վերնաշապիկի կոճակները:

3-4 տարեկան

Ինքնասպա-սարկման, առողջության պահպանման և անվտանգության սովորություններ

Ինքնասպասարկում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան սկսում է դրսևորել առօրյա կյանքի ինքնասպասարկման հմտություններ:	1.1. Ինքնուրույն հագնում և հանում է հագուստի որոշ մասը:	1.1.1. Զբոսանքի պատրաստվելիս հագնում է գլխարկը, բաճկոնը:
		1.1.2. Դուրս գնալիս հագնում է սպորտային կոշիկները և կոճկում է դրանց կպչուն կապիչները:
	1.2. Օգտվում է զուգարանից մասնակիորեն:	1.2.1. Զուգարանից օգտվելուց հետո վեր է քաշում տաբատը առանց կոճկելու:
		1.2.2. Օգտվում է գիշերանոթից:
	1.3. Կոճկում և արձակում է մեծ կոճակները:	1.3.1. Բակ գնալիս հագնում է վերարկուն և կոճկում է այն:
	1.4. Խաղալուց հետո հավաքում է խաղալիքները մեծահասակների հիշեցումով:	1.4.1. «Մայրիկ, տես բոլոր խաղալիքներս դասավորեցի: Հիմա ես փնթի տղա չեմ»:
	1.5. Նեղ սափորից հեղուկը լցնում է առանց թափելու:	1.5.1. Սեղանի շուրջը նստած, հյութը լցնում է իր բաժակի մեջ:

Առողջության պահպանում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Գործողություններ
2. Երեխան հետևում և պահպանում է անձնական հիգիենայի որոշ կանոններ:	2.1. Խոզանակով կատարում է ատամները մաքրելու գործողություններ:	2.1.1. Թրջում է խոզանակը ատամները մաքրելու համար:
		2.1.2. Փորձում է մածուկը դնել խոզանակի վրա:
		2.1.3. Խոզանակը բերանի խոռոչում շարժում է տարբեր ուղղություններով:
3. Երեխան սկսում է հասկանալ սնվելու և ատամները առողջ պահելու միջև գործող կապը:	3.1. Առաջարկում է կատարել ատամների խնամքի հետ կապված գործողություններ:	3.1.1. «Մայրիկ, ես կերա ճաշս, գնանք լոգարան, որ բերանս ողողեմ» կամ «Ես այլևս չեմ ուտում, արի՛ գնանք ատամներս լվանանք»:
		3.1.2. «Ինչու՞ ես ուզում լվանալ ատամներդ» հարցին պատասխանում է. «Որպեսզի ատամներս մաքուր լինեն և չփչանան»:
4. Երեխան հետևում է առողջապահության հիմնական կանոններին մեծահասակի հիշեցումով:	4.1. Կատարում է առողջության պահպանմանն ուղղված հիմնական գործողությունները (օճառով լվանում է ձեռքերը, երեսը և սրբիչով չորացնում է):	4.1.1. Ուտելուց առաջ կամ ավազի հետ խաղալուց հետո լվանում է ձեռքերը:
		4.1.2. Հազալիս և փռշտալիս ձեռքով ծածկում է բերանը:
		4.1.3. Խաղի ժամանակ կատարում է հիգիենայի հետ կապված գործողություններ տիկնիկի հետ: Օրինակ՝ լողացնում է օճառով, սանրում է և այլն:
5. Երեխան գիտակցում և արտահայտում է իր վերաբերմունքը սեփական անձի հետ կապված առողջապահական խնդիրների նկատմամբ:	5.1. Բառերով ներկայացնում է իրեն անհանգստացնող հիվանդության ախտանշանները:	5.1.1. «Փորս ցավում է, և սիրտս խառնում է»:
		5.1.2. «Քթիցս հոսում է, ես գրիպ եմ»:

Անվտանգություն

Ստանդարտ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան հետևում է անվտանգության հիմնական կանոններին մեծահասակի հիշեցումով:	6.1. Խուսափում է վտանգ ներկայացնող տեղերում, իրերի, սարքավորումների հետ խաղալուց:	6.1.1. Հեռու է կանգնում խաղահրապարակից, երբ մեծ տարիքի երեխաները ֆուտբոլ են խաղում:
		6.1.2. Չի մոտենում տաք վառարանին, չի վերցնում սուր դանակը:
	6.2. Գիտի իր հետ քննարկված անվտանգության որոշ ընդհանուր կանոններ:	6.2.1. Մայրիկի հետ ավտոբուսին սպասելիս կանգնում է մայթի վրա:
		6.2.2. Փողոցում զբոսնելիս անպայման բռնում է մեծահասակի ձեռքը:
		6.2.3. Տնից դուրս չի գալիս առանց մեծահասակի թույլտվության:

3-4 տարեկան

Սովորելու հակումները վերարկրմունքի դրսևոր

Հետաքրքրասիրություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հետաքրքրասիրություն է ցուցաբերում նոր բաներ սովորելու և նոր փորձառությունների նկատմամբ:	1.1. Փորձում է խաղալ նոր խաղերով:	1.1.1. Մոտենում է նոր գլուխկոտրուկին և փորձում հավաքել:
		1.1.2. Մայրիկի ձեռքին նկարազարդ գիրքը տեսնելով՝ ասում է. «Կկարդա՞ս ինձ համար այդ գիրքը»:
		1.1.3. Փորձում է նկարել մատներով և վրձիններով:
	1.2. Հարցեր է տալիս տեղեկություններ ստանալու համար իր շրջապատում գտնվող նոր առարկաների, երևույթների մասին:	1.2.1. «Մութը ինչպե՞ս է ընկնում»:
		1.2.2. «Ձյունը որտեղի՞ց է գալիս»:
		1.2.3. «Արագիլը որտեղի՞ց եկավ մեր բակ»:
	1.3. Նկատում է այլ երեխաների հետաքրքրությունները՝ դիտելով նրանց խաղը կամ շփվելով նրանց հետ:	1.3.1. Նայում է, թե ինչպես է Արամը տուն կառուցում, և ինքն էլ է փորձում նույնը անել:
		1.3.2. «Նարեկը մեքենաներով է խաղում, ինձ էլ մեքենա տուր, որ խաղամ»:
	1.4. Նախընտրում է խաղի որոշ տեսակներ:	1.4.1. Սիրում է խորանարդիկներով տարբեր շինություններ պատրաստել և պարբերաբար խաղում է դրանցով:
		1.4.2. Ժամանակ առ ժամանակ հավաքում է իր սիրած գլուխկոտրուկը:

Նախաձեռնություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան նախաձեռնություն է ցուցաբերում:	2.1. Պատրաստակամություն է հայտնում մասնակցելու տարբեր խաղերի և առաջադրանքների:	2.1.1. Նայում է կոնստրուկտորի տուփի վրա նկարված ամրոցին և ասում. «Ես էլ եմ ուզում սարքել»:
		2.1.2. Համաձայնում է, երբ ծնողը առաջարկում է խաղալ նոր մոզաիկայով:
		2.1.3. Լսելով, որ քույրիկը երգում է, ձայնակցում է նրան:
	2.2. Մեծահասակի օգնությամբ ընտրություն է կատարում առաջարկվող 2-3 խաղերի, նյութերի միջև:	2.2.1. Մեծահասակի ուղղորդմամբ ընտրում է, թե ինչով նկարի (մատիտ, ֆլոմաստեր, ջրաներկ):

Մասնակցություն և հետևողականություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան մասնակցություն և հետևողականություն է ցուցաբերում իր տարիքին համապատասխան առաջադրանքների նկատմամբ:	3.1. Առաջարկության դեպքում մասնակցում է խմբային խաղերի:	3.1.1. «Դու կլինե՞ս վաճառողը» հարցին պատասխանում է. «Այո, իսկ ի՞նչ պիտի անեմ»:
	3.2. Դժվարության հանդիպելիս ինքնուրույն հաղթահարում է արգելքները կամ դիմում է մեծահասակի օգնությանը:	3.2.1. Մի քանի անգամ փորձում է վերցնել բարձր տեղում դրված խաղալիքը և տեսնելով, որ չի կարողանում, բարձրանում է աթոռին:
		3.2.2. Փորձում է բարձրացնել բաճկոնի շղթան և շարունակում է այնքան ժամանակ, մինչև որ ստացվի:
		3.2.3. Մի քանի որպե փորձում է հավաքել գլուխկոտրուկը և տեսնելով, որ չի ստացվում, մեծահասակին խնդրում է օգնել իրեն:
		3.2.4. Փորձում է պատին ամրացնել իր նկարած նկարը և երբ չի կարողանում, քույրիկին խնդրում է օգնել իրեն:
	3.3. Օգնում է առօրյա գործերում:	3.3.1. Օգնում է մայրիկին հավաքել փոքր եղբոր խաղալիքները, գետնին թափված իրերը:
	3.4. Կազմում է 2 քայլից բաղկացած պլան և գործում է ըստ այդ պլանի:	3.4.1. Մայրիկին ասում է. «Հիմա իմ դույլի մեջ ջուր կլցնեմ և կջրեմ ծաղիկները»:
		3.4.2. «Ես ճաշս կուտեմ ու կկանչեմ Արմենին, որ խաղանք»:

4 - 5 տարեկան

Շարժողական ոլորտ

Խոսքի և հաղորդակցման ոլորտ

Իմացական ոլորտ

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ



4-5 տարեկան

Շարժողական դրդում

Խոշոր շարժումներ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան դրսևորում է խոշոր շարժումներով պայմանավորված հիմնական հմտությունները՝ ցուցաբերելով հավասարակշռության, կոորդինացիայի զարգացող ունակություններ կանգնելու, քայլելու, վազքի, ցատկելու, մագլցելու, աստիճաններով իջնելու և բարձրանալու ժամանակ:	1.1. Ցատկոտում է մեկ ոտքի վրա առնվազն 5 անգամ:	1.1.1. Նույն ոտքով ցատկում է հատակի վրա կողք կողքի նկարված 5-6 քառակուսիների մեջ:
		1.1.2. Մեկ ոտքի վրա ցատկոտելով պտտվում է տեղում:
	1.2. Ցատկում է գետնից 15 սմ բարձրության վրայից՝ ոտքերը միասին:	1.2.1. Բակում երեխաների հետ խաղալիս ցատկում է պարանի վրայով:
	1.3. Կանգնում է մեկ ոտքի վրա առնվազն 10 վայրկյան:	1.3.1. Մասնակցում է «արագիլներ» խաղին և կանգնում մեկ ոտքի վրա ուսուցչի հրահանգով:
	1.4. Կարող է հաղթահարել 50-60 սմ բարձրության արգելքը:	1.4.1. Խաղահրապարակում մագլցում է խաղաբլրակի վրա:
	1.5. Քայլում է ոտնաթաթերը դնելով կրունկ-թաթ հաջորդականությամբ:	
	1.6. Հատակից առարկան վերցնելու համար կռանում է՝ չծալելով ծնկները:	
	1.7. Ինքնուրույն բարձրանում և իջնում է աստիճաններով:	1.7.1. Աստիճաններով բարձրանալիս չի բռնում մոր ձեռքից կամ բազրիքից, իսկ յուրաքանչյուր աստիճանին դնում է մեկ ոտք:
	1.8. Վարում է եռանիվ հեծանիվ վարժ կերպով:	1.8.1. Տանը վարում է հեծանիվը՝ շրջանցելով անկյուններն ու խոչընդոտները (աթոռ, սեղան):
		1.8.2. Բակում հեծանիվը վարում է ողջ խաղահրապարակով՝ շենքի կամ ավտոտնակի շուրջը:
2. Երեխան մասնակցում է գնդակով տարբեր խաղերի:	2.1. Բռնում է գնդակը նախաբազուկներով՝ արմունկները ծալված վիճակում:	2.1.1. Երեխաների հետ խաղալիս «գրկում է» իրեն նետված գնդակը՝ այն ամուր սեղմելով կրծքին:
	2.2. Գնդակը հարվածում է գետնին, այնուհետև բռնում երկու ձեռքով:	
	2.3. Գնդակը նետում է վեր և բռնում երկու ձեռքով:	
	2.4. Կատարելով մեկ քայլ դեպի առաջ և շրջելով իրանը՝ նետում է գնդակը:	2.4.1. Երեխաները շարք են կանգնում և հերթով գնդակը նետում դեպի պատը:

Նուրբ (մանր) շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան ցուցաբերում է ձեռքի և մատների շարժումների կառավարման հմտություններ:	1.1. Կառուցում է 10 և ավելի կտորներից բաղկացած շինություններ կառուցողական առարկաներով:	1.1.1. Կառուցում է աշտարակ խորանարդիկներով:
		1.1.2. Օրինակը տեսնելով՝ կառուցում է 6 խորանարդիկներից կազմված բրգաձև աշտարակ (հիմքում՝ 3, վրան՝ 2 և 1):
		1.1.3. Մի քանի փորձից հետո կրկնօրինակելով կառուցում է 10 խորանարդիկներից կազմված բրգաձև աշտարակ (հիմքում՝ 4, վրան՝ 3, 2 և 1):
		1.1.4. Օրինակը տեսնելով՝ կառուցում է 5 խորանարդիկներից կամուրջ (երկուական սյուն 2 խորանարդիկ-ներից, վրան՝ 1 հատ):
	1.2. Աշխատում է մանր առարկաներով:	1.2.1. Հավաքում է վզնոց միջին կամ փոքր չափսի ուլունքներով:
2. Երեխան ցուցաբերում է գրի պարզագույն հմտություններ և նկարչական հմտություններ:	2.1. Արտանկարում է տառեր և թվեր, որոշ երկրաչափական պատկերներ, մարմնի մասեր:	2.1.1. Գրում է ճանաչելի (ընթեռնելի) որոշ թվեր կամ տառեր:
		2.1.2. Փորձում է արտանկարել 4 տառից բաղկացած բառ (անուն)՝ օգտագործելով թղթի ամբողջ մակերեսը:
		2.1.3. Ըստ օրինակի նկարում է քառակուսի, եռանկյունի՝անկյունները կլորացնելով:
	2.2. Նկարում է հասկանալի նկարներ (բավականին մանրամասնորեն) ըստ հրահանգի կամ ինքնաբերաբար:	2.2.1. «Ես արև եմ նկարում»:
		2.2.2. Երբ խնդրում են տուն նկարել, երեխան նկարում է տանիք, դռներ, պատուհաններ, ծխնելույզ:
		2.2.3. Նկարում է մարդ, որն ունի գլուխ, աչքեր, քիթ, բերան, մարմին և վերջույթներ, երբեմն նաև մատներ:

Նուրբ (մանր) շարժումներ		
Չափորոշիչ	Ցուցանիշ	Օրինակ
3. Ցուցաբերում է ծեփելու հմտություններ:	3.1. Ծեփում է ծանոթ առարկաներ:	3.1.1. Ծեփում է ձնեմարդ՝ առանձին մասերն իրար կպցնելով:
4. Երեխան ցուցաբերում է մկրատով կտրտելու հմտություններ:	4.1. Կտրտում է (ոչ ճշգրիտ) մկրատով՝ նախօրոք գծված ուղիղ կամ կոր գծերով:	4.1.1. Կտրտում է գունավոր թղթերից ժապավեններ՝ տոնածառը զարդարելու համար:
		4.1.2. Կանաչ թուղթը կտրելով ձևում է մի երիզ, որը նկարի վրա կարող է ծառայել որպես «խոտային ծածկույթ»:
		4.1.3. Պատրաստում է պարզ ապլիկացիաներ (օրինակ՝ տուն) շրջանակներից, քառակուսիներից, եռանկյունիներից:
5. Երեխան ցուցաբերում է ինքնասպասարկման որոշ հմտություններ:	5.1. Հագնվելիս և հանվելիս կոճկում և արձակում է կոճակները, հագուստի շղթաները:	5.1.1. Առանց օգնության հագնում և հանում է բաճկոնը, տաբատը:
		5.1.2. Կոճկում է բաճկոնի, վերնաշապիկի կոճակները:
	5.2. Ուտելիս օգտվում է սպասքից:	5.2.1. Աղցանն առանց դժվարության ուտում է պատառաքաղով:
		5.2.2. Դանակով կարագը և ջեմը քսում է հացին:

4-5 տարեկան

Խոսքի և հաղորդակցման զարգացում

Բանավոր խոսք		
Խոսքի ընկալում և օգտագործում		
Հատորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան ընկալում է իրեն ուղղված ուրիշի բանավոր խոսքը:	1.1. Կատարում է մեծահասակների 3-4 քայլից բաղկացած հրահանգները:	1.1.1. Ըստ հրահանգի վերցնում է մատիտները, նկարում ծաղիկ և փակցնում հատկացված տեղում:
	1.2. Ավարտում է նախադասության միտքը:	1.2.1. Մայրն ասում է. «Դու դեռ չորս տարեկան ես: Երբ դառնաս վեց տարեկան...», երեխան միտքը շարունակում է՝ ասելով «դպրոց կգնամ»:
		1.2.2. Տատիկն ասում է. «Հիմա ձմեռ է, և ծաղիկները դեռ դուրս չեն եկել: Երբ օրերը տաքանան...», երեխան շարունակում է. «ձյունը կհալվի», կամ՝ «ծաղիկները հողի միջից դուրս կգան», կամ՝ «մենք կգնանք ծաղիկ հավաքելու» և այլն:
	1.3. Վերապատմում է (ընթերցված, ռադիոյով կամ ձայնագրությամբ) լսած պատմությունը/հեքիաթը:	1.3.1. «Մայրիկ, այսօր ընկեր Անահիտը մեզ արջուկների մասին հեքիաթը պատմեց...» ու պատմում է այն մի քանի նախադասությամբ:
2. Երեխան բանավոր արտահայտում է իր մտքերն ու կարծիքը, զգացողություններն ու զգացմունքները:	2.1. Հարցերին պատասխանելիս օգտագործում է ընդարձակ նախադասություններ:	2.1.1. «Այսօր ես ուրախացել եմ, որովհետև քույրիկիս ծննդյան օրն է, տորթ ենք ուտելու»:
	2.2. Պատմում է սեփական փորձառության մասին՝ նշելով մի քանի հաջորդական դեպքեր:	2.2.1. Երեկ տատիկս ու պապիկս ինձ տարան կենդանաբանական այգի, իսկ հետո գնացինք սրճարան պաղպաղակ ուտելու:
	2.3. Երեք-չորս նկարների միջոցով կազմում է փոքրիկ պատմվածք:	2.3.1. Իրավիճակային պարզ քարտերը դասավորում է ճիշտ հերթականությամբ և հորինում պատմություն:
	2.4. Բառերով արտահայտում է իր նախասիրությունները:	2.4.1. «Որ մեծանամ, պիտի բժիշկ դառնամ ու բոլորին բուժեմ»:
		2.4.2. «Ես էլ եմ ուզում հայրիկի նման մեքենա վարել»:
	2.5. Պատմում է իր զգացմունքների/ զգացողությունների մասին՝ հիմնավորելով դրանք:	2.5.1. Ես այսօր տխրել էի, որովհետև հեծանիվս կոտրվել էր:
		2.5.1. «Ես այնքան էի ուրախացել, որ հայրիկս հեծանիվ էր բերել ինձ համար»:

Խոսքի հնչյունաբանական և քերականական իմացություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան ճանաչում է մայրենի լեզվի հնչյունները և կարողանում է տարանջատել դրանք:	3.1. Վանկերը միացնելով կազմում է 2-3 վանկանի բառեր:	3.1.1. Մեծահասակն ասում է՝ քա-ղաք, իսկ երեխան վանկերը միացնելով ասում է՝ քաղաք:
	3.2. Կրկնում է առաջարկված բառերն ու բառակապակցությունները՝ ճիշտ արտաբերելով հնչյունները:	3.2.1. Օրինակ՝ ողջույն, զամբյուղ, պահարան, հեռուստացույց, խաղող, մանկապարտեզ և այլն:
	3.3. Գտնում է պարզագույն (միավանկ) հանգավորված բառեր:	3.3.1. Տուն - շուն, սուր - տուր:
4. Երեխան կազմում է բարդ նախադասություններ:	4.1. Խոսքում օգտագործում է համադասական նախադասություններ:	4.1.1. «Ես պիտի հագնեմ սիրուն շորիկս և գնամ տիկնիկային թատրոն»:
5. Երեխան ճիշտ օգտագործում է խոսքի տարբեր մասեր:	5.1. Օգտագործում է բայի ճիշտ ժամանակային ձևերը:	5.1.1. «Հիմա խաղալիքներս կբերեմ ու միասին կխաղանք»:
	5.2. Բառերով արտահայտում է հարաբերություններ մարդկանց և առարկաների միջև:	5.2.1. «Այս կոշիկները հայրիկս է բերել ինձ համար»:

Հաղորդակցում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան հաջողությամբ հաղորդակցվում է մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ:	6.1. Մասնակցում է առօրյա խոսակցությանը՝ կապված անցյալում ինչ-որ տեղ կատարված դեպքերի և իրադարձությունների հետ:	6.1.1. «Ես էլ եմ տեսել, թե ոնց են գյուղում կովերին կթում»:
		6.1.2. «Մի քանի օր առաջ մեր դիմացի շենքում հրդեհ եղավ, ու մեքենաները ջուր էին փչում, որ կրակը հանգցնեն»:
	6.2. Մասնակցում է համատեղ պլաններ կազմելուն և խնդիրներ լուծելուն:	6.2.1. «Եկեք կարմիրները և կապույտները կենտրոնում դնենք, որ բոլորս էլ կարողանանք վերցնել»:
	6.3. Մասնակցում է խնդիրների խմբային քննարկմանը:	6.3.1. «Արմենը ճիշտ է ասում, լավ կլինի սկզբից մեծերը շարենք, հետո՝ փոքրերը»:
	6.4. Հասակակիցների հետ խաղալիս տալիս է իրավիճակին համապատասխան հարցեր:	6.4.1. «Որ նկարը բացես ու «խնձոր» լինի, ես կհաղթեմ, չէ՞»:
	6.5. Իրենից փոքր տարիքի երեխաների հետ խաղալիս փոխում է ձայնի ինտոնացիան:	6.5.1. Դիմելով փոքրիկ քույրիկին, ասում է. «Քույրիկ ջան, «կոշոները» հագիր, հա՞»:
	6.6. Իրենից փոքր տարիքի երեխաների հետ խաղալիս օգտագործում պարզ նախադասություններ:	6.6.1. «Մանե ջան, դու տոպրակը բռնիր, լա՞վ»:
	6.7. Դերային խաղերի ժամանակ փոխում է ձայնի ինտոնացիան դերին համապատասխան:	6.7.1. Գայլի նման հաստացնում է ձայնը և ասում. «Ես քո տատիկն եմ, Կարմիր Գլխարկ»:

Գրավոր խոսք		
Հետաքրքրություն գրքերի և գրվածքի նկատմամբ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում գրքերի և ընթերցանության նկատմամբ:	7.1. Գիտի, որ գիրքն ունի վերնագիր:	7.1.1. Հարցնելու դեպքում, ցույց է տալիս, թե գրքի վրա որտեղ է գրված վերնագիրը. «Մ՛այ այստեղ գրված է, որ սա «Ծունն ու կատուն» է»:
	7.2. Գիրքը բռնում է ճիշտ ուղղությամբ, էջերը թերթում է սկզբից մինչև վերջ:	
	7.3. Պատկերազարդ գրքեր դիտելիս կամ հեքիաթ լսելիս մեկնաբանություններ է անում:	7.3.1. «Վա՛յ, տե՛ս, ճուտիկը ձվից դուրս եկավ»:
		7.3.2. «Ինչու՞ կկուն իր ձագին տվեց աղվեսին»:

Վաղ գրաճանաչություն

Ցուցանիշ	Տարր	Ցուցիչ
8. Երեխան հասկանում է գրավոր խոսքի հիմնական սկզբունքները:	8.1. Գիտի, որ տառը կարող է արտասանվել (կարդացվել):	8.1.1. Գրքի մեջ կարող է ցույց տալ ինչ-որ տառ և արտասանել ինչ-որ հնչյուն (պարտադիր չէ ճիշտ):
	8.2. Գիտի, որ խոսքը կարող է գրառվել:	8.2.1. Նայելով իր խզմզածին, բարձրաձայնում է իր «գրածը». «Ես պապիկին գրել եմ, որ ինձ համար նոր գնդակ առնի»:
	8.3. Ճանաչում է որոշ թվեր:	8.3.1. Գրվածքում ցույց է տալիս իրեն ծանոթ թվանշանները. «Սա 3-ն է»:
	8.4. Ճանաչում է շրջապատի գրվածքները (ցուցանակներ, լոգոներ (տարբերանշաններ) և այլն):	8.4.1. Տեսնելով մանկական սրճարանի տարբերանշանը, առաջարկում է մտնել այնտեղ:
	8.5. Գիտի և ճանաչում է շրջապատի գրաֆիկական սիմվոլները:	8.5.1. Փողոցում տարբերում է տաքսու նշանով մեքենաները և ասում. «Մայրիկ, արի այն դեղին տաքսին նստենք»:
		8.5.2. Հասարակական վայրերում տարբերում է կանանց և տղամարդկանց զուգարանների նշանները:

4-5 տարեկան Խնագիկյան դրդում

Մտածողություն և տրամաբանություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները:	1.1. Նկարագրում է առարկան՝ անվանելով առավել բնորոշ հատկանիշները (գույն, ձև, չափ):	1.1.1. «Տո՛ր ինձ մեծ կարմիր գնդակը»:
	1.2. Համեմատում է առարկաներն ըստ գույնի, չափի, ձևի և այլ տարբեր հատկանիշների:	1.2.1. «Իմ գուլպաները կապույտ են, իսկ Վարդանինը՝ սպիտակ»:
		1.2.2. «Իմ մեքենան ծանր է, իսկ Արամինը՝ թեթև»:
	1.3. Տրամաբանական կապ է հաստատում երկու հասկացությունների միջև:	1.3.1. «Տերևները թափվում են, քանի որ աշուն է»:
	1.4. Համեմատում է առարկաները՝ օգտագործելով համեմատական աստիճանը. «ավելի մեծ է», «ավելի բարձր է», «ավելի հեռու է», «ավելի երկար է», «ավելի շատ է»:	1.4.1. Երբ տեսնում է ափսեների մեջ դրված տարբեր քանակի խնձորները, ասում է. «Այս ափսեի մեջ ավելի շատ խնձորներ կան»:
		1.4.2. Տեսնելով ուրիշ երեխայի գնդակը, ասում է. «Իմը ավելի մեծ է»:
		1.4.3. «Արմենը գնդակը ավելի հեռու նետեց»:
2. Երեխան գտնում է տարբեր խնդիրների լուծումներ:	2.1. Խաղի ժամանակ առաջարկում է պակասող առարկան փոխարինել այլ առարկայով:	2.1.1. Աթոռը օգտագործում է որպես տնակ:
		2.1.2. Սեղանի ծածկոցը օգտագործում է որպես զգեստ:
	2.2. Մեծահասակից օգնություն է խնդրում:	2.2.1. «Հայրի՛կ, ի՞նչ անեմ, որ աշտարակը չփլվի»:

Ստաձողություն և տրամաբանություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառա-հետևանքային կապերը:	3.1. Կարողանում է բացատրել պարզ իրողությունների պատճառները:	3.1.1. «Քույրիկը ուրախացել է, որովհետև մայրիկը տիկնիկ է գնել»:
		3.1.2. «Ուժեղ քամուց ծառի ճյուղերը կոտրվել են»:
	3.2. Պատմում է պարզ սյուժետային նկար 4-5 պարզ նախադասություններով:	3.2.1. Պատմում է «Ծիտիկն ու լոշիկը» հեքիաթից կամ որևէ պատմվածքից առաջարկված նկարը:
	3.3. Դասավորում է նկարները ըստ սյուժեի:	3.3.1. Երբ առաջարկում են խառը դասավորությամբ 3 նկարների վրա պատկերված ծաղկած ծառ, մրգերով ծառ և տերևազուրկ ծառ, երեխան դասավորում է դրանք ճիշտ հաջորդականությամբ:
4. Երեխան կարողանում է ընդհանրացումներ անել:	4.1. Անվանում է առարկաների խումբը մեկ ընդհանուր բառով:	4.1.1. Տարբեր նկարներից առանձնացնում է կենդանիների (ծաղիկների, կահույքի, թռչունների և այլն) նկարները:
	4.2. Տարբերակում/նկատում է կենդանիների, բույսերի նմանությունները և տարբերությունները:	4.2.1. Տեսնելով շանն ու կատվին՝ ասում է, որ երկուսն էլ մորթի/պոչ ունեն:
		4.2.1. «Տե՛ս, վարդը փշեր ունի, իսկ կակաչը՝ չունի»:
5. Երեխան կարողանում է դասակարգել /տեսակավորել առարկաները:	5.1. Դասավորում է առարկաներն ըստ որևէ կոնկրետ հատկանիշի:	5.1.1. Մեծահասակի խնդրանքով դասավորում է խորանարդիկներն ըստ կարմիր և կապույտ գույների:
		5.1.2. Առանձնացնում է բոլոր շրջանաձև (կլոր) առարկաները:
		5.1.3. Դասավորում է բոլոր փափուկ խաղալիքները մահճակալի վրա:

Տարրական մաթեմատիկական գիտելիքներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան ցուցաբերում է հաշվի, թվերի, քանակի իմացություն:	6.1. Ճանաչում է որոշ թվանշաններ:	6.1.1. Սեղանին դրված թվանշաններով քարտերից անվանում իր իմացած թվերը:
	6.2. Անգիր հաշվում է մինչև 10-ը:	
	6.3. Հաշվելով տեղադրում է որոշակի քանակով առարկաներ՝ ըստ օրինակի:	6.3.1. Նայելով նկարին, նույն քանակով կոնֆետներ է դնում երկու ափսեների մեջ:
	6.4. Առարկաների խումբը բաժանում է երկու հավասար մասերի:	6.4.1. Մեծահասակի խնդրանքով խորանադիկները բաժանում է հավասար մասերի (2-2, 3-3):
	6.5. Ավելի փոքր կույտին ավելացնում է առարկաների պակասող քանակը և հաստատում հավասարություն:	6.5.1. 3 և 5 խորանարդիկներ պարունակող կույտերում կատարում է փոփոխություն և հավասարեցնում է կույտերը՝ յուրաքանչյուրում դնելով չորսական խորանարդիկ:
	6.6. Երեխան գիտի թիվ-քանակ հարաբերությունը:	6.6.1. Երբ ասում են «Տուր 2 կարմիր մատիտ և 3 կապույտ մատիտ», ճշտորեն կատարում է հրահանգը:
	6.7. Կրկնօրինակում և շարունակում է պարզ օրինաչափությունները:	6.7.1. Կրկնում է մեծահասակի ցույց տված 2-3 հաջորդական շարժումները:
	6.8. Լուծում է պարզ մաթեմատիկական խնդիրներ:	6.8.1. Երբ ասում են «Եթե երեք ճնճղուկից, մեկը թռչի, քանի՞սը կմնա», երեխան ասում է՝ երկուսը:

Տարրական մաթեմատիկական գիտելիքներ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան ունի մեծության, չափի, ձևի մասին գիտելիքներ:	7.1. Դասավորում է առարկաները ըստ չափի:	7.1. Խաղալիս ասում է. «Սրանք մեծ մեքենաներն են, իսկ սրանք՝ փոքր»:
	7.2. Անվանում է առնվազն 3-4 երկրաչափական պատկեր (եռանկյունի, շրջան, ուղղանկյուն, քառակուսի):	7.2.1. Արևին նայելով ասում է. «Արևը շրջանի նման է» կամ «Արևը կլոր է»: Անվանում է թղթի վրա պատկերված եռանկյունը, քառակուսին:
	7.3. Տարբերում է 3-4 երկրաչափական պատկերներ (եռանկյունի, շրջան, ուղղանկյուն, քառակուսի):	7.3.1. «Մեր սեղանը ուղղանկյուն է»:
	7.4. Իրեն շրջապատող առարկաների և բնության մեջ ճանաչում է երկրաչափական պատկերները:	7.4.1. «Ես ուզում եմ նստել մայրիկի բարձր աթոռին, որովհետև իմ աթոռը շատ ցածր է»:
	7.5. Համեմատում է առարկաները ըստ բարձրության, երկարության, լայնության, հաստության:	7.5.1. «Քո պարանը բարակ է, իսկ իմը՝ հաստ»:
	7.6. Կատարում է մեծացնելու և փոքրացնելու գործողություններ:	7.6.1. Մեծահասակի խնդրանքով փոքրացնում է պլաստիլինից սարքած գնդակը:
8. Երեխան գիտի, ճանաչում է գույները:	8.1. Ընտրություն է կատարում գույների միջև:	8.1.1. «Ես սև տաբատը չեմ ուզում հագնել, կապույտ ջինսն ավելի լավ է»:
	8.2. Նկարելիս օգտագործում է տարբեր գույներ՝ կարմիր, դեղին, կանաչ, կապույտ, սպիտակ, սև, շագանակագույն:	8.2.1. «Երկինքը կներկեմ կապույտ, արևը՝ դեղին, իսկ խոտը՝ կանաչ»:

Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
9. Երեխան ունի գիտելիքներ և իմացություն տարածության մեջ առարկաների դիրքի վերաբերյալ և կարողանում է կողմնորոշվել տարածության մեջ:	9.1. Տարբերում է «մոտ-հեռու», «առաջ-հետ», «վերև-ներքև» հասկացությունները:	9.1.1. «Արմենը հեռու է կանգնած դարպասից»:
		9.1.2. «Այս ավտոմեքենան գնում է առջևից, իսկ մյուսը՝ հետևից»:
10. Երեխան կողմնորոշվում է ժամանակի մեջ:	10.1. Թվարկում է տվյալ օրվա (առավոտյան, երեկոյան) ընթացքում կատարվածը:	10.1.1. «Առավոտյան մայրիկի հետ գնացի կենդանաբանական այգի, հետո՝ տատիկենց տուն»:

Ուշադրություն, հիշողություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
11. Երեխան դրսևորում է ուշադրության տեղափոխելիություն, կենտրոնացում և պահպանում:	11.1. Ուշադրությունը 15-20 րոպե կենտրոնացնում է առաջարկվող գործողության վրա:	11.1.1. Պատմություն է պատմում 5-10 րոպե անընդմեջ:
		11.1.2. Երեխան 15-20 րոպե խաղ է խաղում:
	11.2. Ընդհատում է խաղը, կատարում է այլ գործողություն և այնուհետև կրկին շարունակում է խաղը:	11.2.1. Խաղի ընթացքում մայրիկը խոհանոցից խնդրում է բերել հեռախոսի խոսափողը: Երեխան կատարում է մայրիկի խնդրանքը և հետո շարունակում է խաղը:
12. Երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա:	12.1. Վերարտադրում է փոքրիկ պատմվածքներ, հեքիաթներ:	12.1.1. Պատմում է հատվածներ «Կարմիր գլխարկը», «Պապն ու շաղգամը» և այլ հեքիաթներից:
	12.2. Մեծահասակի ասելուց հետո կրկնում է բանաստեղծության քառյակներ, երգեր:	
	12.3. Պատմում է իր հետ կատարված իրադարձությունը:	12.3.1. Ընկերոջ տուն այցելելուց հետո պատմում է, թե ինչ խաղեր են խաղացել:

Երևակայություն և ստեղծագործական մտածողություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Ցիկնակ
13. Երեխան փորձում է աշխատել տարբեր նյութերով:	13.1. Պատրաստում է պարզ առարկաներ խմորից, պլաստիլինից, թղթից:	13.1.1. Պատրաստում է ձնեմարդ պլաստիլինից կամ խմորից:
14. Երեխան սկսում է հասկանալ և գնահատել արվեստը:	14.1. Կրկնօրինակում է ուրիշ երեխաների պարային շարժումները:	14.1.1. Նայում և ձեռքերը շարժում է՝ հայկական պար պարող երեխաներին նմանակելով:
	14.2. Ուշադիր լսում է/դիտում է տիկնիկային ներկայացումներ, մանկական հաղորդումներ:	14.2.1. Դահլիճում հանգիստ նստած դիտում է տիկնիկային ներկայացումը:
15. Երեխան արվեստի միջոցով արտահայտում է սեփական գիտելիքները, մտքերը և զգացմունքները:	15.1. Նկարում է տարբեր պատկերներ, փորձելով դրանք նմանեցնել իրականին:	15.1.1. Նկարում է մարդ ոչ լրիվ մանրամասներով:
	15.2. Երաժշտություն լսելիս կատարում է շարժումներ և/կամ ձայնակցում հնչող մեղեդուն՝ ասելով, թե ով է երգում:	

Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
16. Երեխան ունի գիտելիքներ (տեղեկացված է) իր անձի, սոցիալական դերերի, հարաբերությունների մասին:	16.1. Գիտի ծնողների անուն ազգանունը:	16.1.1. Իմ մայրիկի ազգանունը Գրիգորյան է, իսկ հայրիկինս՝ Սարգսյան:
	16.2. Գիտի իր հասցեն:	
	16.3. Ճանաչում է իրեն ծանոթ փողոցները:	16.3.1. Տանը մոտենալիս անվանում է թաղամասը, փողոցը, որտեղ ինքն ապրում է:
17. Երեխան ունի գիտելիքներ շրջապատող միջավայրի և բնության վերաբերյալ:	17.1. Տարբերում է բնության երևույթները:	17.1.1. «Մայրիկ, էլ անձրև չի գալիս, բայց շատ ուժեղ քամի է»:
	17.2. Թվարկում է տարվա եղանակները՝ երբեմն շփոթելով հերթականությունը:	
	17.3. Գիտի և անվանում է որոշ վայրի և ընտանի կենդանիներ:	17.3.1. «Ի՜նչ սիրուն ձի է»:
		17.3.2. «Վագրը սուր ատամներ ունի»:
18. Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունը և փոխկապակցվածությունը:	18.2. Նկարագրում է սեզոնային փոփոխությունները:	18.2.1. «Աշունը եկավ և մեր այգու ծառերը դեղնեցին»:
19. Երեխան ճանաչում և կատարում է մանկական ստեղծագործություններ:	19.1. Ասում է լսած երգի կամ պարի անվանումը:	19.1.1. «Աղջիկները «Ծաղկեփունջ» պարն են պարում»:
	19.2. Կատարում է մանկական երգեր և պարեր:	
	19.3. Թվարկում է մանկական հեքիաթներ/պատմվածքներ:	
	19.4. Պատմում է մանկական հեքիաթներ/ պատմվածքներ:	
	19.5. Արձագանքում է ծանոթ հեքիաթի կերպարները տեսնելիս:	19.5.1. Հեռուստացույցով մուլտեր դիտելիս թվարկում է գլխավոր «հերոսներին». «Պապիկ, սա «Կարմիր գլխարկի» գայլն է»:
20. Երեխան գիտի իր ազգային մշակույթը:	20.1. Երեխան խաղում է ազգային շարժուն խաղեր:	
	20.2. Ճանաչում է ազգային տարազի որոշ տարրեր:	
	20.3. Ճանաչում է ազգային ճաշատեսակները:	
	20.4. Ճանաչում է ազգային զարդանախշերի որոշ տարրեր:	

4-5 տարեկան

Սոցիալական, հուզական և անձնային զարգացում

Սոցիալական զարգացում

Փոխհարաբերություններ շրջապատի հետ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հեշտությամբ շփվում է ծանոթ մեծահասակների հետ:	1.1. Ներգրավվում է խոսակցության մեջ:	1.1.1. Պատասխանում է մեծահասակի «ինչպե՞ս ես» հարցին և ինքն էլ իր հերթին հարցնում է. «Դու ինչպե՞ս ես»:
		1.1.2. Պատմում է, երբ մեծահասակը հարցնում է, թե ում հետ է խաղացել խաղահրապարակում:
2. Երեխան ենթարկվում է մեծահասակների հետ շփման ընդունված նորմերին:	2.1. Մեծահասակի ուշադրությունը գրավում է համապատասխան գործողությունների կամ բառերի միջոցով:	2.1.1. Դաստիարակին հարց տալու համար բարձրացնում է ձեռքը:
		2.1.2. Դիմում է պապիկին՝ ասելով. «Խնդրում եմ օգնիր ինձ այս խաղը դարակից հանել»:

Փոխհարաբերություններ հասակակիցների հետ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան հեշտությամբ շփվում է իր հասակակիցների հետ:	3.1. Առաջարկում է իր օգնությունը ուրիշ երեխայի (երեխաների):	3.1.1. «Ուզո՞ւմ ես օգնեմ քեզ վերարկուդ կոճկել»:
	3.2. Ընդունում է հասակակիցների օգնությունը:	3.2.1. «Այո, լավ կլինի, որ դու նկարես, իսկ ես միայն գունազարդեմ»:
		3.2.2. «Դե լավ, ճիշտ ես ասում: Դու օգնիր, որ թղթերը արագ կտրատենք»:
		3.2.3. «Արմեն, կօգնե՞ս ինձ այս սեղանը մի կողմ դնենք»:
	3.3. Ունի ընկերներ տարբեր շրջապատներում (մանկապարտեզում, բակում և այլն):	3.3.1. Հաճույքով է գնում մանկապարտեզ իր ընկերներին հանդիպելու համար:
		3.3.2. Զբոսանքի գնալիս տնից խաղալիք է վերցնում ընկերոջ համար:
		3.3.3. «Մայրիկ, գնանք քեռու տուն, ես ուզում եմ իմ եղբայրների հետ խաղալ»:
	3.4. Ունի առնվազն մեկ մոտ ընկեր:	3.4.1. «Այս մատիտը կտամ Լիլիթին, նա իմ ընկերուհին է»:
		3.4.2. «Լիլի՛թ, արի՛ միասին խաղանք իմ տիկնիկով»:

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան մասնակցում է խմբային աշխատանքների և խաղերի:	4.1. Մասնակցում է մեծ և փոքր խմբերով կազմակերպված 20-25 րոպե տևողությամբ աշխատանքներին:	4.1.1. Մյուս երեխաների հետ միասին լսում է ընթերցվող հեքիաթը և պատասխանում հարցերին:
		4.1.2. Կառուցում է շինություններ 3-4 երեխաների հետ միասին:
		4.1.3. Մյուս երեխաների հետ միասին մասնակցում է առավոտյան հանդիպմանը:
	4.2. Ստեղծում և խաղում է դերային խաղեր:	4.2.1. Խաղում է «բժիշկ-բժիշկ» խաղը, որի ժամանակ երեխաներից մեկը «հիվանդանում է», բժիշկը այցելում է տուն, «հիվանդին» տանում են «հիվանդանոց», «բուժում են», և նա վերադառնում է տուն:
	4.3. Մասնակցում է պարզ կանոններով խաղերի:	4.3.1. Խաղում է կենդանիների պատկերներով լոտո 3-4 երեխաների հետ միասին:
	4.4. Ենթարկվում է հաստատված կամ նախապես քննարկված կանոններին:	4.4.1. Նկարելուց հետո հավաքում է ներկերը, վրձինները:
		4.4.2. Խաղահրապարակում սպասում է իր հերթին՝ ճոճանակով ճոճվելու համար:
		4.4.3. Քնելուց առաջ դասավորում է իր հագուստը:
		4.4.4. Մանկապարտեզում օգնում է դաստիարակի օգնականին խոհանոցից բերել հացը:

Սոցիալական վարք

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան համագործակցում է հասակակիցների հետ:	5.1. Քննարկում է խաղի հետ կապված գաղափարներ:	5.1.1. Լևոնը առաջարկում է միասին գնացք կառուցել: Արմենն ասում է. «Եկեք աթոռներից կառուցենք, որ մեծ ստացվի: Համաձայն եք»:
	5.2. Իր խաղալիքները և նյութերը տալիս է ուրիշներին:	5.2.1. «Արի՛ միասին նվագենք: Ես քեզ կտամ իմ թմբուկը, իսկ ինքս կիթառ կնվագեմ»:
	5.3. Խաղի մեջ կատարում է դերաբաշխումներ:	5.3.1. «Լիլի՛թ, արի՛ վարսավիրանոց խաղանք: Դու կլինես վարսավիրը, իսկ ես կգամ մազերս հարդարելու»:
6. Երեխան բանակցում է իր հասակակիցների հետ մեծահասակի օգնությամբ:	6.1. Ընկերոջն առաջարկում է պարզ ուղիներ/տարբերակներ կոնֆլիկտային իրավիճակը հարթելու համար:	6.1.1. «Եթե իմ մեքենան քեզ խանգարում է, եկ լեգոները տեղափոխենք հատակին»:
	6.2. Հետևում է մեծահասակի առաջարկած տարբերակին իր հասակակցի հետ առաջացած վեճը լուծելու համար:	6.2.1. Մեծահասակը ասում է. «Վիճելու փոխարեն ավելի լավ է խաղը նորից սկսեք»: Երեխան համաձայնում է:
		6.2.2. Մեծահասակի «Խաղալիքները բաժանեք» առաջարկին երեխաներից մեկը ասում է. «Տիկնիկը դու վերցրու, արջուկը՝ ես»:
	6.3. Կոնֆլիկտային իրավիճակին արձագանքում է խոսքի միջոցով:	6.3.1. «Ինձ դուր չի գալիս, երբ խլում ես խաղալիքը: Խնդրի՛ր՝ կտամ»:
	6.4. Կոնֆլիկտային իրավիճակում հաշվի է առնում ընկերոջ կարծիքը:	6.4.1. «Արի՛ հիմա քո ասածը անենք, հետո՝ իմը»:
		6.4.2. «Դու ճիշտ ես: Արի՛ երկուսս էլ ուրիշ խաղ խաղանք»:

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան ցուցաբերում է ինքնակառավարման հմտություններ:	7.1. Հետևում է վարքի ընդունված կանոններին:	7.1.1. Խմբասենյակ մտնելիս բարևում է բոլոր ներկաներին:
		7.1.2. Տանը ճաշից հետո մայրիկին շնորհակալություն է ասում:
		7.1.3. Փողոցն անցնելիս բռնում է մեծահասակի ձեռքը:
	7.2. Խնամքով է վերաբերվում խմբասենյակի և տան իրերին, խաղալիքներին:	7.2.1. Վերադասավորում է իր դարակը, տեղ հատկացնելով նոր խաղալիքների համար:
		7.2.2. Դաստիարակին ցույց տալով գրքի պատռված էջը, ասում է. «Ես կարող եմ սա նորոգել: Ես իմ գրքերը պապիկիս հետ եմ նորոգում»:
		7.2.3. Սրում է կոտրված մատիտները և զգույշ դնում է իրենց տեղը, որպեսզի չվնասվեն:
	7.3. Անցում է կատարում գործողության մի տեսակից մյուսին մեծահասակի հիշեցումով:	7.3.1. Ծնողի հիշեցումից հետո ավարտում է լեգոներով խաղը և գնում լվացվելու, որ ճաշի:
	7.4. Մասնակցում է օրվա ընթացիկ աշխատանքներին/գործողություններին	7.4.1. Օգնում է տանը և մանկապարտեզում սեղան պատրաստել և հավաքել:
		7.4.2. Մայրիկի խնդրանքով հագցնում է փոքր եղբոր գլխարկը զբոսանքի գնալուց առաջ:
8. Երեխան ցուցաբերում է իր տարիքին համապատասխան բարեկիրթ վարքագիծ մեծահասակների և հասակակիցների նկատմամբ:	8.1. Գործածում է բարեկիրթ բառեր մեծահասակի հիշեցումով:	8.1.1. Ոչ մտերիմ մեծահասակներին դիմում է «դուք»-ով:
		8.1.2. Պարբերաբար օգտագործում է «շնորհակալություն», «կարելի՞ է», «կներեք» բառերը և բառակապակցությունները:
	8.2. Դրսևորում է բարեկիրթ վարքագիծ մեծահասակի հիշեցումով:	8.2.1. Հիշեցումից հետո չի միջամտում մեծահասակի խոսքին:

Անձնային զարգացում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
9. Երեխան ցուցաբերում է իր անձի և ուրիշների մասին իմացություն:	9.1. Պատմում է իր մասին, նշելով մի քանի հիմնական առանձնահատկություններ՝ տարիքը, սեռը, մանկապարտեզ հաճախում է թե չի հաճախում, քույր/եղբայր ունի թե չունի:	9.1.1. «Ես գնում եմ մանկապարտեզ, իսկ քույրիկս՝ դպրոց: Ես 5 տարեկան եմ, իսկ նա՝ 7: Քույրիկս ինձնից մեծ է»:
	9.2. Գիտի իր ընտանիքի անդամների անունները և ազգանունները:	9.2.1. Իմ մայրիկի անունը Անուշ է, իսկ ազգանունը՝ Գրիգորյան:
	9.3. Գիտի իր մտերիմների անունները:	9.3.1. «Ես երկու պապիկ ունեմ: Մեկի անունը Բագրատ է, իսկ մյուսինը՝ Հակոբ»:
	9.4. Երեխան ունի նախասիրություններ:	9.4.1. «Ես սիրում եմ լեգոներով մեքենաներ կառուցել»:
		9.4.2. «Ես ուզում եմ արվեստի կենտրոնում աշխատել, դա իմ սիրած կենտրոնն է»:
		9.4.3. «Ես շատ եմ ուզում պլաստիլինից Ձմեռ պապիկ պատրաստել»:

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
10. Երեխան դրսևորում է ինքնավստահություն:	10.1. Ծրջապատից ակնկալում է դրական արձագանք իր ձեռքբերումների նկատմամբ:	10.1.1. «Տե՛ս, ինչ լավ տնակ եմ կառուցել»:
		10.1.2. Տխրում է, երբ չեն նկատում, որ ինքը լավ է արտասանել:
	10.2. Համեմատում է իր ներկա կարողությունները նախկինում ունեցածի հետ:	10.2.1. «Երբ փոքր էի, լավ չէի նկարում»:
		10.2.2. «Ես հիմա ավելի ուժեղ եմ դարձել: Տե՛ս, ինչ հեռու եմ նետում գնդակը»:
	10.3. Համեմատում է իր կարողությունները իր հասակակիցների կարողությունների հետ:	10.3.1. «Ես ավելի բարձր թռա, քան Նարեկը»:
	10.4. Հոժարակամ մասնակցում է խմբասենյակում կազմակերպվող բոլոր աշխատանքներին:	10.4.1. Դասավորում է խաղալիքները, աթոռները:
	10.5. Աշխատում է տարբեր նյութերով և խաղալիքներով:	10.5.1. «Մայրի՛կ, մի քիչ հացի խմոր տուր, որ տիկնիկիս համար ծննդյան օրվա տորթ պատրաստեմ»:
		10.5.2. «Ես հիմա ուզում եմ նապաստակը ջրաներկով ներկել»:
	10.6. Խմբասենյակում, բակում խաղում է բոլոր երեխաների հետ:	10.6.1. «Դե լավ, եթե ձեր թիմում տեղ չկա, ես կխաղամ Արամի և Հասմիկի հետ»:
	10.7. Արտահայտում է իր կարծիքը:	10.7.1. «Ես կարծում եմ, որ ավելի լավ կլինի, եթե այս նկարը այստեղ կախենք»:
11. Երեխան դրսևորում է ինքնուրույնություն մեծահասակի քաջալերանքով:	11.1. Առաջարկվող 3-4 տարբերակներից ընտրում է մեկը:	11.1.1. Ներկայացման դերերը բաշխելու ժամանակ ասում է. «Ես, ավելի լավ է, արջի դերը կատարեմ»:
	11.2. Ներգրավվում է իր համար նոր գործողության մեջ:	11.2.1. «Ես էլ կարող եմ այդ մանր մեխերը մուրճով մեխել»:
	11.3. Ծփվում է անծանոթ մարդկանց հետ:	11.3.1. Որևէ նոր տեղ հյուր գնալիս սկսում է խաղալ այդ տան երեխաների հետ:
	11.4. Համաձայնում է կատարել իր համար դժվար առաջադրանքը մեծահասակի օգնությամբ:	11.4.1. «Լավ, եթե դու իմ կողքին նստես, ես կհավաքեմ հայրիկի գնած նոր գլուխկոտրուկը»:

Հուզական զարգացում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
12. Երեխան ճանաչում է հիմնական հույզերն ու զգացմունքները և իրավիճակին համապատասխան հույզեր է դրսևորում :	12.1. Անվանում է հիմնական հույզերը՝ ուրախություն, տխրություն, զայրույթ:	12.1.1. «Մայրիկս ժպտում է, ուրեմն ուրախ է»:
	12.2. Գիտի, թե ինչպիսի իրավիճակներում են հիմնական հույզերը դրսևորվում:	12.2.1. «Իմ ընկեր Արմենն ուրախացել էր, որովհետև քույրիկ էր ունեցել»:
		12.2.2. «Կարենը տխրել էր, որովհետև նրա հեծանիվը կոտրվել էր»:
		12.2.3. «Հայրիկս զայրացել էր, որովհետև ես ուզում էի առանց լվացվելու գնալ քնելու»:
	12.3. Դեմքի արտահայտությամբ և ձայնի հնչերանգով տարբերակում է հիմնական հույզերը՝ ուրախություն, տխրություն, զայրույթ:	12.3.1. «Երբ իմ նկարած տնակը ցույց տվեցի, մայրիկս շատ ուրախացավ»:
		12.3.2. Նայում է գրքի նկարին և ասում. «Տատիկը տխրել է, որ թոռնիկը փչացրել է ժամացույցը»:
13. Երեխան դրսևորում է իրավիճակին համապատասխան հույզեր:	13.1. Ապրումակցում է ուրիշների հույզերին:	13.1.1. Հաճախ մոտենում է հիվանդ տատիկին, ասելով. «Տատիկ, դեղդ խմեցի՞ր. արդեն լա՞վ ես քեզ զգում»:
		13.1.2. Հարցնում է մայրիկին. «Քույրիկն ինչու՞ է լալիս, փորի՞կն է ցավում»:
		13.1.3. «Մայրիկը հիմա կգա, լաց մի՛ լինի»:
		13.1.4. Դիմում է խաղալիքը կորցնելու պատճառով տխրած ընկերոջը և ասում. «Ես երկու հատ ունեմ, մեկը կտամ քեզ»:

4-5 տարեկան

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության մասին

Ինքնասպասարկում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան դրսևորում է առօրյա կյանքի ինքնասպասարկման որոշ հմտություններ:	1.1. Հագնում և հանում է հագուստը:	1.1.1. Առավոտյան արթնանում և ինքնուրույն հագնվում է:
		1.1.2. Հանում է հագուստը և գնում է քնելու:
	1.2. Օգտվում է սննդամթերքից, անհրաժեշտ առարկաներից, սպասքից, նյութերից:	1.2.1. Նկարելիս ինքնուրույն վերցնում է իրեն անհրաժեշտ թղթերը, ներկերը, վրձինները, ջուրը բաժակի մեջ է լցնում:
		1.2.2. Ճաշելիս ինքնուրույն վերցնում է հացը, պանիրը և այլն:
		1.2.3. Ճաշասեղանի մոտ օգտվում է անձեռոցիկից:
	1.3. Երբ առաջարկում են, ընտրում է իր հագուստը:	1.3.1. «Ի՞նչ ես ուզում հագնել հանդեսին» հարցին պատասխանում է. «Հանդեսին ես կհագնեմ տատիկի գնած նոր զգեստը»:
	1.4. Կոճկում և արձակում է շղթաներ, կոճակներ և որոշ ճարմանդներ (կոշիկների քուղերը դեռևս չի կարողանում կապել):	1.4.1. Որևէ տեղ գնալիս կոճկում կամ արձակում է շղթան/կոճակները/ճարմանդը:
	1.5. Բավարարում է իր կենսական առաջնային կարիքները:	1.5.1. Ինքնուրույն օգտվում է զուգարանից:
		1.5.2. Մայրիկին ասում է. «Ես քաղցած եմ, ուզում եմ ճաշ ուտել»:
	1.6. Նեղ սափորից հեղուկը լցնում է առանց թափելու:	1.6.1. Սեղանի շուրջը նստած, հյութը լցնում է իր բաժակի մեջ:
	1.7. Մասնակցում է կրտսեր քրոջ կամ եղբոր խնամքին ուղղված աշխատանքներին:	1.7.1. «Մայրիկ, ես կօրորեմ Արփիին»:
		1.7.2. «Մայրիկ, ես հիմա կբերեմ Լիլիթի կաթի շիշը»:

Առողջության պահպանում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան հետևում է անձնական հիգիենայի կանոններին:	2.1. Գիտի, թե ինչպես օգտագործել սեփական հիգիենայի հետ կապված պարագաները և օգտագործում է դրանք (խոզանակը, մածուկը, բերանը ողողելու բաժակը, շամպունը, օճառը, սանրը և այլն):	2.1.1. Մեծահասակի հսկողությամբ (հրահանգներով) մաքրում է ատամները:
		2.1.2. Ինքնուրույն հարդարում է մազերը:
		2.1.3. «Մազերս կլվանամ իմ շամպունով, որ աչքերս չմրմռան»:
3. Երեխան հետևում է առողջության պահպանման հիմնական կանոններին հազվադեպ հիշեցումով:	3.1. Կատարում է առողջության պահպանմանն ուղղված հիմնական գործողություններ (լվանում և չորացնում է ձեռքերը և երեսը, մաքրում է քիթը, հազալիս ձեռքով ծածկում է բերանը):	3.1.1. Բակից վերադառնալիս, զուգարանից օգտվելուց հետո, ուտելուց առաջ և հետո համարյա միշտ լվանում և սրբում է ձեռքերը անձնական սրբիչով:
		3.1.2. Օգտագործում է անձեռոցիկ (թղթից թաշկինակ) քիթը մաքրելու համար և օգտագործելուց հետո այն նետում է աղբամանը:
4. Երեխան գիտակցում է սնվելու և ատամները առողջ պահելու միջև եղած կապը:	4.1. Կատարում է ատամների խնամքի հետ կապված գործողություններ:	4.1.1. Ուտելուց հետո ողողում է բերանը:
		4.1.2. Ուտելուց հետո լվանում է ատամները:

Անվտանգություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան հասկանում է անվտանգության հիմնական կանոնները և հազվադեպ հիշեցումով հետևում է դրանց:	5.1. Իր հասակակիցներին և մեծահասակներին տեղյակ է պահում, երբ նկատում է որևէ վտանգավոր վարքագիծ:	5.1.1. «Հայկը բարձրացել է սեղանին, հիմա վայր կընկնի»:
		5.1.2. «Վա՜յ, Կարենը հրում է Արմինեին: Նա Արմինեին ցած կգցի»:
	5.2. Կիրառում է իր հետ քննարկված անվտանգության որոշ ընդհանուր կանոններ:	5.2.1. Մկրատը և մատիտը պահում է սուր ծայրը դեպի ներքև՝ վնասվելուց խուսափելու համար:
		5.2.2. Փողոցն անցնելուց առաջ նայում է ձախ և աջ:
		5.2.3. Չի օգտագործում հատակին ընկած սնունդը:
		5.2.4. Առանց մեծահասակի ներկայության դեղերին ձեռք չի տալիս:
	5.3. Ենթադրում է, թե ինչ կարող է պատահել կանոններին չհետևելու դեպքում:	5.3.1. Փոքր եղբորը թույլ չի տալիս վերցնել սուր դանակը՝ ասելով. «Մի՛ վերցրու, մատդ կկտրես»:
		5.3.2. «Մայրիկ, թեյնիկը բռնիչով վերցրու, որ ձեռքդ չայրի»:

4-5 տարեկան

Սովորելու ակնկալվող վերարտադրության որակ

Հետաքրքրասիրություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հետաքրքրասիրություն է ցուցաբերում նոր բաներ սովորելու և նոր փորձառությունների նկատմամբ:	1.1. Հարցեր է տալիս տեղեկություններ ստանալու համար:	1.1.1. «Այս փայտիկը ինչի՞ համար է»:
		1.1.2. «Ինչպե՞ս է ձուկը ապրում ջրում»:
		1.1.3. «Ինչո՞ւ է լուսինը կլոր»:
		1.1.4. «Ինչպե՞ս է Սևանը սառչում»:
	1.2. Հետազոտում և փորձարկում է խաղերը և նյութերը:	1.2.1. «Պլաստիլինից ինչպե՞ս ծառ պատրաստեմ»:
		1.2.2. «Վա՛յ, ձյունը հալվեց, երբ տուն բերեցի: Ի՞նչ հետաքրքիր է»:
		1.2.3. «Մայրի՛կ, ցույց կտա՞ս, թե խմորն ինչպես են պատրաստում, ես էլ եմ ուզում պատրաստել»:
		1.2.4. «Երբ փափուկ խմորը չորացավ, դարձավ քարի նման»:
		1.2.5. Խառնում է ջրաներկի տարբեր գույներ՝ տեսնելու համար, թե ինչ գույն կստացվի:
	1.3. Հետաքրքրվում է, թե ուրիշները ինչպես և ինչու են ինչ-որ բաներ անում:	1.3.1. «Հայրիկ, մեքենան ինչպե՞ս է շարժվում»:
		1.3.2. «Արդուկն ինչո՞ւ է տաքանում»:
		1.3.3. «Տատի՛կ, ինչպե՞ս ես ոտքով կարի մեքենան աշխատեցնում»:
	1.4. Պարբերաբար խաղում է իրեն հետաքրքրող խաղերով:	1.4.1. Երբ առաջարկվում է խաղալ լեգոներով կամ գլուխկոտրուկ հավաքել, միշտ նախընտրում է լեգոներով խաղալը:

Նախաձեռնություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան նախաձեռնություն է ցուցաբերում:	2.1. Հասակակցին առաջարկում է խաղալ իր հետ:	2.1.1. «Կգա՞ս միասին տուն-տունիկ խաղանք»:
		2.1.2. «Արի՛ ավազով տուն կառուցենք»:
	2.2. Պատրաստակամություն է հայտնում մասնակցելու տարբեր խաղերի և առաջադրանքների:	2.2.1. «Ես էլ եմ ուզում հեծանիվ քշել սովորել»:
		2.2.2. «Իսկ ես կարող եմ ամանները հավաքել»:
	2.3. Մասնակցում է առօրյա անհրաժեշտ գործողություններին:	2.3.1. Ջրում է ծաղիկները, օգնում է հավաքել խաղալիքները, գետնին թափված թղթերը և այլն:
	2.4. Ընտրություն է կատարում առաջարկվող խաղերի, նյութերի միջև:	2.4.1. Մայրիկի/դաստիարակի առաջարկած խաղերից ընտրում է, թե ինչով է ուզում զբաղվել՝ խաղալ տիկնիկներով, գլուխկոտրուկ հավաքել, թե պատկերազարդ գիրք նայել:

Մասնակցություն և հետևողականություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան մասնակցում և հետևողականություն է ցուցաբերում իր տարիքին համապատասխան առաջադրանքների կատարման հարցում:	3.1. Մոտենում է խաղացող երեխաների խմբին և մասնակցում խաղին:	3.1.1. Տեսնելով, որ բակում երեխաները խաղում են գնդակով, ասում է. «Ես էլ եմ ուզում ձեզ հետ խաղալ»:
	3.2. Խաղալիս կենտրոնացնում է ուշադրությունը:	3.2.1. Շարունակում է հավաքել գլուխկոտրուկը, եթե նույնիսկ մեկ այլ երեխա իր կողքին մի աղմկոտ խաղ է սկսում խաղալ:
	3.3. Ձգտում է ավարտին հասցնել սկսած առաջադրանքը/խաղը:	3.3.1. «Մայրի՛կ, ուզում եմ տնակը հավաքել վերջացնել, ու միայն դրանից հետո գնալ քնելու»:
	3.4. Խաղի ժամանակ օգտագործում է զգայարանները:	3.4.1. «Այս ծաղիկը շատ լավ հոտ ունի»:
		3.4.2. «Կակտուսը ծակում է, հանկարծ ձեռք չտա՛ս»:
	3.5. Հետևում է 3 և ավելի քայլերից բաղկացած հրահանգներին:	3.5.1. Պապիկի խնդրանքով երեխան գնում է ննջարան, բաց է անում դարակը և ակնոցը բերում տալիս է պապիկին:

5 - 6 տարեկան

Շարժողական ոլորտ

Խոսքի և հաղորդակցման ոլորտ

Իմացական ոլորտ

Սոցիալական, հուզական և անձնային ոլորտ

Ինքնասպասարկման առողջության պահպանման և անվտանգության ոլորտ

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ

5-6 տարեկան
Շարժողական դրդում

Խոշոր շարժումներ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան քայլելիս, վազելիս, սողանցելիս, չորեքթաթ շարժվելիս, ցատկելիս կամ մագլցելիս դրսևորում է կոորդինացիայի, հավասարակշռության և վերահսկողության աճ:	1.1. Քայլում է կից քայլերով՝ առաջ և ետ, փակ աչքերով:	
	1.2. Քայլում է 30 աստիճան թեք հարթության վրայով վերև, ներքև:	
	1.3. Ուղիղ գծով գլորում է օղակը և վազքով հասնում նրան:	
	1.4.Կարողանում է պտտել օղակը:	
	1.5. Վազում է 10 մ՝ 2 - 3 անգամ ընդմիջումներով:	
	1.6. Սողում է 10 մ ոչ պակաս:	
	1.7. Սողում է օձաձև, կարողանում է շրջանցել առարկաները կամ անցնել դրանց միջով:	
	1.8. Սողում է առարկաների տակով:	
	1.9. Չորեքթաթ շարժվում է՝ գլխով գլորելով փչովի գնդակը:	
	1.10. Տեղում կանգնած ցատկում է՝ ձգտելով հասնել առարկային, որն իր վեր պարզած ձեռքից 25-30 սմ բարձրության վրա է գտնվում:	
	1.11. Զույգ ոտքերով ցատկում է՝ հաղթահարելով 25-30 սմ բարձրության առարկաներ:	
	1.12. Ցատկում է առաջ, հետ, աջ, ձախ, մի ոտքով, երկու ոտքով, վեր ու վար:	
	1.13. Մագլցում է ուղղահայաց մարմնամարզական պատով, ճոպանով:	
	1.14. Երկանիվ հեծանիվ է վարում:	
	1.15. Բակում մասնակցում է տարբեր շարժախաղերի և մրցախաղերի:	

Խոշոր շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան գնդակին հարվածելու, գնդակը բռնելու, նետելու ժամանակ դրսևորում է շարժումների կոորդինացիոն կարողությունների աճ:	2.1. Գնդակը մեկ ձեռքով հարվածում է հատակին կամ գետնին և բռնում՝ հերթափոխելով աջ և ձախ ձեռքերը:	
	2.2. Մի քանի անգամ հաջորդաբար գնդակով հարվածում է հատակին:	
	2.3. Ձեռքերով բռնում է իրեն նետված գնդակը:	
	2.1.4. Գնդակը նետում է ճիշտ ուղղությամբ:	
	2.5. Դիպուկ հարվածում է շարժվող գնդակին:	
	2.1.6. Ձեռքով նետում է գնդակը, հետո ոտքով հարվածում:	

Մանր /նուրբ/ շարժումներ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան կառուցողական մանր առարկաներից կառուցում է շինություններ:	3.1. Հավաքում է կառույցներ, շինություններ՝ ըստ օրինակի (նայելով նկարներին, լուսանկարներին) կամ ըստ նկարագրության:	3.1.1. Կառուցում կամ հավաքում է փողոց, կենդանաբանական այգի, կայարան:
		3.1.2. Թղթից ուլունք է պատրաստում:
		3.1.3. Հավաքում է 20-30 մանր մասերից բաղկացած գլուխկոտրուկը:
4. Երեխան ցուցաբերում է գրի տարրական հմտություններ:	4.1. Ճիշտ դիրքով բռնում է գրիչը/մատիտը և գրում է տառեր/բառեր:	4.1.1. Նկարի տակ փորձում է տպատառ գրել իր անունը:

Մանր /նուրբ/ շարժումներ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան ցուցաբերում է նկարչական հմտություններ:	5.1. Նկարում է մարդ՝ մարմնի հիմնական մասերով (գլուխ, աչքեր, քիթ, բերան, մարմին, վերջույթներ):	5.1.1. Նկարում է իր փոքրիկ քրոջը՝ պատկերելով նրա գլուխը, աչքերը, քիթը, բերանը, մարմինը, ձեռքերը և ոտքերը:
	5.2. Արտանկարում է տարբեր նկարներ:	5.2.1. Նկարում է նապաստակ՝ նայելով գրքում պատկերված նապաստակի նկարին:
	5.3. Նկարում է երևակայությամբ:	5.3.1. Կենդանաբանական այգի կատարած այցելության մասին պատմելուց հետո նկարում է այնտեղ տեսած կենդանիներին:
	5.4. Նկարում պատկերում է տարբեր առարկաներ՝ դրանք միավորելով ըստ բովանդակության:	5.4.1. Իր սենյակը պատկերելիս նկարում է այնտեղ տեղադրված առարկաները՝ կահույքը, գրքերը, խաղալիքները և այլն:
		5.4.2. Նկարում է հեքիաթի սյուժե, միջադեպ կյանքից:
	5.5. Ներկում և/կամ գունազարդում է տրված նկարները՝ դուրս չգալով պատկերների ուրվագծի սահմաններից:	5.5.1. Ջրաներկով, ֆլոմաստերով կամ մատիտով գունավորում է գունազարդման գրքում տրված կենդանիների պատկերները:
	5.6. Նրբագծում է պատկերը՝ չխախտելով ուրվագիծը:	5.6.1. Մատիտով նրբագծում է սափորի պատկերը:
6. Երեխան ցուցաբերում է ծեփելու հմտություններ:	6.1. Ծեփում է ծանոթ մարմիններ՝ կիրառելով ծեփի կառուցողական մեթոդը:	6.1.1. Ծեփում է կենդանիներ (օրինակ՝ կատու)՝ առանձին մասերը իրար կպցնելով / համակցելով:
7. Երեխան ցուցաբերում է մկրատով կտրատելու հմտություններ:	7.1. Մի քանի տակ ծալված թղթից կտրտում է նույնանման պատկերներ, երկրաչափական մարմիններ և այլն:	7.1.1. Չորստակ ծալված թղթից կտրում է քառակուսի և ստանում չորս պատկեր:
	7.2. Երկտակ ծալված թղթից կտրում է նախօրոք գծված իրար սիմետրիկ առարկաներ:	7.2.1. Ծալված թղթի վրա նկարված է եռանկյուն, կտրում է, ստանում երկու եռանկյուններ:
	7.3. Թղթից ստանում է տարբեր առարկաներ:	7.3.1. Թուղթը ծալելով պատրաստում է ինքնաթիռ, թռչուն, ծաղիկ, նավ և այլն:
	7.4. Կտրատում է ըստ ուրվագծի:	7.4.1. Կտրում է թղթի վրա ուրվագծված շնիկի պատկերը՝ չխախտելով ուրվագծի սահմանները:
8. Երեխան ցուցաբերում է ձեռքի մատների շարժումների կատարելագործված հմտություններ:	8.1. Կատարում է պարզ գործողություններ՝ օգտագործելով մատների ուժն ու կառավարելով շարժումները:	8.1.1. Ինքնուրույն կոճկում է կոճակները, բարձրացնում, իջեցնում է հագուստի շղթան, կապում կոշիկների քուղերը, կոճկում կոճգամները և այլն:
		8.1.2. Ավազը և ջուրը փոքր անոթից լցնում է մեծ անոթի մեջ:

5-6 տարեկան

Խոսքի և հաղորդակցման ոլորտ

Բանավոր խոսք		
Խոսքի ընկալում և օգտագործում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան լսածը օգտագործում է տարբեր նպատակներով:	1.1 Հասկանում և առանց լրացուցիչ հիշեցման հետևում է 3 քայլից բաղկացած հրահանգներին:	1.1.1. Խմբասենյակ մտնելիս ուսուցչուհին համապատասխան հրահանգներ է տալիս, որից հետո երեխան հանում է վերարկուն, փոխում կոշիկները և միանում է երեխաների խմբին:
	1.2 Լսում է իր շուրջը եղած խոսակցությունները և մասնակցում դրանց:	1.2.1. Հասկանում է, որ պետք է պատասխանել, երբ հարց է տրվում: Մյուսներին լսելուց հետո մասնակցում է խոսակցությանը: Կրկնում է պատմության, երգի, բանաստեղծության որոշ արտահայտություններ կամ նախադասություններ:
2.Ճանաչում է լեզվական հասկացությունները, գիտի դրանց իմաստը:	2.1. Հասկանում է տարածական հասկացությունները. հեռու, մոտիկ, բարձր, ցածր և այլն:	2.1.1. «Տատիկիս գյուղը շատ հեռու է Երևանից»:
	2.2. Հասկանում է ժամանակային հասկացությունները. առավոտ, կեսօր, երեկո, երեկ, այսօր:	2.2.1. «Երեկ հայրիկիս հետ գնացինք մանկական երկաթուղի և գնացք նստեցինք»:

Խոսքի ընկալում և օգտագործում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան ունի իր տարիքին համապատասխան բառապաշար:	3.1. Հասկանում և վերարտադրում է փոքրիկ պատմվածքը, հեքիաթը բանաստեղծությունը կամ նկարը:	3.1.1. Բառերի, նկարների և շարժումների միջոցով ներկայացնում է, թե ինչ պատահեց, երբ մկնիկը մտավ կոկոսի մեջ:
		3.1.2. Գրքի նկարներին նայելով՝ կարողանում է պատմել Հ. Թումանյանի «Ճամփորդները»:
	3.2. Կատարում է տրամաբանական կանխատեսումներ:	3.2.1. Պատմվածքի ընթերցանության ժամանակ իմաստալից պատասխան է տալիս մեծահասակի՝ «Քո կարծիքով ի՞նչ կկատարվի հետո» հարցին:
	3.3. Նայելով նկարին՝ տրված բառերով կազմում է նախադասություն:	3.3.1. «Այս նկարում երեխան կապում է կոշիկը, փուչիկ է փչում»:
	3.4. Նկարագրում է առարկաների և երևույթների նմանությունները և տարբերությունները:	3.4.1. Մեր տանը մի գիրք կա, որի նկարները շատ նման են այս գրքի նկարներին:
	3.5 Փորձում է կռահել անծանոթ բառի իմաստը:	3.5.1. Փորձում է կռահել «միջավայր» բառի իմաստը՝ ելնելով գրքի նկարներից և իրեն ծանոթ այլ բառերից:
	3.6. Բառերով արտահայտում է հարաբերությունները:	3.6.1. «Իմ քեռին մայրիկիս եղբայրն է»: «Քույրիկս ինձնից մեծ է»:
	3.7. Բառերով արտահայտում է իր զգացմունքները, հույզերը:	3.7.1. «Ես շատ ուրախացա, որ գայլը չկարողացավ ուտել երեք խոզուկներին»:
		3.7.2. «Այս հեքիաթը ինձ շատ տխրեցրեց»:

Հաղորդակցում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան խոսքը օգտագործում է հաղորդակցվելու համար:	4.1. Տեղեկություններ ստանալու համար տալիս է երբ, ինչպես, ինչու հարցերը և կարողանում է պատասխանել դրանց:	4.1.1. «Ինչու են արջերը ձմռանը քնում: Ձուկը ինչպես է շնչում ջրի տակ: Ձկները ինչ են ուտում: Ճատիկը կարող է թռչել, թե միայն նստում է թփին: Թիթեռը ինչ օգուտ է տալիս: Ինչու է խոտը դեղնում»:
	4.2. Նախաձեռնում է խոսակցություն հասակակիցների և մեծահասակների հետ:	4.2.1. «Կգաս միասին նավ կառուցենք: Հայրիկ, ինձ կբացատրես, թե ինչպես են նավերը ջրի վրա լողում»:
	4.3. Շշեղվելով թեմայից, մասնակցում է խոսակցությանը՝ սպասելով իր հերթին:	4.3.1. Թեմայի շրջանակներում հարցեր է տալիս իրեն հետաքրքրող բաների մասին՝ մյուսներին չընդհատելով:
	4.4. Արտահայտում է իր ունեցած գիտելիքները՝ կապելով նոր լսածի և սովորածի հետ:	4.4.1. Տրանսպորտի տեսակների մասին գրքի ընթերցումից հետո օրվա ընթացքում խորանարդիկներով գնացք է կառուցում:
	4.5. Մեկ նախադասության մեջ մեկտեղում է մի քանի միտք:	4.5.1. «Ես սիրում եմ կաթ խմել և կրեմով խմորեղեն ուտել: Հենց որ սեղանը պատրաստեմ, կարող ենք թեյել»: «Ես ուզում էի թղթից նավակ պատրաստել, բայց պարզվեց, որ կապույտ թուղթ չունեմ» և այլն:
	4.6. Հարցեր է տալիս անծանոթ բառերի իմաստը հասկանալու համար:	4.6.1. Ինչ է նշանակում «ջրափոս»:
	4.7. Սիրում է ամեն ինչ բացատրել:	4.7.1. «Ամպերը մռայլ են, ուրեմն անձրև կգա»: «Ես բաց գույնով ներկեցի, որ աղջիկը ավելի բարի ստացվի»:

Խոսքի քերականական և հնչյունաբանական իմացություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան դրսևորում է լեզվի տարբեր հնչյունների և քերականական հասկացությունների իմացություն:	5.1. Վանկերը միացնելով կազմում է բառեր (2-3 վանկանի բառեր):	5.1.1. Սկզբում վանկարկում է «Ար-մեն», ապա հստակ ասում՝ «Արմեն»:
	5.2. Թվարկում է բառեր, որոնք սկսվում են միևնույն հնչյունով:	5.2.1. Ծ-շուն, շվի, շախմատ և այլն:
	5.3. Որոշում է արտասանված բառերի առաջին հնչյունը:	5.3.1 «Ո՞ւմ անունն է սկսվում Դ տառով»: «Իմը»,- պատասխանում է Դավիթը:
	5.4. Կրկնում է առաջարկված բառերն ու բառակապակցությունները՝ ճիշտ արտաբերելով համապատասխան հնչյունները:	5.4.1. Կայտառ գետակ, ձնհալ և այլն:
	5.5. Հասկանում է հականիշները:	5.5.1. Օրինակ՝ շատ-քիչ, լցնել-թափել, գալ-գնալ, քաջ-վախկոտ:
	5.6. Հասկանում է որոշ հոմանիշներ:	5.6.1. Օրինակ՝ գեղեցիկ-սիրուն, նայել-տեսնել, մոտենալ-գալ, քաջ-անվախ:

Գրավոր խոսք		
Վաղ ընթերցանություն և հետաքրքրություն պատկերազարդ գրքերի նկատմամբ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում գրքերի և ընթերցանության նկատմամբ:	6.1. Լսում է ընթերցվող տարբեր պատմություններ և հեքիաթներ:	6.1.1. Երբ մեծահասակը սկսում է գիրք կարդալ, թողնում է մյուս խաղերը և հաճույքով մոտենում նրան:
	6.2. Պատմում է պատմություններ, որոնք ունեն սկիզբ, զարգացում և ավարտ:	6.2.1. Երեխան իր սիրած գիրքը պատմում է ընկերոջը՝ պատմությանը հերթով շրջելով համապատասխան էջերը:
	6.3. Տարբեր գործողություններ է կատարում գրքերի հետ:	6.3.1. Երեխան գիրքը բերում է և խնդրում, որ քնելուց առաջ իր համար կարդան:
		6.3.2. Նստում և թերթելով «կարդում է» գիրքը:
	6.4. Կանխագուշակում է, թե հետո ինչ կկատարվի պատմության մեջ:	6.4.1. Երեք արջերի հեքիաթը լսելով՝ ասում է. «Հիմա Մաշենկան կնստի փոքրիկ արջի աթոռին, և աթոռը կկոտրվի»:
	6.5. Կապեր/նմանություններ է գտնում իր և իրեն ծանոթ պատմությունների կերպարների միջև:	6.5.1. Գրքում հեծանվի նկար տեսնելով՝ ասում է. «Ես էլ հեծանիվ ունեմ, բայց իմը ավելի մեծ է և կարմիր գույնի է»:
	6.6. Կապեր/նմանություններ է գտնում նոր կարդացած և իրեն արդեն ծանոթ այլ պատմությունների կերպարների միջև:	6.6.1. «Կարմիր գլխարկի» գայլին փայտահատները պատժեցին, իսկ «Երեք խոզուկների» գայլը ինքը ընկավ բուխարու մեջ:
	6.7. Գրքում եղած նկարների օգնությամբ պատկերացում է կազմում, թե ինչի մասին է գիրքը:	6.7.1. Գրքի նկարները նայելով՝ ասում է. «Այս գիրքը երևի այծիկների մասին է»:
	6.8. Կարողանում է պատմվածքի կամ հեքիաթի հերոսներին դասակարգել ըստ կարևորության:	6.8.1. Մեկնաբանություններ է կատարում կերպարների վերաբերյալ և համապատասխան հարցեր տալիս: «Երեք խոզուկների» հեքիաթը լսելուց հետո ասում է. «Մեծ եղբայրը ավելի աշխատասեր է և համբերատար, քան մյուս երկուսը»:
	6.9. Ավարտին է հասցնում կիսատ պատմվածքը կամ հեքիաթը:	
	6.10. Ձևացնում է, թե կարդում է իր և ուրիշների համար:	6.10.1. Գիրքը բռնում է և նմանակելով «կարդում» պատմվածքը ուրիշի կամ ինքն իր համար:

Վաղ գրաճանաչություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան հասկանում է տպագիր խոսքի հիմնական սկզբունքները:	7.1. Հասկանում է, որ տպագիր խոսքը իմաստ է պարունակում:	7.1.1. Մայրիկը շնորհավորական բացիկ է ստացել: Երեխան հարցնում է. «Այնտեղ ի՞նչ է գրված»:
		7.1.2. Մեծահասակին խնդրում է նկարի տակ գրել իր հորինած պատմությունը:
	7.2. Հետևում է տպագիր խոսքին ձախից աջ, վերևից ներքև:	7.2.1. Ուսուցիչը երեխային խնդրում է ցույց տալ, թե որտեղից պետք է սկսել կարդալ պատմվածքը: Երեխան գրքի մեջ ցույց է տալիս ձախից աջ, վերևից ներքև և ձախ էջից անցնում է աջ էջ:
	7.3. Ճանաչում է տպատառերով գրված իր անունը:	7.3.1. «Այս նկարը ես եմ նկարել: Տե՛ս, այստեղ իմ անունն է գրված»: Կամ փոքրիկ թերթիկների միջից, որոնց վրա գրված է յուրաքանչյուր երեխայի անունը, գտնում է իր անունը պարունակող թերթիկը:
	7.4. Տպագիր տառերով փորձում է գրել իր անվան որոշ տառեր:	7.4.1. Նկարելուց հետո նկարի վրա փորձում է գրել իր անվան առաջին տառը:
	7.5. Միջավայրում որոշ ծանոթ տառեր և բառեր է գտնում:	7.5.1. Խանութի ցուցանակի վրա ճանաչում է որոշ տառեր:

5-6 տարեկան
Բնագիտական դրդում

Տրամաբանություն և մտածողություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան կարողանում է համեմատել, հետազոտել երևույթները, առարկաները:	1.1. Կարողանում է ասել երկու կենդանիների, առարկաների կամ երևույթների նմանություններն ու տարբերությունները:	1.1.1. Երեխան բացատրում է, թե ինչով է կատուն տարբերվում մկնիկից, ամառը՝ ձմռանից:
	1.2. Տարբերակում է առարկաները ըստ առնվազն երկու հատկանիշի:	1.2.1. «Ես ուզում եմ ավազի հետ խաղալ այն մեծ, կարմիր բահով»:
2. Երեխան գտնում է տարբեր խնդիրների լուծումներ:	2.1. Խմբում մասնակցում է առաջացած խնդիրների լուծմանը:	2.1.1. Խաղի ժամանակ մեքենաները չեն բավարարում, և երեխան առաջարկում է դոմինոյի դատարկ տուփը օգտագործել մեքենայի փոխարեն:
3. Երեխան կարողանում է գտնել օրինաչափությունները:	3.1. Կարողանում է առաջարկված 4 առարկաներից կամ դրանց նկարներից առանձնացնել մեկ ավելորդը՝ բացատրելով իր ընտրությունը:	3.1.1. Հասկանում է, որ տրված առարկաների շարքում՝ ինքնաթիռ, ավտոմեքենա, ժամացույց, շոգենավ, ավելորդը ժամացույցն է, որովհետև մյուս բոլորը տրանսպորտի տեսակներ են:
	3.2. Ըստ հատկանիշի խմբավորում է առարկաները:	3.2.1. «Աթոռը, բազմոցը, պահարանը կահույք են»: Կամ՝ «Լոլիկը, վարունգը, կարտոֆիլը բանջարեղեն են»:

Տրամաբանություն և մտածողություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառա-հետևանքային կապերը:	4.1. Կարողանում է միևնույն իրադարձության տարբեր էպիզոդներ կապել իրար պատճառա-հետևանքային կապերով:	4.1.1. Պատմում է. «Երեկ իմ ծննդյան օրն էր, դրա համար մայրիկը տորթ էր թխել և հյուրեր էր հրավիրել: Քանի որ իմ ծննդյան օրն էր, բոլոր ընկերներս ինձ նվերներ բերեցին»:
	4.2. Փորձում է բացատրել, թե ինչպես երևույթները կարող են փոխել հանգամանքները:	4.2.1. Ասում է. «Եթե անձրև գա, գետինը թաց կլինի, և մենք չենք կարողանա գնդակ խաղալ»:
	4.3. Կարողանում է բացատրել բարդ իրողությունների պատճառները:	4.3.1. Երբ նավակի շարժիչը անջատում եմ, ալիքները քշում են նավակը ցանկացած ուղղությամբ:
	4.4. Կրկնօրինակում և շարունակում է պարզ և միջին բարդության օրինաչափությունները:	4.4.1 Շարունակում է որոշակի օրինաչափությամբ նկարված նախշերի կամ պատկերների շարքը:
		4.4.2 Հասկանում է գիշեր-ցերեկ, ամառ-աշուն-ձմեռ-գարուն օրինաչափությունները:
		4.4.3. Կրկնօրինակում և ստեղծում է ծափերի, ցատկերի, ձայների և այլ օրինաչափություններ:
5. Երեխան կատարում է քննադատական վերլուծություն:	5.1. Տրված նկարների մեջ հասկանում է հակասությունները:	5.1.1. Տեսնելով թռչնի թևերով նկարված ձկան պատկերը՝ հասկանում է դրա անհեթեթությունը:
	5.2. Հասկանում է որոշ իրավիճակների անհնարինությունը՝ կապելով դրանք իրականության հետ:	5.2.1. Լսելով «Երեք արջերի» հեքիաթը՝ ասում է. «Ես իսկական արջ տեսել եմ կենդանաբանական այգում և գիտեմ, որ նրանք իրականում չեն խոսում»:
	5.3. Վերլուծում է գրքի հերոսների վարքը և առաջարկում, թե ինքը ինչպես կվարվեր նրանց փոխարեն:	5.3.1. «Եթե ես լինեի որսորդի տեղը, գայլին չէի սպանի»:

Տարրական մաթեմատիկական գիտելիքներ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Տիրապետում է համրանքի տարրական գիտելիքներին և հմտություններին:	6.1. Երեխաները կարողանում են հաշվել և թվերով գործողություններ կատարել 10-20-ի սահմաններում:	6.1.1. Հաշվում է մինչև 20-ը:
		6.1.2. Հաշվում է հակառակ հաջորդականությամբ՝ սկսելով 10-ից:
		6.1.3. Մինչև 10-ի սահմաններում կարողանում է հաշվել զույգ և կենտ թվերը:
	6.2. Կատարում է որոշակի քանակի շարժումներ ըստ տրված թվի:	6.2.1. Դաստիարակի առաջադրանքով 5 անգամ գնդակը նետում է ցանցի մեջ:
	6.3. 10 թվի սահմաններում գիտի թվի քանակական կազմը:	6.3.1. Օրինակ՝ գիտի, որ 5-ը 1+1+1+1+1 –ն է, կամ 10-ը՝ 7+3 և այլն:
	6.4. Ճիշտ պատասխանում է «որը», «որերորդը», «ինչքան» հարցերին:	6.4.1. Երեխան դիտում է նկար, որտեղ պատկերված են 5 տարբեր չափի խնձորներ, որոնցից երկրորդը ամենափոքրն է: Դաստիարակը հարցնում է. «Խնձորներից որերորդն է ամենափոքրը»: Երեխան պատասխանում է. «Երկրորդը»:
		6.4.2. Խոհանոցում ճաշ պատրաստելիս մայրիկը ասում է. «Սառնարանի երկրորդ դարակից 2 մեծ գազար տուր»: Երեխան կարողանում է բացել և նշված դարակից վերցնել 2 մեծ գազար:
	6.5. Թղթին նկարված պատկերը ծալելով բաժանում է երկու, չորս մասերի:	6.5.1. Թղթի վրա նկարված է գնդակ, ծալելով այն բաժանում է երկու, չորս մասերի:
	6.6.Մաթեմատիկական գիտելիքները կիրառում է խաղում:	6.6.1. «Եթե քույրիկս վերցնի 2 կոնֆետ, ես էլ վերցնեմ 2 հատ, հավասար քանակով կոնֆետներ կունենանք»:

Տարրական մաթեմատիկական գիտելիքներ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան գիտելիքներ ունի մեծության, չափի և ձևի մասին:	7.1. Հստակ պատկերացում ունի երկրաչափական պատկերների մասին (շրջան, օվալ, եռանկյունի, քառակուսի, ուղղանկյուն, սեղան, շեղանկյուն, խորանարդ, բուրգ, բազմանկյուն, գունդ):	7.1.1. Անվանում է թղթի վրա նկարված երկրաչափական պատկերները՝ եռանկյունը, շրջանը և այլն:
	7.2. Տարբերակում է առարկաների ձևերը:	7.2.1. Միջավայրում ծանոթ առարկաները նմանեցնում է երկրաչափական պատկերների. «Լիմոնը նման է օվալի, մեր տանիքը նման է եռանկյան, խնձորը, գնդակը, ձմերուկը նման են գնդի» և այլն:
8. Երեխան գիտելիքներ ունի տարածության մեջ առարկաների դիրքի վերաբերյալ և կարողանում է կողմնորոշվել տարածության մեջ:	8.1. Թվարկում է իրենից ձախ կամ աջ, հեռու կամ մոտիկ, վերևում կամ ներքևում գտնվող առարկաները:	8.1.1. «Գնդակը իմ աջ կողմում է»:
		8.1.2. «Մեր տունը շատ հեռու է մանկապարտեզից, իսկ Արամենցը մոտ է»:
		8.1.3. «Մեր տան ներքևում նկուղն է, իսկ վերևում՝ հարևանի տունը»:
9. Երեխաները կարողանում են կողմնորոշվել ժամանակի մեջ:	9. 1. Երեխան տարբերում է անցյալում, ներկայում, ապագայում կատարվող գործողությունները:	9.1.1. «Երեկ իմ ծննդյան օրն էր»: «Նոր տարվա հանդեսը լինելու է ձմռանը»:
	9.2. Դրսևորում է ժամանակի փոփոխության հետ կապված հասկացությունների իմացություն և բառապաշար:	9.2.1. Կարողանում է հաջորդականությամբ թվարկել շաբաթվա օրերը:
		9.2.2. Հաջորդականությամբ թվարկում է տարվա եղանակները:
		9.2.3. Ասում է, թե որ ամիսը տարվա որ եղանակին է պատկանում:
	9.3. Գաղափար ունի ժամի, ժամացույցի և օրացույցի մասին:	9.3.1 «Հայրի՛կ, ես կարող եմ ժամացույցի վրա ցույց տալ ժամը երեքը»:
		9.3.2 Գիտի, որ փոքր սլաքը ցույց է տալիս ժամը, իսկ մեծը՝ րոպեն:

Երևակայություն և ստեղծագործական մտածողություն		
Չափորոշիչ	**Ցուցիչ**	**Օրինակ**
10. Երեխան դրսևորում է պատկերային մտածողություն և ստեղծագործունակություն կրեատիվություն):	10.1. Կարողանում է տրված նյութի տարբեր (առնվազն 3) կիրառություններ գտնել:	10.1.1. «Խոտից կարելի է տնակ սարքել, խոտով կարելի է կերակրել կենդանիներին, խոտից կարելի է բարձ սարքել:
	10.2. Կարողանում է շարունակել կիսատ թողած պատմությունները և նրանց համար ինքնատիպ ավարտ հորինել:	10.2.1. Մայրը/ուսուցիչը կարդում կամ պատմում է մի պատմվածք, իսկ երեխան կեսից շարունակում և ինքն է ավարտում պատմությունը:
	10.3. Պատմությունները կամ իր տրամադրությունը ներկայացնում է շարժումների, երաժշտության, կերպարվեստի, դերախաղի և արվեստի այլ ձևերի միջոցով:	10.3.1. Շարժումներով ցույց է տալիս, թե ինչպես էր արտահայտում ուրախությունը իր ընկերը կամ որևէ մեկը:
		10.3.2. Նկարում է իրեն ծանոթ հեքիաթի կերպարներին և միջավայրը:
		10.3.3. Երեխան իր ուրախությունը արտահայտում է երգելով:
11. Երեխան կարողանում է ֆանտազիան տարբերել իրականությունից:	11.1. Պատմություն պատմելիս ասում է՝ դա իրական է, թե իր հորինածը:	11.1.1. «Այսօր շուկայում Զախորդ Փանոսին եմ տեսել»: «Իսկապե՞ս»: «Դե հենց նա չէր, բայց շատ նման էր նրան»:
	11.2. Հասկանում է, որ շատ հեքիաթային կերպարներ, հեռուստատեսային հերոսներ իրական չեն:	11.2.1. Օրինակ՝ գիտի, որ «Չեբուրաշկան» իրական չէ:
12. Երեխան դրսևորում է արտահայտչականության և սիմվոլիկ մտածողության ունակություններ:	12.1. Իր պատմածը ցայտուն դարձնելու համար ֆիզիկական օբյեկտների հետ համեմատություն է կատարում:	12.1.1. Շնիկի բույնը իմ պահարանի չափ է:
	12.2. Մնջախաղի միջոցով ներկայացնում է պարզ օբյեկտներ և գործողություններ:	12.2.1. Մնջախաղով ներկայացնում է արև, թռչուն, հեծանիվ վարելը և այլն:
	12.3. Կարողանում է երևույթները և առարկաները ներկայացնել պայմանական նշանների միջոցով:	12.3.1. Օրվա եղանակը ներկայացնում է պայմանա-կան նշանների միջոցով. օր.՝ անձրևոտ եղանակը՝ կաթիլներով և այլն:
	12.4. Կարողանում է կիսատ նկարված պատկերները ճանաչել և ասել դրանց անունները:	12.4.1.Չկան անավարտ նկարին նայելով՝ ասում է, որ ձուկ է նկարված:

Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
13. Երեխան որոշակի գիտելիքներ և տեղեկություններ ունի սեփական անձի, իր սոցիալական դերերի, հարաբերությունների մասին:	13.1. Տեղեկացված է իր բնակավայրի մասին:	13.1.Պատասխանում է հետևյալ հարցերին. որն է իր հանրապետությունը, քաղաքը (գյուղը), հասցեն:
	13.2. Տարբերում է ազգակցական կապերը և հարաբերությունները:	13.2.1. «Մորաքույրը մայրիկի քույրիկն է, տատիկի աղջիկը» և այլն:
	13.3. Գիտի, թե ինչով են զբաղվում որոշ մասնագիտությունների տեր մարդիկ:	13.3.1. «Հրշեջները օգնում են մարդկանց հանգցնել հրդեհները»:
14. Ունի գիտելիքներ շրջապատող միջավայրի և բնության մասին:	14.1. Ճանաչում է բնության երևույթները՝ ամպրոպը, երկրաշարժը և այլն:	14.1.1. Օր.՝ երբ հեռուստատեսությամբ հայտնում են, որ երկրաշարժ է եղել, ասում է, որ երկրաշարժի ժամանակ գետինը շարժվում է, տները փլվում են:
	14.2. Գիտի, թե որն է սարը, գետը, ծովը:	14.2.1. Գիտի, որ Հայաստանի ամենամեծ լիճը Սևանն է: Հրազդան գետը հոսում է Երևանի միջով:
	14.3. Տարբերակում է ընտանի և վայրի կենդանիները:	14.3.1. Գիտի, որ անտառում ապրում են վայրի կենդանիները՝ արջը, գայլը աղվեսը, նապաստակը:
	14.4. Գիտի, թե ինչպես են անվանում տարբեր կենդանիների ձագուկներին (առնվազն՝ շան, ձիու, ոչխարի):	14.4.1. Ասում է. «Մեր բակի շունը 4 քոթոթ ունի»:
	14.5. Հասկանում է, որ աղտոտված շրջակա միջավայրը կարող է ազդել մարդկանց և կենդանիների վրա:	14.5.1. Օրինակ՝ ասում է. «Աղտոտված ջրում ձկները կարող են սատկել: Եթե երեխաները լողան աղտոտված գետում, կհիվանդանան»:
		14.5.2. «Ես պաղպաղակի թուղթը չեմ գցում փողոցում, որպեսզի մեր բակը մաքուր լինի»:
	14.6. Գիտի բույսերի և կենդանիների աճի և զարգացման փուլերը:	14.6.1. Գիտի, որ սերմից ծիլ է դուրս գալիս, ծիլից՝ ծաղիկ կամ ծառ և այլն:
		14.6.2. «Հավը ձու է ածել և թուխս է նստել ձվի վրա: Հետո ձվից ճուտիկ է դուրս գալու»:

Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
15. Ունի գիտելիքներ երաժշտական գործիքների մասին:	15.1. Ճանաչում է հանրահայտ երաժշտական գործիքները, գիտի դրանց անունները:	15.1.1. Կարող է ցույց տալ և անվանել հետևյալ երաժշտական գործիքները՝ դաշնամուր, ջութակ և այլն:
	15.2. Ճանաչում է որոշ ազգային երաժշտական գործիքներ (առնվազն մեկը):	2. Ցույց է տալիս և անվանում է հետևյալ ազգային նվագարանները՝ դուդուկ, թառ, դհոլ, քանոն և այլն:
16. Ճանաչում և կատարում է մանկական երգեր, պարեր, գիտի ժողովրդական բանահյուսության նմուշներ, հեքիաթներ, հանելուկներ, ասացվածքներ:	16.1. Երգում է մանկական երգեր, ազգային, ծիսական խաղիկներ, պարերգեր և կատարում է պարային շարժումներ:	16.1.1. Երգում է ազգային մանկական երգերի մշակումները, զատկական մանկական երգերը:
		16.1.2. Ժողովրդական պարեղանակներին համապատասխան կատարում է ազգային պարային շարժումներ:
	16.2. Կարող է պատմել որոշ պարզ, ոչ ծավալուն ազգային հեքիաթներ, առակներ, ավանդույթներ, լեգենդներ:	16.2.1. Կարող է պատմել «Քաջ Նազարը», «Սուտլիկ որսկանը», «Չարի վերջը», «Պոչատ աղվեսը», «Ծունն ու կատուն» կամ այլ ստեղծագործություններ:
17. Որոշ գիտելիքներ ունի ազգային և կրոնական ծեսերի, տոների, պետական խորհրդանիշների մասին:	17.1. Ճանաչում է ազգային տոների, ծեսերի, պետական խորհրդանիշների որոշ մանրամասներ, ծանոթ է դրանց կերպարներին:	17.1.1. Գիտի, թե ինչու ենք նշում Անկախության օրը, հաղթանակի օրը, Զատիկը, Սուրբ Ծնունդը և այլն:
		17.1.2. Գիտի Հայաստանի դրոշի գույները:
	17.3. Զարգացնում է իր և այլ մշակույթների տոների մասին ունեցած գիտելիքները:	17.3.1. Պատկերացում ունի Ս. Զատիկի, Ս. Վալենտինի օրվա, Սուրբ Ծննդյան և այլ տոների մասին:

5-6 տարեկան

Սոցիալական, հուզական և անձնային զարգացում

Սոցիալական զարգացում		
Փոխհարաբերություններ մեծահասակների հետ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան իրեն շրջապատող մեծահասակների հետ կարողանում է կառուցել փոխադարձ վստահության և հարգալից վերաբերմունքի վրա հիմնված հարաբերություններ:	1.1.Ինքն առաջինն է սկսում խոսակցությունը, հարցերով դիմում է ծանոթ մեծահասակներին (հարևաններ, բժիշկ, խանութի վաճառող և այլն):	1.1.1. Կարողանում է խանութից գնումներ կատարել:
		1.1.2. Ծանոթ մեծահասակներին իրեն հուզող խնդիրների վերաբերյալ հարցեր է տալիս:
		1.1.3. Դրսում հարևաններին հանդիպելիս բարևում է, հարցեր տալիս, զրուցում՝ առանց կաշկանդվելու:
	1.2. Հիմնական խնամակալների և իր համար նշանակալի այլ մեծահասակաների հետ հարաբերություններ հաստատելիս վստահություն է դրսևորում:	1.2.1. Պատմում է առօրյայում կատարված իրադարձությունների և տպավորությունների մասին:
2. Երեխան անհրաժեշտության դեպքում դիմում է մեծահասակների օգնությանը:	2.1. Կանոնների կամ հաստատված ռեժիմի (կարգի) խախտման հետևանքների մասին սովորաբար հարցնում է մեծահասակին:	2.1.1. Որևէ գործունեություն սկսելուց առաջ «կարելի՞ է արդյոք...» հարցով դիմում է մեծահասակին:
		2.1.2. Մեծահասակից թույլտվություն է խնդրում քնելու փոխարեն ևս 1 ժամ խաղալու կամ հեռուստացույց դիտելու համար:
		2.1.3. Կարողանում է ծնողի հետ միասին մշակել իր օրվա ռեժիմը:
		2.1.4. «Ի՞նչ կլինի, եթե ուտելուց առաջ ձեռքերս չլվանամ»:
	2.2. Հարցով դիմում է մեծահասակին կամ նրա ուշադրությունը պատեհ պահի հրավիրում ինչ-որ խնդրի վրա:	2.2.1. Արտահերթ բակ դուրս գալու թույլտվություն ստանալու համար դիմում է ծնողներին, երբ նրանք զբաղված չեն:
		2.2.2. Սպասում է, մինչև մայրն ավարտի հեռախոսային խոսակցությունը, հետո միայն դիմում է որևէ հարցով:

Փոխհարաբերություններ հասակակիցների հետ		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան իր հասակակիցների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու փորձեր է կատարում:	3.1. Առաջարկում է իր օգնությունը ուրիշ երեխայի (երեխաների):	3.1.1. Իր օգնությունն է առաջարկում այն հասակակցին, որը չի կարողանում գտնել խաղալիքը:
		3.1.2. Ընկերոջը առաջարկում է միասին վերանորոգել խաղալիքը:
	3.2. Ընդունում է հասակակիցների օգնությունը:	3.2.1. Կորցրած խաղալիքը գտնելու համար հայցում է ընկերոջ օգնությունը:
	3.3. Անաչառ վերաբերմունք է ցուցաբերում ընկերների նկատմամբ:	3.3.1. Խաղի մեջ փորձում է ընդգրկել բոլորին:
		3.3.2. Խաղի կանոնների խախտման դեպքում փորձում է անաչառ գնահատական տալ:
		3.3.3. Պաշտպանում է այն ընկերներին, որոնք իր կարծիքով անհիմն դուրս են մնացել խաղից:
	3.4. Հետևում է ընկերների առաջարկներին խաղի կազմակերպման կամ ընթացքի վերաբերյալ:	3.4.1. Խաղի ընթացքում հետևում է, որ կանոնները պահպանվեն բոլորի կողմից:
		3.4.2. Իր կողմից խաղի կանոնների խախտման դեպքում ընդունում է խաղընկերոջ դիտողությունը:
		3.4.3. Ընկերների կողմից նոր խաղ առաջարկելու դեպքում անվերապահորեն ընդունում է խաղի կանոնները:
	3.5. Տարբեր շրջապատներում ունի ընկերներ (մանկապարտեզում, բակում և այլն):	3.5.1. Ընկերներին հաճախակի հրավիրում է տուն:

Փոխհարաբերություններ հասակակիցների հետ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
	3.6. Իր համար կարևոր իրերը տալիս է ընկերոջը:	3.6.1. Փոխանակում է խաղալիքները:
		3.6.2. Իր խաղալիքները որոշ ժամանակով տալիս է ընկերոջը:
		3.6.3. Մանկապարտեզ գնալիս իր հետ քաղցրավենիք կամ խաղալիքներ է տանում ընկերներին տալու նպատակով:
	4.1. Տրամադրում է խաղալիքները և նյութերը ուրիշներին:	4.1.1. Որևէ խաղ կազմակերպելու նպատակով իր խաղալիքները բաժանում է հասակակից ընկերներին:
		4.1.2. Խաղի ընթացքում փոխանակում է խաղալիքները:
	4.2. Խաղում է համագործակցելով, աջակցելով և նոր մտքեր առաջարկելով:	4.2.1. Առաջարկելով նոր մտքեր՝ փորձում է փոխել խաղի ընթացքը («Հասմի՛կ, դու պարտվեցիր, քանի որ խախտել ես խաղի կանոնները»):
		4.2.2. Լսելով դիմացինին՝ ընդունում է խաղի նոր կանոնները:
	4.3. Որպես խմբի անդամ՝ ստանձնում է տարբեր դերեր (առաջնորդ, հետևորդ, օգնական և այլն):	4.3.1. Իր կողմից առաջարկված խաղը փորձում է հասցնել ավարտին, կատարում է համապատասխան դերաբաժանումներ («Ես վարորդն եմ, դուք՝ ուղևորները. մենք գնում ենք ուղևորության»):
		4.3.2. Ուրիշի կողմից առաջարկված խաղը իրականացնելիս ընդունում է կանոնները և հետևում դրանց:
		4.3.3. Օգնում է ընկերոջը՝ իրականացնելու որևէ գործունեություն:

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան համագործակցում է հասակակիցների հետ:	4.4. Իր փորձը և մտքերը հաղորդում է ուրիշներին:	4.4.1. Պատեհ առիթի դեպքում իր սոցիալական փորձը փոխանցում է ընկերներին («Հայրիկիս հետ այսպես ենք ամրացրել նկարը»):
		4.4.2. Խաղալիս առաջարկում է թրջել ավազը, որպեսզի կառուցվող թունելը չփլուզվի:
		4.4.3. «Պետք չէր ապակին այդպես ուժեղ սեղմել, որ չկոտրվեր»:
	4.5. Հասակակիցների հետ միասին փորձում է գտնել տարբեր իրավիճակներում առաջացող խնդիրների լուծման ուղիներ:	4.5.1. Պայմանավորվում է խաղի կանոնների մասին:
		4.5.2. Լսում է տարբեր առաջարկներ. եթե դրանք հետաքրքրում են իրեն, սկսում է իրականացնել («Խնդրենք, որ Արմենի մեծ եղբայրը հեծանվի անիվը վերանորոգի»):
		4.5.3. Ինքն է առաջարկում լուծումներ և փորձում հիմնավորել իր ասածը («Քանի որ հարևան բակի Արմենը խանգարում է մեզ, չի պահպանում խաղի կանոնները, մենք նրա հետ չենք խաղա»):
		4.5.4. «Հասմիկը ուշանում է, գուցե նորից զանգահարենք տուն»:
	4.6. Ճանաչում և գնահատում է հասակակիցների միջև եղած տարբերություններն ու նմանությունները:	4.6.1. «Արտակը վարժ անգլերեն է խոսում, իսկ ես՝ ռուսերեն»:
		4.6.2. «Արմենն ու Արտակը լավ են ֆուտբոլ խաղում»:

Փոխհարաբերություններ հասակակիցների հետ

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան կարողանում է բանակցել իր հասակակիցների հետ:	5.1. Կիրառում է կոնֆլիկտների լուծման տարբեր միջոցներ:	5.1.1. «Իմ առաջարկած հանելուկը ով գուշակի, նա էլ կդառնա խաղավարը»:
		5.1.2. Գիտակցելով, որ դիմացինը փոքր է, զիջում է խաղալիքը:
		5.1.3. Առաջարկում է եղած խաղալիքները հավասար բաժանել («Մի մասը՝ քեզ, մի մասը՝ ինձ»):
		5.1.4. Գիտակցելով, որ տվյալ իրավիճակում ինքը չի կարող հասնել արդյունքի, զիջում է խաղալիքը և չի մասնակցում խաղին:
		5.1.5. Կատարում է խաղալիքների փոխանակում. «Ես կանաչ ֆլոմաստերով կներկեմ տերևը, հետո կտամ քեզ»:
	5.2. Ուրիշ հասակակցի հետ առաջացած վեճը կամ կոնֆլիկտը փորձում է լուծել բանակցելով, հաշվի առնելով ինչպես սեփական, այնպես էլ դիմացինի կարծիքները (երբեմն մեծահասակի օգնությամբ):	5.2.1. Սկզբից փորձում է ինքնուրույն պայմանավորվել կամ բանակցել, հետո միայն դիմում է մեծահասակի օժանդակությանը: «Ես կանաչ ֆլոմաստերով կներկեմ տերևը, հետո կտամ քեզ»:
	5.3. Մեծահասակի օգնությամբ գնում է փոխզիջման:	5.3.1. «Հասմիկ, դու՛ եղիր դատավորը, որ բոլորս հետևենք քո ասածներին»:
		5.3.2. Համաձայնում է խաղալիքը տալ ընկերոջը, փոխարենը մեծահասակի կողմից ստանում է քաջալերանք կամ ուրիշ խաղալիք:
	5.4. Ցուցաբերում է իրադրությանը ուրիշի տեսանկյունից նայելու պարզագույն ունակություն:	5.4.1. «Դու իսկական ընկեր ես, որովհետև օգնեցիր ինձ ծառը բարձրանալ»:
		5.4.2. Հասկանալով, որ տանը քնած մարդ կա, խաղում է առանց աղմկելու:

Սոցիալական վարք		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան իր վարքի և դրա ազդեցության վերաբերյալ իմացություն է ցուցաբերում:	6.1. Նկարագրում է, թե ինչպես իր գործողությունները կարող են ազդել ուրիշների զգացմունքների և վարքի, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա:	6.1.1. «Եթե Արմենին չպաշտպանեի, նրան տղաները կնեղացնեին»:
		6.1.2. «Եթե խաղալիքս չտայի փոքր եղբորս, նա լաց կլիներ»:
		6.1.3. «Եթե առանց ծնողներիս ասելու դուրս գամ խաղալու, հայրիկս կզայրանա ինձ վրա»:
		6.1.4. «Ես ջրում եմ ծաղիկները, որ նրանք լավ աճեն»:
		6.1.5. «Ձմռանը թռչուններին կերակրում եմ, որ սոված չմնան»:
		6.1.6. «Ես կոնֆետի թուղթը գցում եմ աղբարկղի մեջ, որ մեր բակը չկեղտոտվի»:
		6.1.7. «Եթե ես ու հայրիկը շան համար տնակ չկառուցեինք, նա ձմռանը կմրսեր»:
	6.2. Բացատրում է ուրիշների գործողությունների կամ վարքի հետ կապված իր արձագանքը:	6.2.1. «Ես նրան շոյեցի, որովհետև նա լալիս էր»:
		6.2.2. «Ես տուն եկա, որովհետև մայրիկս ինձ պիտի խանութ ուղարկի»:
	6.3. Ցուցաբերում է հոգատար վերաբերմունք՝ ակնկալելով դրական արձագանք:	6.3.1. «Ես մեր հարևան պապիկի համար հաց եմ գնում, որովհետև նա դժվար է քայլում»:
		6.3.2. «Ես օրորում եմ իմ փոքրիկ եղբորը, երբ մայրս արդուկ է անում»:
	6.4. Հասկանում է՝ ինչպիսի արձագանքի կարող է արժանանալ իր և ուրիշների վարքը:	6.4.1. «Եթե սեղանի վրա գրենք, ապա դաստիարակը կբարկանա մեզ վրա»:
		6.4.2. «Եթե դու ատամներդ չլվանաս, առողջ ատամներ չես ունենա»:
		6.4.3. «Եթե շնիկին խփես, քեզ ոչ ոք չի սիրի»:

Սոցիալական վարք

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
7. Երեխան տարբեր իրավիճակներում ցուցաբերում է համապատասխան վարք:	7.1. Հետևում է խմբային աշխատանքի պարզ կանոններին:	7.1.1. «Խաղալուց հետո բոլոր խաղալիքները պիտի հավաքենք, հետո գնանք զբոսայգի»:
		7.1.2. «Սկզբից նկարելու է Արմենը, հետո՝ Սամվելը, հետո՝ ես»:
		7.1.3. «Ես պիտի փոխանցեմ առարկան Սամվելին միայն այն դեպքում, երբ նա երեք պտույտ կատարի դրոշակի շուրջը»:
	7.2. Կարողանում է միանալ անծանոթ երեխաների խաղին:	7.2.1. «Թույլ կտա՞ք ես էլ լինեմ ձեր թիմից»:
		7.2.2. «Ես լավ դարպասապահ եմ»:
		7.2.3. «Ես ավելի շատ բազմագույն ֆլոմաստերներ ունեմ. կուզե՞ք միասին նկարենք»:
	7.3. Մասնակցում է օրվա ընթացիկ աշխատանքներին /գործողություններին:	7.3.1. Օգնում է ծնողներին տնային առօրյա գործերում (խանութ է գնում, իրենից փոքր երեխաներին է զբաղեցնում):
	7.4. Առօրյա աշխատանքներին մասնակցում է ինչպես սոսկ դիտողի, այնպես էլ ակտիվ մասնակցի դերերով:	7.4.1. Գիտի ընկերոջ ոտանավորը, անհրաժեշտության դեպքում հուշում է կամ արտասանում:
	7.5. Մի իրավիճակից մյուսին անցնելիս ցուցաբերում է հարմարվելու ունակություններ:	7.5.1. Դաստիարակի հիշեցումից հետո ավարտում է լեգոներով իր խաղը, հավաքում և տեղն է դնում նյութերը, այնուհետև նախապատրաստվում է զբոսանքի:
		7.5.2. Երբ գալիս է քնելու ժամը, համաձայնում է ընդհատել խաղը, հավաքել խաղալիքները և լվացվել:
8. Երեխան մեծահասակների և հասակակիցների նկատմամբ ցուցաբերում է իր տարիքին համապատասխան բարեկիրթ վարքագիծ:	8.1. Գործածում է բարեկիրթ բառեր և դրսևորում բարեկիրթ վարքագիծ:	8.1.1. Չի ընդհատում, երբ մեծահասակը խոսում է:
		8.1.2. Օգտագործում է «շնորհակալություն», «կարելի՞ է», «ներողություն» և այլ բառեր և բառակապակցություններ:
	8.2. Ցուցաբերում է ազգային մշակույթին հատուկ շփման ձևերի և դրանց ճիշտ օգտագործման իմացություն:	8.2.1. Եթե մեծահասակներից որևէ մեկը ներս է մտնում, աթոռ է առաջարկում:
		8.2.2. Ճաշի սեղանը սպասարկելիս մայրիկին օգնելու ժամանակ առաջինը սպասարկում է տան մեծին և հետո ըստ տարիքի:

Անձնային զարգացում		
«Ես- կոնցեպցիան»		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
9. Երեխան ցուցաբերում է իր (սեփական) անձի մասին իմացություն:	9.1. Գիտի իր անձին վերաբերող տեղեկությունները:	9.1.4. Գիտի իր հասցեն և հեռախոսահամարը:
	9.2. Հարգանքով է վերաբերվում սեփական անձին:	9.2.1. Ճանաչում է և հպարտանում սեփական ձեռքբերումներով: Ասում է. «Ես կարող եմ օղակը նետել»:
10. Երեխան վերահսկում է իր զգացմունքները և հույզերը:	10.1. Ենթարկվում է կանոններին:	10.1.1. Բժշկի մոտ գնալիս ենթարկվում է բժշկի հրահանգներին:
		10.1.2. Տուն մտնելիս ոտքերը մաքրում է:
	10.2. Կարողանում է անցում կատարել մի գործողությունից մյուսին:	10.2.1. Դաստիարակի կամ ծնողի հրահանգով կարողանում է կիսատ թողնել խաղը և կատարել նոր հրահանգը:
		10.2.2. Որևէ գործողության ժամանակ, երբ առաջարկվում է ավելի հետաքրքիր գործունեություն, անմիջապես ընդունում է առաջարկը:
	10.3. Ենթարկվում է օրվա ռեժիմին:	10.3.1.«Արդեն գիշեր է, և բոլոր երեխաները պետք է քնեն»:
		10.3.2. «Ճաշելուց առաջ բոլորը լվանում են իրենց ձեռքերը»:
	10.4. Իր համար անբարենպաստ իրավիճակներում (միջավայրերում) դրսևորում է սեփական զգացմունքները կառավարելու պարզագույն հմտություններ:	10.4.1. Եթե ծնողները խաղալիքների խանութում բացատրում են, որ նրա ընտրած խաղալիքը թանկ է, նա փորձում է հրաժարվել այդ խաղալիքից:
		10.4.2. Ծնողի զգուշացումից հետո աշխատում է աղմկոտ խաղեր չխաղալ:

«Ես- կոնցեպցիան»

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
11. Երեխան ցուցաբերում է անձնական պատասխանատվություն:	11.1. Հոգ է տանում իրեն և խմբին պատկանող իրերի մասին:	11.1.1 Խաղից հետո հավաքում է խաղալիքները և դնում իրենց տեղը:
		11.1.2. «Եթե խաղալիքը կոտրենք, այլևս խաղալիքներ չենք ունենա, որ խաղանք»:
	11.2. Սկսում է գիտակցել սեփական գործողությունների հետևանքները:	11.2.1. «Եթե ոտանավորս շուտ սովորեմ, խաղալու համար ավելի շատ ժամանակ կունենամ»:
		11.2.2. «Կրակի հետ չի կարելի խաղալ, որովհետև կարող է հրդեհ բռնկվել»:
12. Երեխան դրսևորում է ինքնագնահատման տարրական հմտություններ:	12.1. Կարողանում է նկարագրել և բնութագրել ինքն իրեն:	12.1.1. «Ես բարձրահասակ եմ»:
		12.1.2. «Ես սևահեր եմ ու կապտաչյա»:
	12.2. Կարողանում է նշել իր և հասակակիցների նմանություններն ու տարբերությունները:	12.2.1. «Մեր խմբի երեխաները նույն տարիքի են»:
		12.2.2. «Ես ավելի վատ եմ երգում, քան Արմենը»:
		12.2.3. «Մեր խմբի տղաներից ես, Արմենը և Կարենը չենք սիրում ցերեկը քնել»:

Հուզական զարգացում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
13. Երեխան ճանաչում է հիմնական հույզերը և զգացմունքները, դրսևորում է իրավիճակին համապատասխան հույզեր:	13.1. Հիմնական զգացմունքները կարողանում է արտահայտել բառերով և ոչ-բառային հաղորդակցության ձևերով:	13.1.1. «Երբ մայրիկս ժպտում է, ես ինձ լավ եմ զգում»:
		13.1.2. «Ես ուրախանում եմ, երբ իմ ընկերները հավաքվում են մեր տանը»:
		13.1.3. «Ես չեմ սիրում, երբ մայրիկս ու տատիկս վիճում են»:
	13.2. Մարդկանց դեմքի արտահայտությունից, ձայնի հնչերանգից և վարքի այս կամ այն դրսևորումից ճանաչում է հիմնական հույզերը:	13.2.1. «Երբ հայրիկս զայրացած է լինում, լռում է»:
		13.2.2. «Մայրս զարմացավ, բայց ուրախ հարցրեց ինձ. «Դո՞ւ ես քո սենյակը հավաքել»:
		13.2.3. «Ես չեմ սիրում, երբ տատիկս հիվանդ ժամանակ տխուր ձայնով է խոսում»:
		13.2.4. «Այստեղ ծիծաղելի ոչինչ չկար, ինչու՞ ես ծիծաղում»:
	13.3. Դրսևորում է ապրումակցում ուրիշների հույզերին:	13.3.1. «Երբ հայրիկս զայրացած է լինում, ես աշխատում եմ աչքին չերևալ»:
		13.3.2. «Երբ ընկերս լալիս է, ես աշխատում եմ նրան հանգստացնել»:
		13.3.3. «Երբ ընկերներս ծիծաղելի բան են պատմում, ես էլ նրանց հետ ծիծաղում եմ»:

5-6 տարեկան

Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության դրդում

Ինքնասպասարկում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան դրսևորում է առօրյա կյանքի ինքնասպասարկման հմտություններ:	1.1. Մեծահասակի հիշեցումից հետո կանոնավոր կերպով ինքնուրույն դասավորում է իր հագուստը:	1.1.1. Մեծահասակի հիշեցումից հետո քնելուց առաջ շտկում և դասավորում է իր հագուստը:
	1.2. Կապում է կոշիկների քուղերը:	1.2.1. Զբոսանքին պատրաստվելիս հագնում է կոշիկները և կապում քուղերը:
	1.3. Կարողանում է ինքնուրույն և ճիշտ օգտվել սեղանի սպասքից (դանակ, պատառաքաղ և այլն):	1.3.1. Տապակած կարտոֆիլը կամ այլ կոշտ սնունդ ուտում է պատառաքաղով և դանակով՝ պահպանելով դրանք բռնելու ընդունված կարգը:
	1.4. Իրեն և ուրիշներին սպասարկելու համար օգտվում է սեղանի սպասքից:	1.4.1. Սեղանի շուրջը հյութը լցնում է իր և մայրիկի բաժակների մեջ:
		1.4.2. Տանը և մանկապարտեզում մասնակցում է սեղանը սպասքադրելուն և հավաքելուն:
	1.5. Ուտելիս ցուցաբերում է պատշաճ վարքագիծ:	1.5.1. Սեղան նստելիս «բարի ախորժակ» է ասում, իսկ ուտելուց հետո՝ «շնորհակալություն»:
		1.5.2.Ճաշասեղանի մոտ խոսում է ցածր ձայնով:
		1.5.3. Ճաշի ժամանակ ծամելիս չի խոսում:
		1.5.4. Ուտում է անաղմուկ, փակ բերանով:
	1.7. Մեկ հիշեցումից հետո մանկապարտեզում կատարում է օրվա հերթապահի, իսկ տանը՝ իր տնային պարտականությունները:	1.7.1. Դաստիարակի հիշեցումից հետո ջրում է խմբասենյակի բույսերը: Տանը մայրիկի հիշեցումից հետո օգնում է հարդարել անկողինը:
	1.8. Ինքնուրույն հետևում է անձնական հիգիենայի կանոններին և պահպանում է դրանք:	1.8.1. Ինքնուրույն մաքրում է ատամները:
		1.8.2. Փոխում է հագուստը, եթե այն կեղտոտվել է:
		1.8.3. Հետևում է իր եղունգների մաքրությանը և հիշեցնում, որ կտրեն:
	1.9. Առաջարկում է հագուստի, սանրվածքի՝ իրեն հարմար տարբերակը:	1.9.1 «Մայրիկ, կապույտ շորը շատ կսազի այս բաճկոնի հետ»:

Անվտանգություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան զարգացնում է առողջության և կյանքի համար հնարավոր վտանգավոր գործոնների վերաբերյալ իր գիտելիքները:	2.1. Ցուցաբերում է մանրէների տարածումը սահմանափակող վարք:	2.1.1. Հազալիս և փռշտալիս ձեռքով ծածկում է բերանը:
		2.1.2. Բակից վերադառնալուց հետո առաջին հերթին լվանում է ձեռքերը:
	2.2. Գիտակցում է սեփական անձի անվտանգության և անհատական հիգիենայի կապը, նկարագրում և ուրիշների հետ քննարկում է դրան առնչվող հարցեր:	2.2.1. Մայրիկին ասում է. «Ո՞ր դանակով կարող եմ կարտոֆիլ կտրատել»:
	2.3. Զգուշանում է խաղալ վտանգ ներկայացնող իրերի, սարքավորումների հետ:	2.3.1. Խուսափում է էլեկտրական լարերից, գազայրիչից, լուցկուց և այլն:
	2.4. Նկատում է պոտենցիալ վտանգ ներկայացնող իրավիճակները, հասկանում է դրանց վտանգավորությունը և ահազանգում մեծահասակներին:	2.4.1. Փոքր քրոջ ձեռքին տեսնելով մկրատը՝ շտապ զգուշացնում է մայրիկին. «Տե՛ս, ձեռքին սուր մկրատ կա, կարող է մատը կտրել»:
	2.5. Գիտի երթևեկության զգուշացնող և արգելակող նշանները, փողոցում նկատում է դրանք ու հասկանում դրանց իմաստը:	2.5.1. Ծնողի հետ փողոցն անցնելիս ուշադրություն է դարձնում լուսացույցի կարմիր լույսին և ասում. «Մենք պետք է անցնենք կանաչ լույսի տակ»:
	2.6. Գիտի, թե ո՛ր դեպքում պետք է զանգահարել հրշեջ ծառայության, շտապ օգնության, ոստիկանության հեռախոսահամարներով:	2.6.1. Խաղի ընթացքում ասում է. «Մեզ մոտ հրդեհ է, շտապ զանգահարեք հրշեջ ծառայություն, որ հրշեջ մեքենա ուղարկեն»:

5-6 տարեկան

Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ

Հետաքրքրասիրություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
1. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում նոր բաներ սովորելու և նոր փորձառությունների նկատմամբ:	1.1. Հարցեր է տալիս իրեն հետաքրքրող թեմաների մասին:	1.1.1. Հարցնում է. «Ինչո՞ւ է ձմռանը շուտ մթնում» կամ «Ինչո՞ւ անձրևից հետո ծիածան է լինում»:
	1.2. Հարցեր է տալիս իր և իրեն շրջապատողների կյանքում եղած փոփոխությունների վերաբերյալ:	1.2.1. Հարցնում է. «Ինչո՞ւ ինձ ամեն օր հայրիկն էր տանում մանկապարտեզ, իսկ այսօր պապիկը պետք է տանի»:
	1.3. Հետաքրքրվում է նոր տեղեկատվությամբ և պատրաստակամ է ձեռք բերելու նոր փորձառություններ:	1.3.1. «Ես ուզում եմ իմանալ՝ ինչու է հրաբուխ լինում», «Ես ուզում եմ այս հաստ գիրքը կարդալ, ինչի՞ մասին է այն», «Ես ուզում եմ այս կարուսելը նստել», «Ուզում եմ սովորել հեծանիվ քշել»:
	1.4. Մասնակցում է նույն խաղի փոփոխվող տարբերակներին:	1.4.1. Մի քանի անգամ կենդանիների պատկերներով լոտո խաղալուց հետո, նույն խաղը խաղում է երկրաչափական մարմինների պատկերներով:
	1.5. Հետաքրքրություն է ցուցաբերում գրենական իրերի և պիտույքների, գրքերի, այբբենարանի, դպրոցական հագուստի նկատմամբ:	1.5.1. «Ես էլ եմ ուզում Արամի նման պայուսակ և գրիչներ ունենալ»:
	1.6. Հետաքրքրություն է ցուցաբերում դպրոցի նկատմամբ:	1.6.1. Հաճախ է հարցնում. «Դպրոցում երեխաները ի՞նչ են անում»:

Նախաձեռնություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
2. Երեխան նախաձեռնություն է ցուցաբերում:	2.1. Որոշում է աշխատել իր հետաքրքրությունից բխող առաջադրանքի վրա:	2.1.1. «Ես կկառուցեմ մեքենաների համար ավտոտնակ, որովհետև մեքենաներ շատ եմ սիրում», «Ես ուզում եմ այս կերամանը ներկել, որովհետև թռչուններին ուզում եմ կերակրել»:
	2.2. Ընտրություն է կատարում խաղերի, առաջադրանքների, առարկաների միջև:	2.2.1. Աշունը պատկերելու համար որոշում է ապլիկացիոն աշխատանք կատարել գունավոր թղթերով և չորացրած տերևներով:
	2.3. Խաղեր է նախաձեռնում մյուս երեխաների հետ:	2.3.1. Ասում է ընկերներին. «Եկեք այս դատարկ տուփերից շենք կառուցենք»:
	2.4. Խաղերի և առաջադրանքների ընթացքում առաջարկում է նոր մտքեր և տարբերակներ:	2.4.1. «Եկեք այս անգամ էլ գլուխկոտրուկը մեջտեղից սկսենք հավաքել»:

Մասնակցություն և հետևողականություն		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
3. Երեխան մասնակցություն և հետևողականություն է ցուցաբերում իր տարիքին համապատասխան առաջադրանքների նկատմամբ:	3.2. Ձգտում է ավարտին հասցնել սկսած առաջադրանքը՝ փորձելով և սխալվելով, ինչպես նաև դիմելով տարբեր միջոցների:	3.2.1. Գլուխկոտրուկի վրա աշխատելիս երեխան կիսատ չի թողնում, եթե նույնիսկ հեշտությամբ չի ստացվում այն հավաքել: Նա շարունակում է աշխատել, օգնություն է խնդրում, մինչև որ վերջապես բոլոր կտորները դասավորում է իրենց տեղերում:
	3.3. Իր համար նպատակ է սահմանում, 2-3 քայլերից բաղկացած պլաններ է կազմում և գործում ըստ իր պլանների:	3.3.1. Երեխան հայտարարում է, որ խորանարդիկներով մեքենա է պատրաստելու: Այնուհետև պահարանից վերցնում է խորանարդիկները և ձեռնարկում իր գործը:
	3.4. Ավարտին է հասցնում սկսած խաղը կամ առաջադրանքը:	3.4.1. Հավաքում է գլուխկոտրուկը, լեգոներով ամրոց է կառուցում և այլն:
	3.5. Իր օգնությունն է առաջարկում մյուսներին:	3.5.1. Ես կանաչ մատիտ ունեմ, կարող եմ տալ քեզ:
		3.5.2. Ես գիտեմ, թե այդ խաղը ինչպես են խաղում, ուզում ես քեզ ցույց տամ:

Ուշադրություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
4. Երեխան դրսևորում է ուշադրության տեղափոխելիություն, կենտրոնացում և պահպանում:	4.1. Եթե խաղից/առաջադրանքից շեղում են, հետո նորից վերադառնում է խաղին:	4.1.1. Երեխան գլուխկոտրուկ է հավաքում, մայրը կանչում է նրան խոհանոց՝ հյութ խմելու, որից հետո նա վերադառնում է սենյակ և շարունակում իր աշխատանքը:
	4.2. Կարողանում է ըստ տրված օրինակի կատարել առաջադրանքը:	4.2.1. Երեխային առաջարկվում է աղյուսակի նշաններով լրացված մի տող. առաջին եռանկյունու մեջ գրված է +, երկրորդի մեջ՝ *, երրորդի մեջ՝ o: Պահպանելով այդ օրինաչափությունը՝ նա պետք է շարունակի պատկերներ նկարել և դնել համապատասխան նշանները:
	4.3. Կարողանում է ուշադրությունը կենտրոնացած պահել որոշակի գործունեության ընթացքում:	4.3.1. Լսում է ընթերցվող կարճ հեքիաթը և հարցեր է տալիս:

Հիշողություն

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
5. Երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա:	5.1. Ճանաչում է նախկինում տեսած առարկաները:	5.1.1. Երեխային ցույց են տալիս 3-5 առարկաների նկարներ, հետո նա դրանք ճանաչում է խառը պատկերներով նկարների մեջ:
	5.2. Հիշում և վերարտադրում է որոշակի գործողություններ:	5.2.1. Հիշողությամբ կրկնում է պարի շարժումները:
	5.3. Կարողանում է մինչև 5 անգամ կրկնելու դեպքում հիշել և վերարտադրել 5-8՝ իրար հետ իմաստով չկապված պարզ բառեր:	5.3.1. Երեխայի համար 5 անգամ կրկնում են բառերի մի որոշակի շարք, օր.՝ շուն, ծիածան, դուռ, գնդակ, մատիտ, խնձոր, որից հետո նա կարողանում է վերարտադրել բառերը նույն հերթականությամբ:
	5.5. Հիշողությամբ նկարագրում կամ ներկայացնում է իրավիճակներ և գործողություններ:	5.5.1. Երեկոյան պատմում է ընտանիքի անդամներին, թե ինչ է արել մանկապարտեզում:
		5.5.2. Կենդանաբանական այգի այցելելուց հետո մասնակցում է խմբասենյակում կազմակերպված «Ինչ տեսանք կենդանաբանական այգում» ամփոփիչ քննարկմանը:

Պրոբլեմների հիմնավորում և լուծում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
6. Երեխան դրսևորում է խնդրի լուծումը որոնելու ունակություն:	6.1. Հստակեցնում է ծագած պրոբլեմը:	6.1.1. Ասում է. «Այս շենքը քանդվում է, որովհետև վերևից դրված խորանարդիկը ծանր է»:
	6.2. Փորձելու և սխալվելու միջոցով լուծում է պրոբլեմը:	6.2.1. Ասում է. «Այս շենքը քանդվում է, որովհետև վերևից դրված խորանարդիկը ծանր է: Ես կփորձեմ դրա փոխարեն ավելի փոքրը դնել»:
	6.3. Մեկից ավելի տարբերակներ է առաջարկում հարցի/առաջադրանքի կամ խնդրի լուծման համար:	6.3.1. «10 թիվը կարելի է ստանալ 5-ին գումարելով 5 կամ 12-ից հանելով 2»:
7. Երեխան կատարում է պարզ հիմնավորումներ:	7.1. Բացատրում է, թե ինչպես է կայացրել պարզ որոշումները:	7.1.1. Բացատրում է. «Ես ուզեցի բոլոր կոները դնել այս արկղի մեջ, որովհետև դրանք այդպես ավելի քիչ տեղ են զբաղեցնում պահարանում»:
	7.2. Իր բառերով կարողանում է պատմել, թե ինչպես է հասկացել տվյալ իրավիճակը:	7.2.1. Պատմում է. «Հասմիկը և Աննան ուզում էին տիկնիկով խաղալ, բայց իրար չզիջեցին: Այդ պատճառով էլ վեճ առաջացավ»:

Դիտարկում, հետազոտում		
Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
8. Երեխան ուսումնասիրում է իրեն շրջապատող բնությունը և կենդանական աշխարհը:	8.1. Նկարագրում է առարկաների հատկությունները:	8.1.1. «Այս գիրքը մեծ է ու հաստ» կամ «Սա մետաղյա աթոռ է»:
	8.2. Նկատում է շրջապատում տեղի ունեցող փոփոխությունները (ժամանակը, ջերմաստիճանը, տարվա եղանակը) և դրանց պատճառա-հետևանքային կապերը, հաջորդականությունը:	8.2.1. Զբոսանքի ժամանակ ասում է. «Բակում ձյունը հալվել է, որովհետև այսօր արևոտ եղանակ է և ավելի տաք է, քան երեկ»: «Թռչունները վերադարձել են, որովհետև գարուն է, և նրանց համար արդեն կեր կա»:
	8.3. Ուսումնասիրությունների ընթացքում հարցեր է տալիս՝ իրեն հետաքրքրող խնդիրը պարզելու համար:	8.3.1. «Եթե բույսը մութ սենյակում դնենք, ի՞նչ կլինի»:

Դիտարկում, հետազոտում

Չափորոշիչ	Ցուցիչ	Օրինակ
8. Երեխան ուսումնասիրում է իրեն շրջապատող բնությունը և կենդանական աշխարհը:	8.4. Տեղեկություններ է հավաքում բնության երևույթների վերաբերյալ:	8.4.1. Հարցնում է հրաբխի մասին. «Ինչպե՞ս է սարի մեջ առաջանում կրակը»:
	8.5. Տալիս է բացատրություններ բնության երևույթների վերաբերյալ:	8.5.1. «Կայծակ է լինում, որովհետև ամպերը իրար են բախվում»:
	8.6. Դիտարկում և նկարագրում է կենդանի էակների հատկանիշները (արտաքին տեսքը, սնունդը, ապրելակերպը):	8.6.1. «Արծիվը թռչուն է, ունի սուր կտուց, մեծ թևեր և պոչ: Սնվում է մկներով, նապաստակներով, փոքր թռչուններով, օձերով: Ապրում է սարերում»:
	8.7. Բացատրում է կենդանիների, բույսերի և միջավայրի միջև եղած պարզ փոխահարաբերությունները:	8.7.1. «Ուշ աշնանը չվող թռչունները չվում են տաք երկրներ: Իսկ ձմեռող թռչուններին պետք է կերակրել»:
	8.8. Հոգ է տանում տնային կենդանիների և բույսերի մասին:	8.8.1. Ջրում է խմբասենյակում տեղադրված բույսերը, բակի ծառերը, ծաղիկները և այլն: Խնամում է ընտանի կենդանիներին:
9. Երեխան տեղեկություններ է հավաքում դիտարկումների, ուսումնասիրությունների և հետազոտությունների միջոցով:	9.1. Համեմատում և հակադրում է առարկաներն ու երևույթները:	9.1.1. « Իմ մեծ քույրիկը հանգիստ է և ժպտերես, իսկ փոքր եղբայրս աղմկոտ է և լացկան»:
	9.2. Կանխատեսումներ է անում, թե ինչ կարող է կատարվել:	9.2.1. «Եթե այս ձյուղերը դնենք ջրի մեջ և տեղադրենք խմբասենյակում՝ նրանց բողբոջները բակի ծառերի բողբոջներից ավելի արագ կբացվեն»:
	9.3. Օգտագործում է իր 5 զգայարանները և տարբեր գործիքներ՝ դիտարկելու, տեղեկություններ հավաքելու և կանխատեսումներ կատարելու նպատակով:	9.3.1. Ծառի ձյուղը ուսումնասիրելիս շոշափում է կեղևը, ուշադիր զննում է, օգտագործում խոշորացույց, որից հետո կատարում է եզրահանգումներ. «Եթե այս ձյուղը դնենք ջրի մեջ, ապա այն կբողբոջի»:
	9.4. Կատարում է պարզ փորձեր և դրանցից եզրակացություններ անում:	9.4.1. Ջրի մեջ լողացող թղթե նավակների վրա դնում է մանր առարկաներ և ասում. «Տեսնենք, թե որ նավակը ավելի շուտ կսուզվի»: